Ն.ԲԱՐԱԹՅԱՆ, Ե.ԵՐԶՆԿՅԱՆ, Ա.ԼԱԶԱՐՅԱՆ,
Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Ի.ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

Հայերեն-անգլերեն բառարան

շուրջ 50 000 բառ և բառակապակցություն

Ծրագրի ընդհանուր ղեկավար
և գլխավոր խմբագիր՝
Ն. Բարաթյան

ԵՐԵՎԱՆ • 2009

N.BARATYAN, Y.YERZNKYAN, A.LAZARYAN,
N.HAMBARTSUMYAN, I.TER-POGHOSYAN

Armenian-English Dictionary

about 50 000 words and word combinations

Project Manager
Editor-in-Chief
N.Baratyan



YEREVAN • 2009

ԴՏՀ 801.3 = 919.81 = 20
ԳՄԴ 81.2Հ – 4 + 81.2 Անգլ – 4

Բ 340 Բարաթյան Ն., Երզնկյան Ե., Լազարյան Ա., Համբարձումյան Ն., Տեր-Պողոսյան Ի.: Հայերեն-անգլերեն բառարան. – Եր.: Մակմիլան-Արմենիա, 2009. – 592 էջ

Խմբագիրներ՝ **Լ. Հովսեփյան**
Կ. Ուլբրիխտ

Երկրորդ՝ բարեփոխված հրատարակությունը

Բառարանը նախատեսված է անգլերեն լեզուն ուսումնասիրողների, լեզուն դասավանդողների, հայերենից անգլերեն թարգմանությամբ զբաղվող մասնագետների, ինչպես նաև անգլերենով հետաքրքրվող անձանց ամենալայն շրջանակների համար:

ԳՄԴ 81.2Հ – 4 + 81.2 Անգլ

ԵՊՀ Գրադարան



ISBN 99941-46-14-9

© Բարաթյան Ն. և ուրիշ, 2006թ.
© Մակմիլան-Արմենիա, 2006թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի անկախացումից հետո աննախընթաց կերպով ընդլայնված միջազգային կապերի պայմաններում անհամեմատ մեծացել է անգլերենը որպես միջազգային հաղորդակցման լեզու ուսումնասիրողների թիվը, աճել է անգլերենի դասագրքերի, ձեռնարկների, ինքնուսույցների և բառարանների պահանջարկը: Սակայն մինչև օրս հրապարակի վրա չկա համեմատաբար ծավալուն հայերեն-անգլերեն բառարան, որի անհրաժեշտությունը այսօր շատ է զգացվում: Ներկա բառարանը այդ պակասը լրացնելու առաջին փորձն է: Այն նախաձեռնվել է 1985թ.-ին Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական ամբիոնի կողմից՝ որպես պլանային աշխատանք:

Բառարանը պարունակում է շուրջ 50 000 բառ և բառակապակցություն՝ ընտրված բառերի գործածման հաճախականության հիման վրա: Նրա կազմության սկզբունքները հիմնականում համապատասխանում են հայ դասական բառարանագրության ավանդույթներին, կիրառված են ժամանակակից բառարանագրության սկզբունքները: Բառարանը փորձաքննություն է անցել Հարվարդի համալսարանի (ԱՄՆ) սլավոնագիտության և հայագիտության կենտրոններում, Գիլֆորդի համալսարանում (Մեծ Բրիտանիա) և արժանացել հավանության:

Բառարանը կազմել են Երևանի պետական համալսարանի դասախոսներ՝ դոցենտ Ն.Բարաթյանը, (Ա,Բ,Գ,Դ,Ե,Զ,Է,Ը,Թ,Հ, Ձ,Ղ,Ճ,Մ,Յ,Ն,Շ,Ո,Չ,Պ,Ջ,Ռ,Ս), բ.գ.թ., դոցենտ Ե.Երզնկյանը (Ժ, Ի, Լ), բ.գ.թ., դոցենտ Ի.Տեր-Պողոսյանը (Խ,Ծ), ավագ դասախոս Ն.Համբարձումյանը (Կ,Հ), ավագ դասախոս Ա.Լազարյանը (Վ,Տ,Ր, Ց,ՈՒ,Փ,Ք,Օ,Ֆ):

Բառարանն արտացոլում է ժամանակակից գրական արևելահայերենի արդի վիճակը, թեև բառարանի ծավալին համապատասխան անհրաժեշտ չափով ընդգրկված են նաև պատմաբառեր, արևմտահայերենին և խոսակցական լեզվին հատուկ իրողություններ՝ համապատասխան ոճական նշումներով:

Բառահոդվածը կազմված է հայերեն գլխաբառից, քերականական և ոճական նշումներից, անգլերեն թարգմանությունից, տրվում են տվյալ գլխաբառով կազմված ազատ և կայուն բառակապակցություններն ու դրանց թարգմանությունները: Ի տարբերություն այլ բառարաններում ընդունված սկզբունքի՝ իմաստները չեն համարակալվում, այլ պարզաբանվում են փակագծերում տրված հոմանիշներով կամ նրանց գործածության ոլորտի մասին նշումներով: Համարները դրվում են միայն այն դեպքում, երբ տվյալ բառը միաժամանակ ունի տարբեր խոսքիմասային իմաստներ:

Քերականական նշումները հասցված են նվազագույնի՝ ընթերցողների լայն շրջանակներին ավելի մատչելի լինելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում տրվում է բառի ամերիկյան տարբերակը կամ նշվում է օտարաբանությունների ծագումը: Գլխաբառով կազմված բառակապակցությունները բառահոդվածում առանձնացվում են սպիտակ շեղանկյունով: Բառարանում ըստ հնարավորին լայն տեղ է տրված բառազուգորդումներին, արտացոլված է հայերենի հարուստ դարձվածաբանությունը, որպես իմաստներ լուսաբանող օրինակներ կամ տվյալ բառի հատուկ կիրառություններ բերվում են առածներ, ասացվածքներ և այլն: Ըստ հնարավորին անգլերեն թարգմանություններում պահպանված է դրանց դարձվածային արժեքը կամ բերված են իմաստով մոտ համարժեքներ՝ հատուկ նշումով:

Բազմաթիվ գիտական տերմիններից ընտրված են միայն համընդհանուր տարածում գտած և հաճախակի գործածվող գլխաբառերը, մասամբ արտացոլված են նաև վերջին տասնամյակում ստեղծված առավել հաճախական նորակազմությունները:

Բառարանը նախատեսված է անգլերեն լեզուն ուսումնասիրողների, լեզուն դասավանդողների, հայերենից անգլերեն թարգմանությամբ զբաղվող մասնագետների, ինչպես նաև անգլերենով հետաքրքրվող անձանց ամենալայն շրջանակների համար:

Որպես նման բնույթի ու կառուցվածքի բառարանի առաջին փորձ՝ ներկայացվող աշխատանքն անշուշտ կարող է ունենալ թերություններ: Հեղինակները սիրով և շնորհակալությամբ կընդունեն ամեն կարգի օգտակար դիտողություն՝ հետագա հնարավոր վերահրատարակություններում բառարանը բարելավելու նպատակով:

Հեղինակները իրենց խորին շնորհակալությունն են հայտնում բառարանի խմբագիրներ Լիանա Հովսեփյանին և Կառլ Ուլբրիխտին:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում բ.գ.թ., դոցենտ վաղամեռիկ Էմմա Մկրտչյանին, որի խորհուրդները զգալիորեն նպաստեցին սույն աշխատության իրականացմանը:

Հեղինակներ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոճական նշումներ

ամ. – ամերիկյան
անարգ. – անարգական
անսնք. – անասնաբուժական
աշխարգ. – աշխարհագրական
առասպ. – առասպելական
ավ. – ավիացիա
աստղ. – աստղագիտական
աստղբ. – աստղաբաշխական
աստվծշ. – աստվածաշնչյան
ասցվ. – ասացվածք
արևմտհ. – արևմտահայերեն
արհմ. – արհամարհական
արվ. – արվեստագիտական
բժշկ. – բժշկական
բնստ. – բանաստեղծական
բսբ. – բուսաբանական
բրբ. – բարբառային
գերմ. – գերմաներեն
գիտ. – գիտական
գռհկ. – գռեհկաբանություն
գտնտ. – գյուղատնտեսական
գրկ. – գրական
գրկգ. – գրականագիտական
գրք. – գրքային
դիցբ. – դիցաբանական
դվնգ. – դիվանագիտական
դրծվ. – դարձվածք
եկեղ. – եկեղեցական
երաժշ. – երաժշտական
երկաթղ. – երկաթուղային
երկրբ. – երկրաբանական
երկրչ. – երկրաչափական
զինվ. – զինվորական
էլ. – էլեկտրականություն
թատեր. – թատերական
թղթխ. – թղթախաղ
իտալ. – իտալերեն
իրավ. – իրավաբանական
լեզվ. – լեզվաբանական
լսնկ. – լուսանկարչական
խհր. – խոհարարական
խորհ. – խորհրդային
խսկց. – խոսակցական
ծաղր. – ծաղրական
ծով. – ծովային
կենդ. – կենդանաբանական
կենս. – կենսաբանական
կզմխս. – կազմախոսական
կտկ. – կատակային
կրճ. – կրճատ
կրոն. – կրոնական
հեգմ. – հեգնական
հեքթ. – հեքիաթային
հզվ. – հազվադեպ
հտկ. – հատկապես
հյհ. – հայհոյական
հյուր. – հյուրանոցային
հնց. – հնացած
հնք. – հանքային
հշվպ. – հաշվապահական
ճարտ. – ճարտարապետական
մաթ. – մաթեմատիկական
մարզ. – մարզական
մեք. – մեքենաշինական
մսնգ. – մասնագիտական
նկրչ. – նկարչական
նվզ. – նվազական
շին. – շինարարական
շխմ. – շախմատային
որսրդ. – որսորդական
պշտ. – պաշտոնական
պտմ. – պատմական
ռադ. – ռադիո
ռզմ. – ռազմական
սնոտ. – սնոտիապաշտական

վերամբ. – վերամբարձ
վիրավ. – վիրավորական
վրբժ. – վիրաբուժական
տեխ. – տեխնիկական
տողչփ. – տաղաչափական
տնտ. – տնտեսական
տպագր. – տպագրական
տրմբ. – տրամաբանական
տքստլ. – տեքստիլ
փիլ. – փիլիսոփայական
փխբ. – փոխաբերական
փողշ. – փաղաքշական
քեր. – քերականական
քիմ. – քիմիական
քղք. – քաղաքական
և – և այլն
ֆիզ. – ֆիզիկական
ֆիզիոլ. – ֆիզիոլոգիական
ֆին. – ֆինանսական
ֆր. – ֆրանսերեն

Քերականական նշումներ

ա. – ածական
անհշվ. – անհաշվելի
ար. – արական
բ. – բայ
բացաս. – բացասական
գ. – գոյական
դ. – դերանուն
թ. – թվական
ժխտ. – ժխտական
իգ. – իգական
կ. – կապ
հաստ. – հաստատական
հարաբ. – հարաբերական
հարց. – հարցական
հշվ. – հաշվելի
հոգն. – հոգնակի
հպվ. – հապավում
հվք. – հավաքական
հր. եղ. – հրամայական եղանակ
ձ. – ձայնարկություն
մ. – մակբայ
միջնկ. – միջանկյալ բառ
նախ. – նախադասություն
շ. – շաղկապ
վ. – վերաբերական

Ա

Ա, ա the first letter of the Armenian alphabet; (numerical meaning) one, first; ◊ **հատոր ~** the first volume; **~ -ն Բ-ից ջոկել** be literate.

Ա՜, ձ. (զարմանք, ցավ, սարսափ) Ah! Oh! ◊ **~ բարև** Ah, hello! **~ լավ** Oh, well! Oh well, come what may.

ԱԲԲԱ, գ. *եկեղ.* abba, abbot.

ԱԲԲԱՀԱՅՐ, գ. *եկեղ.* abbot, prior.

ԱԲԲԱՅԱԿԱՆ, ա. *եկեղ.* abbatial.

ԱԲԲԱՅԱՐԱՆ, գ. *եկեղ.* abbey, abbacy, friory, priory.

ԱԲԲԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. *եկեղ.* abbacy, abbotship.

ԱԲԵԹ, գ. tinder, touchwood; ◊ **կայծքար և ~** flint and touchwood.

ԱԲԵՂԱ, գ. *եկեղ.* monk, friar, lay brother; *փիլ.* (ճգնավոր, մենակյաց) ascetic.

ԱԲԵՂԱՅԱԿԱՆ, ա. *եկեղ.* monastic, monachal, monkish; *փիլ.* ascetic; ◊ **~ ուխտ** monastic order; **~ զգեստ** monastic clothes.

ԱԲԵՂԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. monasticism, monachism; (վիճակ) monkhood; *հվք.* regular/black clergy.

ԱԲԽԱԶ, գ. Abkhazian.

ԱԲԽԱԶԱԿԱՆ, ա. Abkhazian.

ԱԲԽԱԶԵՐԵՆ, գ., ա., մ. Abkhazian, the Abkhazian language.

ԱԲՈՆԵՄԵՆՏ, գ. subscription (for); ◊ **թատրոնի՝ օպերայի ևն ~** season ticket.

ԱԲՈՆԵՄԵՆՏԱՅԻՆ, ա. subscription.

ԱԲՈՆԵՆՏ, *տես* ԲԱԺԱՆՈՐԴ:

ԱԲՍՈԼՅՈՒՏ, գ. *փիլ.* the absolute.

ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄ, գ. *քղք.* absolutism.

ԱԲՍՏՐԱԿՏ, *տես* ՎԵՐԱՑԱԿԱՆ:

ԱԲՍՏՐԱԿՑԻԱ, *տես* ՎԵՐԱՑԱՐԿՈՒՄ:

ԱԲՍՏՐԱՀԵԼ, *տես* ՎԵՐԱՑԱՐԿԵԼ:

ԱԲՍՏՐԱՀՎԵԼ, *տես* ՎԵՐԱՑԱՐԿՎԵԼ:

ԱԲՍՏՐԱՀՈՒՄ, *տես* ՎԵՐԱՑԱՐԿՈՒՄ:

ԱԲՍՈՒՐԴ, 1. գ. absurdity; (անհեթեթություն) ineptitude; 2. ա. absurd; (անհեթեթ) inept, preposterous; ◊ **~ի հասցնել** carry to an absurdity.

ԱԳԱՀ, ա. (ընչաքաղց, ընչամոլ) avid (for), greedy (for), grasping, covetous; (անկուշտ) insatiable, gluttonous; (անհագ) avaricious.

ԱԳԱՀԱԲԱՐ, **ԱԳԱՀՈՐԵՆ** } մ. greedily, avidly, avariciously, insatiably; ◊ **~ ուտել՝ խժռել** eat greedily; gobble; **~ լսել** be all ears; **~ նայել որևէ մեկին** devour sb with one'seyes.

ԱԳԱՀԱՆԱԼ, բ. become greedy/avaricious.

ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ, գ. greediness; (անկշտություն) avidity; (կծծիություն) avarice; (ընչաքաղցություն) covetousness; ◊ *խսկց.* **~ անել** be greedy.

ԱԳԱՍ[1], ա. (անպոչ) dock-tailed, bob-tailed; (կարճ) cropped, curtailed; *փիլ.* (խղճուկ) scanty.

ԱԳԱՍ[2], գ. *հնք.* agate.

ԱԳԱՏԵ, **ԱԳԱՏՅԱ** } ա. *հնք.* agate.

ԱԳԱՐԱԿ, գ. *գյուղ.* farm, farmstead, ranch, plantation; ◊ **կաթի ~** dairy (farm); **խոշոր եղջերավոր անասունների ~** cattle-breeding farm.

ԱԳԱՐԱԿԱՅԻՆ, ա. (ֆերմերային) farmer, farmer's.

ԱԳԱՐԱԿԱՏԵՐ, գ. farmer, rancher.

ԱԳԱՐԱԿԱՏՈՒՆ, գ. farmhouse, ranch.

ԱԳԵՎԱՋ, գ. *կենդ.* kangaroo.

ԱԳԵՆՏ, *տես* ԳՈՐԾԱԿԱԼ:

ԱԳԵՆՏՈՒԹՅԱՆ, ա. secret-service; ◊ **~ տվյալներ** intelligence.

ԱԳԻՏԱՏՈՐ, գ. propagandist, agitator; (թեկնածուի օգտին գործող անձ) canvasser.

ԱԳԻՏԱՑԻԱ, գ. agitation, propaganda; ◊ **նախընտրական ~** election campaign.

ԱԳԻՏԱՑԻՈՆ, ա. agitation, propaganda.

ԱԳՆՈՍՏԻՑԻԶՄ, գ. *փիլ.* agnosticism.

ԱԳՌԱՎ, գ. *կենդ.* crow; *բրբխ.* spade; ◊ **սև ~** jackdaw, daw; **Նոյի ~** Noah's raven, evader, shirker; **~ի պես կռռալ** croak, caw.

ԱԳՌԱՎԱՅԻՆ, ա. crow, ravenous; *գրք.* corvine.

ԱԳՐԱՐԱՅԻՆ, ա. agrarian; ◊ **~ ճգնաժամ** agrarian crisis; **~ ռեֆորմ** agrarian/land reform.

ԱԳՐԵԳԱՏ, գ. aggregate, aggregation; *տեխ.* unit, assembly.

ԱԳՐԵՍԻԱ, գ. aggression.

ԱԳՐԵՍԻՎ, ա. aggressive; (մարտական) belligerent; ◊ **~ պլաններ** aggressive designs.

ԱԳՐԵՍՈՐ, գ. aggressor.

ԱԳՐՈՏԵԽՆԻԿ, գ. agricultural technician, agrotechnician.

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱ, գ. agrotechnics.

ԱԳՐՈՔԻՄԻԱ, գ. agricultural chemistry.

ԱԳՈՒՅՑ, գ. hoop, groove; *տեխ.* (մուֆտա) sleeve; *տեխ.* (կցորդիչ) coupling; (սեղմիչ) clutch; ◊ **տակառի վրա ~ անցկացնել** hoop a cask, bind a cask with hoops.

ԱԳՈՒՌ, գ. *տես* ԱՂՅՈՒՍ, *բրբխ.* diamonds; ◊ **~ի մեկնունց** the ace of diamonds; **խաղը սկսել ~ից** lead diamonds.

ԱԳՈՒՑԵԼ, p. fit/set in; (պատել, շրջապատել) encase, put (into, in); (հավաքել) put together; ◊ **թանկարժեք քարը** ~ mount a gem; **փեղկը պատուհանին** ~ frame.

ԱԳԱՄԱԾԵՆԻ, գ. *բսբ.* banana tree.

ԱԳԱՄԱԾՈՒՋ, գ. banana (fig).

ԱԳԱՄԱԽՆՁՈՐ, գ. *կմխս.* Adam's apple.

ԱԳԱՄԱՆԴ, գ. diamond, brilliant; ◊ **կեղծ** ~ sham diamond; **չհղկված** ~ rough diamond; ~**ներով զարդարված՝ պատված** set with diamonds, diamond-encrusted.

ԱԳԱՄԱՆԴԱՃՈՂ, ա. brilliant.

ԱԳԱՄԱՆԴԵ, ա. diamond.

ԱԳԱՄԱՆԴԵՂԵՆ, գ. jewellery.

ԱԳԱՄԱՆԴՅԱ, *տե՛ս* ԱԳԱՄԱՆԴԵ:

ԱԳՄՆԻՍՏՐԱՏՈՐ, գ. administrator; *բաուեր.* business manager.

ԱԳՄՆԻՍՏՐԱՑԻԱ, գ. administration; *հյուր.*, *բաուեր.* management.

ԱԳՐԲԵՋԱՆԱԿԱՆ, ա, Azerbaijan.

ԱԳՐԲԵՋԱՆԵՐԵՆ, գ., ա., մ. Azerbaijani, Azeri.

ԱԳՐԲԵՋԱՆՑԻ, գ. Azerbaijanian, Azeri.

ԱԳՐԲԵՋԱՆՈՒՀԻ, գ. Azerbaijanian, Azeri.

ԱԵՐԱԿՈՒՄԲ, գ. flying club.

ԱԵՐԱԴԻՆԱՄԻԿԱ, գ. aerodynamics.

ԱԵՐԱԴՊՐՈՑ, գ. flying school.

ԱԵՐԱՆԿԱՐ, գ. aerial photo (graph).

ԱԵՐԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, գ. aerial/air photography.

ԱԵՐՈՍՏԱՏԻԿԱ, գ. *aerostatics.*

ԱԶԱՏ, ա. free; (անկախ) independent; (ազատության մեջ) at large; (տարածության մասին) spacious; (չզբաղեցրած) vacant, unoccupied; (անբռնազբոսիկ) easy, free and easy; *քիմ.* uncombined; ◊ ~ **առևտուր** free trade; ~ **արձակել** set free, release; ~ **ոտանավոր** blank verse; ~ **թարգմանություն** loose/free translation; ~ **ժամանակ** spare/free time, leisure; ~ **խոսել՝ կարդալ** (որևէ լեզվով) speak/read fluently; ~ **հագուստ** loose/loosefitting dress/coat/outfit; ~ **մասնագիտություն** free-lance; ~ **մասնագիտության տեր մարդ** professional man; ~ **մուտք** free access; ~ **շարժուձև** easy manners; ~ **շունչ քաշել** breathe freely; ~ **ոճ** free style; *մարզ.* ~ **վարժություններ** free exercises; ~ **վարքագիծ** loose behaviour, frivolous; ~ **ունկնդիր** extern, outsider; ~ **օր** day off; ~ **փող** spare cash, ready money; ~ **քաղաքականություն** independent policy; **հարկերից պարտականությունից** ~ exempt from; **խոչընդոտներից՝ արգելքներից** ~ open; **որևէ բանից** ~ free from; **ճանապարհն** ~ է the way is clear.

ԱԶԱՏԱԳԻՐ, գ. *իրավ.* (պարտավորությունից) quittance.

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ, ա. liberating, liberatory, emancipatory; ◊ ~ **առաքելություն** liberating mission; ~ **շարժում** liberating/emancipation movement; ~ **պատերազմ** war of liberation.

ԱԶԱՏԱԳՐԵԼ, p. liberate, set at liberty; *գրք.* emancipate; ◊ **ժողովուրդը** ~ liberate the people; ~ **կանանց** emancipate women.

ԱԶԱՏԱԳՐԻՉ, գ. liberator, rescuer, deliverer; (փրկիչ) saviour.

ԱԶԱՏԱԳՐՎԵԼ, p. get freedom/liberty, become free.

ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, **ԱԶԱՏԱԳՐՈՒՄ** } գ. liberation, emancipation, release; ◊ **կանանց** ~ women's liberation.

ԱԶԱՏԱԶՐԿԵԼ, p. deprive of freedom; (կալանավորել) imprison, put into prison; (զրկել քաղաքացիական իրավունքներից) disenfranchise, disfranchise.

ԱԶԱՏԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, **ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ** } գ. deprivation of freedom/liberty; (կալանավորում) imprisonment; ◊ *իրավ.* **ցմահ** ~ life imprisonment/sentence.

ԱԶԱՏԱԶՈՒՐԿ, ա. deprived; (կալանավոր) imprisoned; (իրավազուրկ) disfranchised, disenfranchised; (ստրկացված, ստրուկ) enslaved, enthralled.

ԱԶԱՏԱԽՈՍ, ա. free speaking, straightforward, speaking frankly/openly.

ԱԶԱՏԱԿԱՄ, 1. ա. voluntary, free-will; 2. մ. voluntarily, of one's own accord/free will.

ԱԶԱՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ, գ. voluntariness, free will.

ԱԶԱՏԱՄՏ, 1. ա. free thinking; 2. գ. (անձ) free-thinker, liberal.

ԱԶԱՏԱՄՏՈՒԹՅՈՒՆ, գ. free-thinking, liberalism.

ԱԶԱՏԱՇՈՒՆՉ, **ԱԶԱՏԱՍԵՐ** } ա. freedom-loving; ◊ ~ **ժողովուրդներ** freedom-loving nations/peoples.

ԱԶԱՏԱՄԻՏԱԿԱՆ, ա. freedom-loving, liberal; ◊ ~ **ճառեր** liberal speeches.

ԱԶԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. love of freedom.

ԱԶԱՏԱՏԵՆՉ, ա. freedom-loving, longing for freedom.

ԱԶԱՏԱՐԱՐ, 1. ա. liberating, liberatory; 2. գ. (անձ) liberator, deliverer; (փրկիչ) saviour, rescuer.

ԱԶԱՏԵԼ, p. free, set free, liberate, set at liberty; (փրկել) save, rescue, redeem; (դատարկել) vacate; (հեռացնել) dismiss, fire; *բժշկ.* (ծնունդ ընդունել) deliver; *իրավ.* discharge, exempt, release; ◊ **բանակից** ~ (հիվանդության պատճառով) invalid, grant a medical discharge, transfer to the reserve; **գլուխն** ~ escape; **կալանավորին** ~ dismiss/discharge a prisoner, release from prison; **պաշտոնից** ~ relieve sb of his post; **պատասխանատվությունից** ~ exonerate; **պարտքերից՝ պարտավորություններից** ~ exempt from

debts/release from duties; **օձիքն ~** rid oneself (off), get off cheap.

ԱԶԱՏՈՐԵՆ, մ. freely, easily, with ease; (սահուն կերպով) fluently; (անկաշկանդ) without restraint.

ԱԶԱՏՎԵԼ, բ. get/become free, make oneself free, get off with; (թոթափել) throw/shake off; *խսկց.* (ծննդաբերել) be delivered of, give birth (to); *խսկց.* (պրծնել, դուրս պրծնել) get rid of, rid oneself of; *խսկց.* (գլուխը պրծացնել) escape; ◊ **աշխատանքից ~** be discharged/dismissed, *խսկց.* be fired; **բանակից ~** be transferred to the reserve; **հապիվ ~** have a narrow escape; **սովորությունից ~** get out of a habit.

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. freedom, liberty; (փրկություն) rescue, saving, deliverance (from); (անկաշկանդություն) ease; ◊ **խղճի ~** liberty of conscience, religious liberty; **խոսքի՝ մամուլի ~** freedom of speech/of the press; **կամքի ~** free will; **քաղաքացիական ~ներ** civil liberties; **գործողությունների ~ տալ** give a free hand/carte blanche; **լրիվ ~ տալ** give free rein (to).

ԱԶԱՏՈՒՄ, գ. liberation; (փրկություն) rescue, escape; *գրք.* salvation.

ԱԶԱՏՔԵՂ, գ. *բսբ.* parsley.

ԱԶԲԵՍ, գ. asbestos.

ԱԶԲԵՍՏԱՅԻՆ, ա. asbestos, asbestine.

ԱԶԳ, գ. nation, people; (ազգություն) nationality; ◊ **ազատասեր ~եր** freedom-loving nations; **ճնշված ~եր** oppressed nations; **միավորված ~եր** united nations; **Միավորված ~երի կազմակերպություն (ՄԱԿ)** the United Nations (UN); **~երի ինքնորոշում** self-determination of nations; **ի՞նչ ~ից է** what is his nationality?; *պտմ.* **~երի լիգա** the League of Nations; **~ ու բարեկամ** relatives, relations, kindred, kinsfolk; **~ ու տակ** kith and kin.

ԱԶԳԱԲԱՆ, գ. genealogist.

ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ, ա. genealogical; ◊ **~ ծառ** genealogical/family tree; **~ աղյուսակ** genealogical/pedigree table.

ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, գ. population; (բնակիչները) inhabitants.

ԱԶԳԱԳՐԱԳԵՏ, գ. ethnographer.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ, ա. ethnographic(al).

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. ethnography.

ԱԶԳԱՊԱՎ, **ԱԶԳԱՊԻՐՈՒԹ** } ա. treacherous, traitorous, perfidious.

ԱԶԳԱԿԱՆ, գ. relation, relative, kinsman, kin, kindred, kinsfolk; ◊ **ամենամոտ ~ները** the next of kin; **հեռու ~** distant relation, remote relative; **մոտ՝ մերձավոր ~** near relation; **նա ինձ ~ չէ** he is no connection of mine; **ուղիղ գծով ~** ascendant; (մոր կողմից) cognate; (հոր կողմից) agnate.

ԱԶԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. relationship, kindred, kinship; (ազգակցություն) parentage; (արյունակցություն) blood, consanguinity.

ԱԶԳԱԿԱՆՈՒՀԻ, գ. kinswoman.

ԱԶԳԱԿԻՑ, 1. ա. related, kindred, allied (to); 2. գ. (բարեկամ) kinsman, relation, relative, kin.

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ, ա. related/akin to; *փխբ.* (ջերմ) warm, hearty; ◊ **~ կապեր** ties of relationship/blood; (մոր կողմից) cognate; (հոր կողմից) agnate; **~ կապերով կապված** related in kinship.

ԱԶԳԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. affinity, parentage; (արյունակցություն) consanguinity, blood-relationship; *փխբ.* (մերձավորություն) alliance, propinquity; ◊ **խառնածին ~** half-blood; **~բյան գիծ** (line of) parentage; **~ունենալ** be related (to).

ԱԶԳԱՀԱԼԱԾ, ա. ethnically oppressived; ◊ **~ քաղաքականություն** policy of ethnic oppression.

ԱԶԳԱՄԵՐԺ, ա. repudiating/renouncing one's people/nation.

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ, ա. interracial; *պտմ.* (ցույց ազգի ներսում) intestine, internecine; ◊ **~ ընդհարումներ** interracial impact/clash, (armed) conflict; **~ պատերազմ** civil/internecine/dissension/war.

ԱԶԳԱՅԻՆ, ա. national, ethnic; ◊ **~ ազատագրական շարժում** national liberation movement; **~ ժողով** national assembly; **~ հարց** national problem; **~ հիմն** national anthem; **~ ոգի** national spirit; **~ փոքրամասնություն** national/ethnic minority; **~ քաղաքականություն** national policy.

ԱԶԳԱՅՆԱՄՈԼ, գ. nationalist, chauvinist; jingoist.

ԱԶԳԱՅՆԱՄՈԼԱԿԱՆ, ա. chauvinistic, jingoist.

ԱԶԳԱՅՆԱԿԱՆ, ա., գ. nationalistic, nationalist.

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. nationalism.

ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. chauvinism; jingoism.

ԱԶԳԱՅՆԱՑՆԵԼ, բ. nationalize.

ԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ, գ. nationalization.

ԱԶԳԱՆՎԱՆԱԿԻՑ, ա., գ. (person) bearing the same surname.

ԱԶԳԱՆՎԵՐ, ա. devoted to one's nation; ◊ **~ գործ** deed devoted to the well-being of one's people, deed useful/beneficial to the nation.

ԱԶԳԱՆՈՒՆ, գ. surname, name, family/last name; ◊ **օրիորդական ~** maiden name; **ի՞նչ է ձեր ~ը** what is your (sur)name/last name?; **~ը ցուցակի մեջ մտցնել** ցուցակագրել enrol(l).

ԱԶԳԱՍԵՐ, գ. patriot; ա. patriotic.

ԱԶԳԱՍԻՐԱԲԱՐ, մ. patriotically.

ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ, ա. patriotic.
ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. patriotism; ◊ **տեղային** ~ parochialism, localism.
ԱԶԳԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. genocide, extermination.
ԱԶԳՈՒԹՅՈՒՆ, գ. nationality, nation, people; ◊ **ի՞նչ ~թյան է պատկանում** what is his nationality?
ԱԶԳՈՐԵՆ } մ. nationally.
ԱԶԳՈՎԻՆ }
ԱԶԳՈՒԻՐԱՑ, ա. (դավաճան) recreant, betrayer; (ուրացող) apostate.
ԱԶԳՈՒԻՐԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. recreancy, betrayal; (ուխտադրժություն) apostasy, perfidy.
ԱԶԳՕԳՈՒՏ, ա. useful/beneficial to the nation.
ԱԶԴ, գ. notice, announcement, notification; (հայտագիր) summons, prospectus; (գովազդ) advertisment; *խսկց.* advert, ad; (լուր) news, tidings; (ծանուցում) information, notification.
ԱԶԴԱԳԻՐ, գ. bill, poster, placard; (ծանուցագիր, *հսկ.* դատական) summons; ◊ **թատերական** ~ play bill.
ԱԶԴԱԳՐԵԼ, բ. notify, summon, post up.
ԱԶԴԱԳՐՈՂ, գ. bill-sticker.
ԱԶԴԱԹԵՐԹ, գ. bill, placard, poster; ◊ **թատերական** ~ play-bill.
ԱԶԴԱԿ, գ. impulse; (շարժառիթ) incitement; (խթան) impetus, spur; (դրդիչ) incentive, stimulus; (դրդապատճառ) goad; *ֆիզ.* impulse; ◊ ~ **հանդիսանալ** spur, stimulate, be an incitement.
ԱԶԴԱՆՇԱՆ, գ. signal, alarm; ◊ **աղետի** ~ signal of distress, distress signal, SOS call/signal; *խսկց.* mayday; **լուսային** ~ light signal; (նավերի համար) flare; **հրդեհի** ~ fire-alarm; *ռզմ.* **շեփորի** ~ trumpet-call, bugle call; (ինքնաթիռների համար) **վայրէջքի** ~ landing signal; *խսկց.* **նավի մեկնելու** ~ **տալ** pipe away; **օդային տագնապի** ~ air-raid alarm.
ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ, ա. signal; ◊ ~ **դրոշ** signal flag; ~ **լապտեր** signal lantern; ~ **կայան** signal station/post; ~ **լրակ** signal light; ~ **խցիկ/տնակ** signal-box, signal-cabin.
ԱԶԴԱՆՇԵԼ, բ. signal (to), give a signal (to, of), sound the signal, semaphore; *փխբ.* (զգուշացնել) warn (against); (էլեկտրական սարքով) buzz.
ԱԶԴԱՆՇՈՒՄ, գ. signalling.
ԱԶԴԱՏԱԽՏԱԿ, գ. billboard, post.
ԱԶԴԱՐԱՐ, ի. ա. (լրատու, ծանուցող) heralding; (հայտարարող) announcing; 2. գ. (լրաբեր, բանբեր) herald, messenger; *փխբ.* (խոսափող) mouthpiece.
ԱԶԴԱՐԱՐԵԼ, բ. herald; (հայտարարել) announce, proclaim; (տեղեկացնել, ծանուցել) let know, inform, notify; ◊ **նոր դարաշրջանի սկիզբ** ~ usher in/herald/announce a new era.
ԱԶԴԱՐԱՐՈՒՄ, գ. monition, announcement; (զգուշացում) denunciation, warning; (հայտարարություն) announcement; (տեղեկացում, ծանուցում) notification.
ԱԶԴԵԼ, բ. influence (upon, over, with), have an influence (on, upon, over, with); (ներգործել) act (upon), work (on), have an effect (upon); (ազդեցություն գործել) exercise influence; (տպավորություն գործել) make an impression; (հուզել) touch/move/affect/impress (on); ◊ **ուժով** ~ use force; **նյարդերի վրա** ~ get on sb's nerves; **դեղը լավ է ~ում** the medicine is very efficacious/effective; **դեղն արդեն ~ում է** the medicine is working.
ԱԶԴԵՑԻԿ, ա. influential; (օգտակար) effective; (տպավորություն գործող) imposing; (տպավորիչ) impressive; (ներգործող) efficacious, effectual, effective; ◊ ~ **խոսք** weighty utterance; ~ **մարդ** a man of influence/weight.
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. influence (on, upon, over, with), effect; (տպավորություն) impression; (հեղինակություն) authority, ascendancy; (խթան, ազդակ) impact; ◊ **բարոյական** ~ ascendancy/influence (over); **ֆիզիկական** ~ coercion, force; **հանգստացնող** ~ **գործել** have a calming influence (on, upon, over), exert influence (on, upon, over); have a soothing effect; ~**թյան տակ ընկնել** come/fall under sb's influence; *իրավ.* ~**թյան շահարկում** undue influence; ~**թյան ոլորտ** sphere of influence; **դեղը լավ** ~ **է գործում** the medicine is very effective; **իր ~թյանը ենթարկել** subject to one's influence.
ԱԶԴԻՐ, գ. *կզմխս.* (մարդու) thigh, hip; (կենդանու) haunch, leg; (ուտելիք) ham, gammon, round.
ԱԶԴՐԱՅԻՆ, ա. femoral.
ԱԶԴՐՈՍԿՐ, գ. thigh-bone; *գիտ.* femur (pl. femora).
ԱԶԴՈՒ, ա. effective, efficacious; (տպավորիչ) impressive; (արտահայտիչ) emphatic; (վճռական) vehement; (ծանրակշիռ) weighty; ◊ ~ **խոսք** weighty utterance.
ԱԶՆԱՎՈՒՐ, գ. *հնց.* aristocrat, nobleman, noble.
ԱԶՆԻՎ, ա. honest, honest-minded; (արդար) fair; (շիտակ, անկեղծ) straightforward, upright, straight, square; (կարգին) decent; (մեծահոգի) noble; ◊ ~ **անուն** a good name; ~ **արարք** noble action/deed; *ֆիմ.* ~ **գազ** rare gas; ~ **գործարք** square bargain/deal; ~ **գործել** play fair/square, act squarely/fairly by one; ~ **զայրույթ վրդովմունք** righteous indignation; ~ **խոսք** on/upon my word/honour; ~ **խոսք**

տալ pledge one's word of honour; **~ խոսքի հիման վրա ազատ արձակել** liberate/free on parole; **~ մարդ** honest person/man; **~ մարդիկ** honest-minded people, people of integrity; *քիմ.* **~ մետաղներ** the noble/precious metals.

ԱԶՆՎԱԲԱՐ, մ. fair, honestly; (վեհանձնորեն) nobly, generously, genteely; (շիտակորեն) on the square.

ԱԶՆՎԱԲԱՐՈ, ա. honest, decent, fair, noble; (բարեկիրթ) well-mannered.

ԱԶՆՎԱԴԵՄ, ա. of good view/appearance; (գեղեցիկ) beautiful, handsome.

ԱԶՆՎԱԶԱՐՄ, ա. highborn, noble, of a noble family.

ԱԶՆՎԱԽՈՀ, ա. (բարեմիտ, բարեհոգի, բարեհամ) good-natured, benevolent; (պարզամիտ, միամիտ) simple-hearted, simple-minded, frank, naive.

ԱԶՆՎԱԿԱՆ, 1. գ. noble, nobleman, aristocrat; 2. ա. noble, patrician, aristocratic; (բարեկիրթ) genteel; ◊ **մանր ~** gentleman; **~ ծագում** of gentle birth; **~ դարձնել ~ի տիտղոս տալ** ennoble; **նա ~ է** he is noble; **նա մանր ~ է** he belongs to the gentry.

ԱԶՆՎԱԿԱՆԱԿԱՆ, ա. aristocratic, patrician, noble; ◊ **~ գոռոզություն** patrician arrogance; **~ կալվածք** manoral estate; **~ կոչում** noble rank.

ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. nobility, aristocracy; (բարձր դասերը, վերին խավը) upper classes, high life; (ընտրյալները) people of quality, the elite, *ֆր.*; (ազնվություն) nobility, nobleness; ◊ **մանր ~** gentry, gentle-folk.

ԱԶՆՎԱԿԱՆՈՒՀԻ, գ. lady, gentlewoman, aristocrat.

ԱԶՆՎԱՀՈԳԻ, գ. noble, genteel, gentle, gracious, fine.

ԱԶՆՎԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ, գ. nobleness, fineness, gentleness.

ԱԶՆՎԱՄՈՐԻ, գ. raspberry; ◊ **~րու թուփ** raspberry cane; **~ուտ** raspberry canes.

ԱԶՆՎԱՆԱԼ, բ. be ennobled/exalted; (տեսակը լավանալ, ազնվացեղ դառնալ) be improved, grow better, upgrade.

ԱԶՆՎԱԾՈՒՔ, ա. *հնց.* noble; ◊ **~ երիտասարդ** noble young man.

ԱԶՆՎԱՍԻՐՏ, ա. noble-hearted; (բարեսիրտ) good-natured; (ջերմ, բարի) genial, good-tempered; (մեղմ) benign.

ԱԶՆՎԱՏՈՀՄ(ԻԿ), ա. highborn, well-born, noble, of noble family, of blood.

ԱԶՆՎԱՏՈՅՈՒՆ, ա. of blood.

ԱԶՆՎԱՑՆԵԼ, բ. ennoble, exalt, (տեսակը լավացնել, ազնվացեղ դառնալ) upgrade, improve, make better, ameliorate.

ԱԶՆՎՈՐԵՆ, *տես* ԱԶՆՎԱԲԱՐ:

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ, գ. nobleness, honesty; (շիտակություն) integrity, rectitude; (անկաշառություն) probity; (պարկեշտություն) decency; ◊ **բնավորության ~** greatness; (դիմելու ձև) **Ձերդ ~** Your honour.

ԱԶՈՏ, գ. *քիմ.* nitrogen.

ԱԶՈՏԱԹԹՈՒ, գ. *քիմ.* nitric acid.

ԱԶՈՏԱԿԱՆ, **ԱԶՈՏԱՅԻՆ** } ա. *քիմ.* nitric, nitrogenous.

ԱԹԵԻՍՏ, գ. *փիլ.* atheist.

ԱԹԵԻՍՏԱԿԱՆ, ա. *փիլ.* atheistic(al).

ԱԹԼԱՍ, գ. satin.

ԱԹԼԱՍԵ, ա. satin, satiny.

ԱԹԼԵՏ, գ. athlete; *խսկց.* (ուժեղ մարդ) Hercules.

ԱԹԼԵՏԻԿԱ, գ. *մարզ.* athletics; ◊ **թեթև ~** track and field athletics; **ծանր ~** heavy athletics.

ԱԹԼԵՏԻԿ(ԱԿԱՆ), ա. athletic.

ԱԹՈՌ, գ. chair; *փխբ.* (պաշտոն, իշխանություն) post, position; *եկեղ.* throne, seat, cathedra; ◊ **փափուկ ~** padded chair; **ծալովի ~** folding/collapsible chair; **~ առաջարկել** offer a chair; **Մայր ~** Cathedral church; **մեղադրյալի ~** dock; *իրավ.* **մեղադրյալի ~ին նստել** նստեցնել be/put in the dock.

ԱԹՈՌԱԿ, գ. stool; ◊ **ոտքերի տակ դնելու ~** stool, foot stool.

ԱԹՈՌԱԿԱԼ, գ. vicar, curate of a parish; (հաջորդող, ժառանգորդ) successor; (փոխանորդ, տեղապահ) vicar.

ԱԹՈՌԱՄՈԼ, **ԱԹՈՌԱՊԱՇՏ** } գ. careerist, office seeker; *խսկց.* place-hunter, climber; *սմ.* go-getter.

ԱԹՈՌԱՆԻՍ, գ., ա. *եկեղ.* episcopal residence.

ԱԺԴԱՀԱ, 1. գ. giant; giantess (կին); 2. ա. (հսկայական) gigantic, giant-like, huge; *փխբ.* titanic.

ԱԼ, ա. red, scarlet, vermillion, damask; ◊ **~ վարդ** damask rose.

ԱԼԱԲԱՍՏՐ, գ. *հնբ.* alabaster.

ԱԼԱԲԱՍՏՐԵ, ա. alabaster.

ԱԼԱՆԻ, գ. dried peach stuffed with walnut, sugar and spices.

ԱԼԱՐԵԼ, բ. *խսկց.* be lazy, laze, idle.

ԱԼԱՐԿԱՆ, ա. *խսկց.* lazy-bones, idler.

ԱԼԱՐԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. *խսկց.* laziness, idleness.

ԱԼԲԱՆ, ա. գ. Albanian.

ԱԼԲԱՆԱԿԱՆ, ա. Albanian.

ԱԼԲԱՆԵՐԵՆ, գ., ա., մ. Albanian, the Albanian language.

ԱԼԲԱՆՈՒՀԻ, գ. Albanian (woman).

ԱԼԲՈՄ, գ. album; ◊ **գծանկարի ~** sketch-book; **դրոշմանիշների ~** stamp album; **լրագրի և այլ կտրածոների ~** scrap-book.

ԱԼԵՔԱՍՏՐ, *տես* ԱԼԱԲԱՍՏՐ:

ԱԼԵՔԱՍՏՐԵ, *տես* ԱԼԱԲԱՍՏՐԵ:

ԱԼԵՋԱՐԴ, ա. grey, gray, grey-headed, grey-haired, grey with age; white-haired; *փխբ.*

(ձյունածածկ) snow-capped, snow-covered, snow-clad, covered with deep snow.

ԱԼԵԼՈՒՅԱ, գ. *կրոն.* alleluia! hallelujah.

ԱԼԵԽԱՒՆ, ա. greying, streaks of grey/gray; touched with grey/gray, hair turning/going grey/gray; *խսկց.* pepper-and-salt, grizzly hair.

ԱԼԵԽՈՒԻՎ, ա. shock-headed, tousled, dishevelled.

ԱԼԵՑԱԾԱՆ, ա. wavering, flickering, fluttering.

ԱԼԵՑՔԱՆՔ, գ. ripples, surge.

ԱԼԵԿԱԾ, ա. wavering, rippling, ruffled, rough; *փխբ.* (խիստ հուզված) agitated, excited, disturbed, anxious.

ԱԼԵԿԱԾԵԼ, բ. ripple, ruffle; (մտքեր) stir; *փխբ.* (խիստ հուզել) agitate, excite, disturb.

ԱԼԵԿԱԾՈՒԹՅՈՒՆ, **ԱԼԵԿԱԾՈՒՄ** } գ. wavering, roughness, fluttering; (տագնապ) alarm; *փխբ.* (խիստ հուզմունք) agitation, emotion.

ԱԼԵՀԵՐ, **ԱԼԵՎԱՐՍ** } ա. grey, gray, grey-headed, grey-haired, hoary; *փխբ.* (ձյունապատ, սպիտակագագաթ) snowed up, snow-covered, snow-clad, covered with deep snow.

ԱԼԵՎԵՏ, ա. seething, turbulent; *փխբ.* (ալիքավոր) rough, stormy.

ԱԼԵՎՈՐ, 1. գ. old/aged man, elder; 2. ա. (ալեհեր) grey-haired, grey/gray with age, old, grizzled; (պատկառելի) white-headed, hoary, venerable; *փխբ.* (դարավոր, հին) age-long, centuries old, secular; *փխբ.* (ձյունածածկ) snow-covered; (փրփրալից) foamy, frothy, in a lather.

ԱԼԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. old age; (զառամություն) senility; (ալեհերություն) hoariness.

ԱԼԻԳԱՏՈՐ, գ. *կեն.* alligator.

ԱԼԻՄՆՆՏ, գ. alimony, maintenance/allowance due to children from father on separation/divorce.

ԱԼԻՏԵՐԱՑԻԱ, գ. alliteration.

ԱԼԻՔ, գ. wave, roller, breaker; (կոհակ) billow, surge; ◊ **մեծ** ~ heavy wave; **ինններորդ** ~ the ninth/highest wave.

ԱԼԻՔԱՁԵՎ, ա. wavy, undulating, undulatory; (ծփծփուն) ripply; (ձայնի երաժշտության մասին) modulated, warbled.

ԱԼԻՔԱՅԻՆ, ա. wave undulatory; ◊ *ֆիզ.* ~ **ալիքների տեսություն** wave theory; *ֆիզ.* ~ **շարժում** undulatory/undulating movement.

ԱԼԻՔԱՎՈՐ, ա. ruffled; (ամիսաթ) rough; *փխբ.* (ալիքաձև) undulating, undulatory; (ծալազարդ) goffered, crimped; ◊ ~ **երկաթ** corrugated iron; ~ **մազեր** wavy hair; *էլ.* ~ **փաթույթ** wave winding.

ԱԼԿՈՀՈԼ, գ. *քիմ.* alcohol; (խմիչք) spirits.

ԱԼԿՈՀՈԼԱՄԱՆ, գ. *գիտ.* dipsomaniac; *խսկց.* drunkard.

ԱԼԿՈՀՈԼԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. alcoholism; *գիտ.* dipsomania.

ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ, ա. alcoholic, spirituous; ◊ ~ **խմիչք** strong/alcoholic drink, spirits.

ԱԼՄԱՆԱԽ, գ. anthology, literary miscellany, almanac.

ԱԼՄԱՍ, գ. diamond, adamant; (ապակի կտրելու համար) glazier's diamond, diamond point; ◊ **հղկած** ~ brilliant, cut diamond.

ԱԼՄԱՍԵ, ա. diamond.

ԱԼՅԱԿ, գ. wavelet.

ԱԼՅՈՒՄԻՆԱԳՈՐԾ, գ. aluminium maker/producer.

ԱԼՅՈՒՐ, գ. flour, meal; *փխբ.* (բարակ՝ փոշիացրած նյութ) powder; ◊ **եգիպտացորենի** ~ cornflour; **կարտոֆիլի** ~ potato-starch; **չմաղված** ~ whole meal; **վարսակի** ~ oatmeal; **հարյուր մաղից** ~ **ուտել** go through many trials and tribulations, go through all the troubles under the sun, *դրծվ.*:

ԱԼՅՈՒՐԱՎԱՃԱՌ, գ. meal-monger, flour-dealer.

ԱԼՅՈՒՐՈՏ, ա. mealy, floured, covered with flour, flour-covered.

ԱԼՅՈՒՐՈՏԵԼ, բ. flour, cover with flour, roll in flour.

ԱԼՈՁ, **ԱԼՈՒՁ** } գ. *բսբ.* haw.

ԱԼՈՁԵՆԻ, գ. *բսբ.* hawthorn.

ԱԼՊԻԱԿԱՆ, ա. Alpine; ◊ ~ **մարգագետին** Alpine grasslands/meadows; ~ **մանուշակ** cyclamen.

ԱԼՊԻՆԻԶՄ, գ. mountaineering, Alpinism.

ԱԼՊԻՆԻՍՏ, գ. mountaineer, mountain climber, Alpinist.

ԱԼՊԻՆԻՍՏԱԿԱՆ, ա. Alpinist; ◊ ~ **ճամբար** mountaineering camp.

ԱԼՊՅԱՆ, *տես* ԱԼՊԻԱԿԱՆ:

ԱԼՎԱՆ, ա. (խայտաբղետ) motley; (երփնեփանգ) variegated, manycoloured, particoloured; (վառ) gay; ◊ ~ **ծաղիկներ** motley flowers.

ԱԼՏ, գ. *երաժշ.* (գործիք) viola; (ձայն) alto, contralto.

ԱԼՏՐՈՒԻԶՄ, *տես* ԱՅԼԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ:

ԱԼՏՐՈՒԻՍՏԱԿԱՆ, *տես* ԱՅԼԱՍԻՐԱԿԱՆ:

ԱԼՐԱՂԱՑ, 1. գ. mill, flour/flouring mill, gristmill, corn-mill; 2. ա. flour-grinding.

ԱԼՔ, գ. evil spirit.

ԱԼՔԻՄԻԱ, գ. alchemy.

ԱԼՔԻՄԻԿՈՍ, գ. alchemist.

ԱԽ, ձ. ah! oh! ◊ ~ **քաշել** sigh, moan.

ԱԽՈՅԱՆ, գ. enemy, adversary; (հակառակորդ) opponent, antagonist; (մրցակից) rival, emulator.

ԱԽՈՌ, գ. stable, stud; (գոմ) shed; (ձիանոց) stud, mews, horse barn; (խոշոր եղջեր. անասունների համար) cattle-shed, cow-shed,

cattle-yard; (խոզանոց *նաև փխբ.*) pigsty; ◊ **Ավգիայի ~ներ** Augean stables.

ԱԽՈՒԱՅԻՆ, ա. stable, stall, equerry; ◊ **անասունների ~ ՝ մսուրային շրջան** winter indoor maintenance/confinement of cattle.

ԱԽՈՒԱՊԱՀ } գ. groom, stable-man,
ԱԽՈՒԱՊԱՆ } stable-boy; *պատմ.* ostler.

ԱԽՈՒԱՊԵՏ, *պատմ.* (արքունական ախոռների գլխավոր կառավարիչ) equerry.

ԱԽՈՒԱՏՈՒՆ, *տե՛ս* ԱԽՈՌ:

ԱԽՈՐԺԵԼԻ, ա. (դուրեկան) agreeable; (հաճելի) pleasant.

ԱԽՈՐԺԱԲԱՐ, մ. with appetite; (հաճույքով) with pleasure, agreeable.

ԱԽՈՐԺԱԲԵՐ } ա. appetizing, relishing,
ԱԽՈՐԺԱԳՐԳԻՌ } tempting; (համեղ) tasty; (հաճելի) pleasing.

ԱԽՈՐԺԱԼԻՐ, ա. harmonious; (ձայնի մասին) melodious; (հնչյունակապակցության մասին) euphonious, euphonic.

ԱԽՈՐԺԵԼ, բ. wish, desire (sth), have inclination for sth.

ԱԽՈՐԺԱԿ, գ. appetite, relish (for sth); *փխբ.* (հակում, ցանկություն) wish, desire, inclination; ◊ **~ գրգռել՝ շարժել** make sb's mouth water; **~ չունենալ** have no appetite, be off one's food; *խսկց.* **~ պահել** nothing doing! **~ով ուտել** eat heartily; **~ը ատամի տակ է** the appetite comes with eating; **բարի ~** good appetite, bon appetit, *ֆր.*:

ԱԽՈՐԺԱՀԱՄ, ա. appetizing, delicious; (համեղ) tasty, toothsome; (հաճելի) pleasing to the taste, relishing, delicious; (հրապուրիչ) tempting.

ԱԽՈՐԺԵԼ, բ. relish, like, delight in.

ԱԽՈՐԺԵԼԻ, ա. palatable; (համեղ) savoury.

ԱԽ-ՎԱՅ, ձ. Ah! Oh! (ավա՜ղ) Alas!

ԱԽՏ, գ. disease, illness, sickness; (քրոնիկական ժառանգական հիվանդություն) ailment; (սուր վարակիչ հիվանդություն) infectious/contagious disease; (համաճարակ) epidemic; (կենդանիների համաճարակ) epizootic; *փխբ.* (արատ) vice; *փխբ.* (արատավոր կիրք) wanton love.

ԱԽՏԱԲԱՆ, գ. *բժշկ.* pathologist.

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ, ա. *բժշկ.* pathologic(al).

ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. pathology.

ԱԽՏԱԲԵՐ, ա. (հիվանդաբեր) morbific, pathologic, vicious.

ԱԽՏԱԲՈՒԺԱԿԱՆ, ա. therapeutic.

ԱԽՏԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. therapeutics, medical treatment.

ԱԽՏԱԲՈՒԺ, գ. therapeutist, physician.

ԱԽՏԱԾԱԳՈՒՄ, գ. *բժշկ.* pathogeny, pathogenesis.

ԱԽՏԱԾԻՆ, ա. *բժշկ.* pathogenic, pathogenous, morbigenous.

ԱԽՏԱՀԱՆ, 1. ա. disinfecting, disinfectant; 2. գ. (անձ) disinfector.

ԱԽՏԱՀԱՆԵԼ, բ. disinfect.

ԱԽՏԱՀԱՆԻՉ, գ., ա. disinfectant.

ԱԽՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ } գ. disinfection.
ԱԽՏԱՀԱՆՈՒՄ }

ԱԽՏԱՀԱՐԵԼ, բ. infect, contaminate; ◊ **ջուրը ~** poison/pollute water.

ԱԽՏԱՀԱՓՎԵԼ, բ. catch/get an infection.

ԱԽՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ } գ. infection; *գիտ.*
ԱԽՏԱՀԱՐՈՒՄ } septic(a)emia, to-x(a)emia; ◊ **արյան ~** blood poisoning; *ոգմ.* **տեղանքի ~** contamination of the ground.

ԱԽՏԱՄԻՏ, ա. immoral; (ցոփ) dissolute; (անբարոյական) immoral, wicked; (փչացած) corrupt; (արատավոր) vicious; (անառակ) depraved.

ԱԽՏԱՄՏԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. immorality; (ցոփություն) dissoluteness; (անբարոյականություն) immorality, wickedness; (փչացածություն) corruption; (արատավորություն) viciousness; (անառակություն) depravity.

ԱԽՏԱՆԻՇ } գ. *բժշկ.* symptoms, sign
ԱԽՏԱՆՇԱՆ } of illness.

ԱԽՏԱՆԻՇԱՅԻՆ, ա. symptomatic.

ԱԽՏԱՎԱՐ, ա., գ. infectious, contagious, (անբարոյական, արատավոր) vicious, depraved; (կնոջ մասին) wanton.

ԱԽՏԱՓՔ, գ. *հնց.* astrologer; (աստղագուշակություն) astrology.

ԱԽՏԱՐՈՇԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. *բժշկ.* diagnostics.

ԱԽՏԱՐՈՇԵԼ, բ. diagnose.

ԱԽՏԱՐՈՇՈՒՄ, գ. diagnosis, diagnostics.

ԱԽՈՒՎԱՅ } գ. moan; ◊ **~ անել** have a
ԱԽՈՒՎԻՇ } sigh, moan for.

ԱԾԱԿԱՆ, գ., ա. *քեր.* adjective.

ԱԾԱԿԱՆԱԲԱՐ, մ. as an adjective.

ԱԾԱԿԱՆԱԿԱՆ, ա. *քեր.* adjectival.

ԱԾԱԿԱՆԱՐԵՆ, *տե՛ս* ԱԾԱԿԱՆԱԲԱՐ:

ԱԾԱԿԱՆԱՆԱԼ, բ. *քեր.* become/be adjectivized.

ԱԾԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. adjectivization.

ԱԾԱՆ, ա. ◊ **~ հավ** laying hen, layer.

ԱԾԱՆՑ, գ. *լեզվ.* affix.

ԱԾԱՆՑԱԲԱՐ, մ. as an affix.

ԱԾԱՆՑԱՎՈՐ } ա. *լեզվ.* derivative.
ԱԾԱՆՑԱԿԱՆ }

ԱԾԱՆՑԵԼ, բ. *լեզվ.* derive.

ԱԾԱՆՑՅԱԼ, գ. ա. derivative.

ԱԾԱՆՑՎԵԼ, բ. be/become derived.

ԱԾԱՆՑՈՒՄ, գ. affixation, derivation.

ԱԾԵԼ, բ. (ձու) lay eggs; *խսկց.* (լցնել) pour, pour out/in/into; (թափել, ցիրուցան անել, շաղ տալ, գցել) strew; ◊ **(մեկի) ջրաղացին ջուր ~** play into sb's hands.

ԱԾԵԼԻ, գ. razor; ◊ **անվտանգ ~** safety razor; **երեսաց հայելի, տականց ~** *առած* honey

is sweet, but the bee stings, honey tongue, heart of gall.

ԱԾԻԼԵԼ, *տես* ՍԱՓՐԵԼ:

ԱԾԻԼՎԵԼ, բ. shave, shave off.

ԱԾԻԿ, գ. malt; ◊ **~ի ալյուր** malt powder.

ԱԾԻԿԱՆՈՑ } գ. malt-house.
ԱԾԻԿԱՐԱՆ }

ԱԾԽԱԳԱԶ, գ. *քիմ.* carbon monoxide.

ԱԾԽԱԳՈՐԾ, գ. (հանքափոր) coal-miner, collier; (ածխարար) charcoal burner/maker.

ԱԾԽԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. charcoal making/burning.

ԱԾԽԱԳՈՒՅՆ, ա. coal-black, jet-black.

ԱԾԽԱԹԹՎԱՅԻՆ } ա. *քիմ.* carbonic acid;
ԱԾԽԱԹԹՎԱԿԱՆ } **~ գազ** carbonic (acid) gas; **~ նատրիում** sodium carbonate; **~ հանքային աղբյուր** carbonaceous mineral spring.

ԱԾԽԱԹԹՈՒ, գ. carbonic acid, carbon dioxide.

ԱԾԽԱԾԻՆ, գ. *քիմ.* carbon.

ԱԾԽԱԾՆԱՅԻՆ, ա. *քիմ.* carbonaceous, carbon.

ԱԾԽԱՀԱՆ, ա. coal-mining.

ԱԾԽԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. coal extraction/mining; (արտադրանք) coal output.

ԱԾԽԱՀԱՆՔ, գ. coal pit/mine, colliery.

ԱԾԽԱՀԱՍ, գ. miner, collier; *մանգ.* (մեքենա) mining combine.

ԱԾԽԱՀՈՐ, գ. coal -pit, coal mine/bunker.

ԱԾԽԱՋԱՅՈՒԹ, գ. (կուպր) coal-tar.

ԱԾԽԱՅԻՆ, ա. coal.

ԱԾԽԱՆԱԼ, բ. be/become charred, be carbonized.

ԱԾԽԱՆԱՎ, գ. collier, coal-ship, keel.

ԱԾԽԱՆԿԱՐ, գ. *արվ.* charcoal drawing.

ԱԾԽԱՇԵՐՏ, գ. coal-bed.

ԱԾԽԱՋՐԱԾԻՆ, գ. *քիմ.* hydrocarbon.

ԱԾԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ, ա. hydrocarbonic.

ԱԾԽԱՋՈՒՐ, գ. *քիմ.* carbohydrate.

ԱԾԽԱՎԱՃԱՌ, գ. (char)coal dealer, (char) coal-seller.

ԱԾԽԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. coal industry/mining.

ԱԾԽԱՑՆԵԼ, բ. carbonize, char.

ԱԾԽԱՑՈՒՄ, գ, carbonization.

ԱԾԽԱՓՈՇԻ, գ. coal dust.

ԱԾԽԱՔԱՐ, գ. (անտրացիտ) anthracite, stone-coal.

ԱԾԽՈՏ, ա. covered with coal dust.

ԱԾԽՈՏԵԼ, բ. cover with coal dust, soil/stain with coal dust.

ԱԾՈՒ, գ. bed, flower bed.

ԱԾՈՒԽ, գ. coal, charcoal; ◊ **~ կտրել** be/become charred, char.

ԱԿ[1], գ. (թանկարժեք քար) gem, jewel, precious stone.

ԱԿ[2], գ. (ակունք) source; *փիլ.* (սկիզբ) source; ◊ **գետի ~** source; **ջրի ~** spring, fountain.

ԱԿ[3], գ. (անիվ) wheel.

ԱԿԱԴԵՄԻԱ, գ. academy; (ուսումնական հաստատություն) college; ◊ **գիտությունների ~** Academy of Science; **արվեստի ~** Academy of Art; **ռազմական ~** Military College; **ռազմաօդային ~** Air Force College; **ռազմաբժշկական ~** Army Medical College; **ռազմածովային ~** Naval College.

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ, ա. academic; ◊ **~ մոտեցում** academic approach.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ, գ. academician.

ԱԿԱՄԱ, ա., մ. forced, constrained; (ինքնաբերաբար) involuntary, unintentional; (մեքենայորեն) mechanical, automatical; (ոչ դիտավորյալ) unwitting; ◊ **~ ժպիտ՝ ծիծաղ** forced smile/laughter.

ԱԿԱՄԱՅԻՑ, մ. unwillingly; (կամքին հակառակ) reluctantly, against one's will; *խսկց.* willy-nilly; (դժկամորեն) grudgingly of necessity; (բռնի) perforce; (մեքենայորեն) mechanically, automatically; ◊ **~ անել** (որևէ բան) do sth half-heartedly.

ԱԿԱՆ, գ. mine; ◊ **հրանոթային ~** mortar shell/bomb; **փակոցի ~** barrage mine; **~ պայթեցնել** blow up/spring/fire a mine.

ԱԿԱՆԱԴԱՇՏ, գ. *ռզմ.* minefield, mined area.

ԱԿԱՆԱԶԵՐԾ, ա. clear of mines.

ԱԿԱՆԱԶԵՐԾԵԼ, բ. clear of mines.

ԱԿԱՆԱԶԵՐԾՈՒՄ, գ. mine clearing.

ԱԿԱՆԱԿՈՐ } գ. torpedo-boat; ◊
ԱԿԱՆԱՆԱՎ } **էսկադրային ~** destroyer.

ԱԿԱՆԱՆԵՏ, գ. *ռզմ.* mine-thrower, mortar, trench mortar; ◊ **գվարդիական ~** rocket barrage weapon.

ԱԿԱՆԱՊԱՏ, ա. *ռզմ.* mined, planted/laid with mines.

ԱԿԱՆԱՊԱՏԵԼ, բ. *ռզմ.* mine, lay/plant/place mines.

ԱԿԱՆԱՊԱՏՈՒՄ, գ. *ռզմ.* mining.

ԱԿԱՆԱՎՈՐ, ա. prominent , distinguished, illustrious; (նշանավոր) celebrated, eminent, renowned; (հռչակավոր) famous, notable.

ԱԿԱՆԱՏԵՍ, գ. eye-witness, witness; ◊ **պատահական ~** bystander, looker-on, onlooker.

ԱԿԱՆԱՓԱԿՈՑ, գ. *ռզմ.* barrage mine.

ԱԿԱՆԵԼ, բ. *ռզմ.* mine.

ԱԿԱՆՋ, գ. ear; *երժշ.* (լսողություն) ear for music; ◊ **արտաքին ~** auricle; **միջին ~** middle ear; **~ի բորբոքում** inflammation of the ear; *զիտ.* otitis; **~ը ցավել** have pain in the ear, have an ear-ache; **~ դնել՝ անել** give/lend an ear; **~ը բուրդ՝ բամբակ խոխել** close/stop/plug one's ears; **~ը ծակել** jar/grate upon one's ears; **~ը կախել** (լսել, ուշադրություն դարձնել) eavesdrop; (ընկճվել, խեղճանալ) become depressed; **~ը կանչի** let him be well spoken about; **~ի հետև գցել** give no ear (to), take no heed (of); **~ը մտնել** whisper in one's ear; **~ը սրել** prick up one's ears; (մեծ ուշադրությամբ լսել) be all ears; **~ը տանել**

din in (to) one's ear; **~ը քաշել՝ ոլորել** box one's ears; **~ը՝ ~ները բռնվել՝ ծանրանալ** be/become hard of hearing; **~ները լարել** be on the alert/on one's guard; **մինչև ~ները սիրահարված լինել** be head over heels in love; **~ի ծայրով լսել** listen with half an ear; **~իդ օդ արա** put that in your pipe and smoke it; **~ին հասցնել** give sb a box on the ear; **մի ~ից մտնում է, մյուսից դուրս գալիս** in one ear and out the other.

ԱԿԱՆՋԱԲԼԻԹԱԿ, գ. ear-lobe, ear-flap.

ԱԿԱՆՋԱԲՈՐԲ, գ. inflammation of the ear.

ԱԿԱՆՋԱԲՈՒԺԱԿԱՆ, ա. otological.

ԱԿԱՆՋԱԲՈՒՅԺ, գ. aurist, aural surgeon, otologist.

ԱԿԱՆՋԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. otology.

ԱԿԱՆՋԱԹԱՂԱՆԹ, գ. *կզմխս.* ear-drum.

ԱԿԱՆՋԱԽԵՑԻ, գ. *կզմխս.* helix, cochlea, earcrouch.

ԱԿԱՆՋԱԿԱԼ, գ. head-phones, ear-phones, ear-piece; (գլխարկի) ear-flaps, ear-laps, ear-tab, ear-cap.

ԱԿԱՆՋԱՁԵՎ, ա. having the form of an ear, ear-shaped.

ԱԿԱՆՋԱՑԱՎ, գ. ear-ache, pain in the ear.

ԱԿԱՆՋԵԼ, բ. listen(to), lend an ear(to), lend one's ear(to); *խսկց.* cock an ear(to).

ԱԿԱՆՋՕՂ, գ. ear-ring, ear-clip.

ԱԿԱՆՈՒՄ, *տես* ԱԿԱՆԱՊԱՏՈՒՄ:

ԱԿԱՅԻԱ } գ. acacia; ◊ **սպիտակ, հոտավետ ~** false acacia, locust-tree; **դեղին ~** Siberian acacia.
ԱԿԱՅԻ }

ԱԿՆ, *հնց. տես* ԱՉՔ; ◊ **~ ընդ ~ան, ատամն ընդ ատաման** eye for eye, tooth for tooth; *խսկց.* tit for tat.

ԱԿՆԱԲԱՆ, *տես* ԱԿՆԱԲՈՒՅԺ:

ԱԿՆԱԲԱՆԱԿԱՆ, *տես* ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ:

ԱԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, *տես* ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ:

ԱԿՆԱԲՅՈՒՐԵՂ, գ. *կզմխս.* lens, crystalline lens.

ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ, ա. ophthalmologic(al), ocular.

ԱԿՆԱԲՈՒԺԱՐԱՆ, գ. ocular clinic/hospital, ophthalmologic clinic/hospital; *խսկց.* eye-hospital.

ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. ophthalmology.

ԱԿՆԱԲՈՒՅԺ, գ. *գիտ.* oculist, ophthalmologist; *խսկց.* eye-doctor, eye-specialist.

ԱԿՆԱԳՈՐԾ, գ. jeweller; (հղկող վարպետ) lapidary, diamond cutter; (ոսկերիչ) goldsmith.

ԱԿՆԱԳՈՐԾԱԿԱՆ, ա. jewellery, jewelry.

ԱԿՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. jewellery, jewelry.

ԱԿՆԱԽՆՁՈՐ, գ. eye-ball.

ԱԿՆԱԽՈՌՈՉ } գ. *կզմխս.* eye-socket, orbit.
ԱԿՆԱՊԻՆ }

ԱԿՆԱԾԱԼԻ(Ց) } ա. reverent, reverential;
ԱԿՆԱԾԱԿԱՆ } (հարգալից) respectful, respectable, deferential.

ԱԿՆԱԾԱՆՔ, գ. regard; (պատկառանք) reverence; (հարգանք) respect, respectfulness, deference; (հնազանդություն) reverence (for, before); (սեր) veneration (for); (երկյուղածություն) awe (of).

ԱԿՆԱԾԵԼ, բ. venerate, honour; (հարգել) respect, esteem; (պատկառել) revere, hold in reverence, regard with reverence.

ԱԿՆԱՀԱՃՈ } ա. pleasing to the eye,
ԱԿՆԱՊԱՐԱՐ } attractive, charming.

ԱԿՆԱՊԻԾ, 1. ա. fixed, intent; ◊ **~ հայացք** fixed look; 2. մ. fixedly, intently; **~ նայել** look fixedly/intently (at), stare (at), gaze (at).

ԱԿՆԱՌՈՒ, ա. (ակնհայտ) obvious; (պարզ) clear; (ակներև) evident; (բացահայտ) apparent; (աչքի ընկնող) prominent, eminent, remarkable; (ականավոր) notable, distinguished; ◊ **~ գործեր** prominent/significant matters/affairs/things.

ԱԿՆԱՎԱՃԱՌ, գ. jeweller.

ԱԿՆԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. jewellery, jewelry.

ԱԿՆԱՎՃԻՏ, ա. crystal-clear; ◊ **~ ջուր** limpid water.

ԱԿՆԱՐԿ, գ. hint, allusion, intimation; (հայացք) glance, glimpse, look; (ուրվագիծ) sketch, outline; (ամփոփում) review, essay; ◊ **~ անել** drop a hint, make an allusion; **~ը հասկանալ** take the hint; **անուղղակի՝ կողմնակի ~** innuendo.

ԱԿՆԱՐԿԱԳԻՐ, գ. *գրկ.* essayist, sketcher.

ԱԿՆԱՐԿԱՅԻՆ, ա. *գրկ.* essay; ◊ **~ ժանր** the essay/feature-story type of writing.

ԱԿՆԱՐԿԱՇԱՐ, գ. *գրկ.* a series of essays (on the same subject).

ԱԿՆԱՐԿԵԼ, բ. hint (at), allude (to); (նկատի ունենալ) imply, drive -(at), mean; ◊ **ի՞նչ եք ~ում** what are you driving/hinting at?

ԱԿՆԱՓՈՍ, գ. eye-socket.

ԱԿՆԲԱԽ, ա. obvious; (պարզ) clear; (ակնհայտ) evident, palpable; (բացահայտ) manifest, apparent; (նկատելի) visible.

ԱԿՆԳԵՏ, 1. ա. fixed, intent, steady; 2. մ. fixedly, intently, steadily.

ԱԿՆԵՂԵՆ, գ. gem, jewel, precious stones.

ԱԿՆԵՐԵՎ, *տես* ԱԿՆԲԱԽ:

ԱԿՆԵՐԵՎԱԲԱՐ } մ. evidently, obviously,
ԱԿՆԵՐԵՎԱՊԵՍ } apparently, plainly.
ԱԿՆԵՐԵՎՈՐԵՆ }

ԱԿՆԹԱՐԹ, գ. moment, instant, blink, wink, wink of an eye, twinkling of an eye; ◊ **մի ~ում** in the twinkling of an eye, in less than no time, before you could/can say Jack Robinson.

ԱԿՆԹԱՐԹԱՅԻՆ, ա. instantaneous, momentary.

ԱԿՆԹԱՐԹՈՐԵՆ, մ. instantly, in a moment/trice, as quick as thought.

ԱԿՆԿԱԼԵԼ, բ. expect; (հուսալ) hope (for), be hopeful (of); (սպասել) anticipate.

ԱԿՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ } գ. (սպասում)
ԱԿՆԿԱԼՈՒՄ } expectation; (հույս) hope, anticipation.

ԱԿՆՀԱՅՏ, *տես* ԱԿՆԲԱԽ: ◊ **~ անմտություն** downright nonesense, patent absurdity; **~ արհամարհանք** open contempt; **~ ճշմարտություն** the plain truth; **~ սուտ** downright/barefaced lie.

ԱԿՆՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ, գ. obviousness, palpability, manifestness, patentness.

ԱԿՆՀԱՅՏՈՐԵՆ, մ. evidently, obviously, apparently, plainly.

ԱԿՆՈՑ, գ. (pair of) glasses/spectacles, eyeglasses; *խսկց.* specs; ◊ **պաշտպանական ~** goggles; **~ դնել գործածել** wear glasses; **~ը դնել** put on/fix glasses; **~ի ապակի** optical glass; ◊ **վարդագույն ~ով նայել** see through rose-coloured spectacles.

ԱԿՆՈՑԱՎԱՃ, ա., գ. a person wearing glasses; *կտկ.* a four-eyes; *խսկց.* four-eyed.

ԱԿՈՍ, գ. furrow, groove; (անվահետք) rut; (հրացանի) rifling; *տեխ.* groove, slot; *փխբ.* (կնճիռ) wrinkle.

ԱԿՈՍԵԼ, բ. (ակոս ձգել) furrow, plough, make a furrow; *փխբ.* (կնճռապատել) wrinkle, furrow with wrinkles; ◊ **նավերը ~ում են ծովերը** ships are ploughing the seas; **նրա դեմքը ~ված է կնճիռներով** his/her face is furrowed with wrinkles.

ԱԿՈՐԴ, գ. *երաժշ.* accord, chord; ◊ **եզրափակիչ ~** finale.

ԱԿՈՐԴԵՈՆԱՀԱՐ, գ. accordeon player, accordeonist.

ԱԿՏ, գ. (legal) deed; ◊ **օրենսդրական ~** act, law, inactment, statute; **մեղադրական ~** (bill of) indictment, charge.

ԱԿՏԱՎՈՐԵԼ, բ. draw up a report.

ԱԿՏԻՎ, ա. (գործուն, գործող) active; *ֆին.* assets; ◊ **~ բալանս** favourable balance; *ռազմ.* **~ պաշտպանություն** active/aggressive defence; **~ անդամները** the most active members; **~ում** on the credit side; **~ում գրել** enter on the credit side (of an account).

ԱԿՏԻՎԱՆԱԼ, բ. liven up, become active.

ԱԿՏԻՎԱՑՆԵԼ, բ. activize, stir to activity, stir up, make more active, render active; ◊ **~ աշխատանքը** liven/brisk up the work.

ԱԿՏԻՎԱՑՈՒՄ, գ. activization, stirring up.

ԱԿՏԻՎԻՍՏ, գ.activist, active worker.

ԱԿՏԻՎՈՐԵՆ, մ. actively; ◊ **~ մասնակցել** take an active part (in).

ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, գ. activity; ◊ **~ հանդես բերել** display activity.

ԱԿՐՈՍՏԻՔՈՍ, գ. *գրկ.* acrostic.

ԱԿՐԱՍ, գ. light repast, snack.

ԱԿՈՒՄԲ, գ. club, club-house.

ԱԿՈՒՄԲԱՅԻՆ, ա. club.

ԱԿՈՒՄԲԱԿԻՑ, գ. belonging to the same club, members of the same club, clubman.

ԱԿՈՒՄԲԱՎԱՐ, գ. club secretary.

ԱԿՈՒՆՔ, գ. source; ◊ **աղբյուրի՝ գետի ~** spring.

ԱՀ, գ. fear, fright, scare; (սարսափ) dread, terror; (անհանգստություն) anxiety, uneasiness; **~ից** for fear (of), out of fear; ◊ **~ից դողալ** quake with fear, be overcome with/by fear; **~ ազդել** scare, frighten, strike sb with fear, put the fear of God into sb.

ԱՀ, ձ. O! Oh! Ah! Eh! (ավաղ) Alas!

ԱՀԱ, Here! Here you are! Here is ..., here are ...; ◊ **~ տես** see here, behold, look here; **~ այսպես** that's the way, that's right; **~ ուր որ է** on the point of, just about, that's it, **~ և ես** here I am.

ԱՀԱԲԵԿ, ա., մ. intimidated (by), cowed (by), daunted; (սարսափահար) terror-stricken, struck, horror-struck/stricken, awe-struck; (վախեցած) horrified (by), terrified (by).

ԱՀԱԲԵԿԵԼ, բ. (վախեցնել) intimidate, daunt, frighten, scare; (սարսափեցնել) terrorize, strike with awe; (սպառնալ) threaten, cow, bully.

ԱՀԱԲԵԿԻՉ, 1. ա. (սարսափեցնող) terrific, horrific; (սարսափելի) frightening, appaling, redoubtable; (տեռորիստական) terrorist; 2. գ. (անձ) terrorist.

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ, գ. terrorism.

ԱՀԱԲԵԿՈՒՄ, գ, intimidation, frightening; (սարսափեցնելը) consternation, frightening; (տեռորի ենթարկելը) terrorising, terror.

ԱՀԱԲԵՐ, ա. terrible, fearsome, fearful, dreadful.

ԱՀԱԳԻՆ, ա. (վիթխարի, հսկայական) enormous, huge, tremendous, colossal, formidable; (բազմաթիվ) numerous; (շատ) rather much/many, a good lot of/deal of, fairly enough, considerable, sizable; ◊ **~ գումար** colossal sum, considerable sum of money; **~ տարբերություն** huge difference; **~ տուժել** suffer much.

ԱՀԱԳՆԱԲԱՐ, մ. terribly, awfully, frightfully, horribly, dreadfully.

ԱՀԱԳՆԱՊԵՄ, ա. with monstrous/horrific/sinister appearance/face/countenance.

ԱՀԱԶԱՆԳ, գ. alarm, alarm-bell, tocsin *նաև փխբ.*; (նախազգուշացում) warning, forewarning, caution; warning signal.

ԱՀԱԶԱՆԳԵԼ, բ. give/sound the alarm, sound/ring the tocsin, ring the alarm-bell; *փխբ.* raise an/the alarm; (նախազգուշացնել) warn (against), caution (against), give a signal (to, of), put one on one's guard.

ԱՀԱԶԱՆԳՈՒՄ, գ. signalling.

ԱՀԱԶԴԵՑԻԿ, **ԱՀԱԶԴՈՒ** ա. horrific, frightful, terrible, horrible, dreadful, fearful.

ԱՀԱԼԻ(Ց), ա. seized/gripped by fear; (ահ՝ սարսափ ազդող) keeping in awe/fear.

ԱՀԱՎԱՄԻԿ, *տես* ԱՀԱ:

ԱՀԱՎՈՐ, ա. (երկյուղալի) terrible, frightful, fearful, dreadful; (խիստ, ուժգին) extreme (ly), awful(ly), very; (ծանր, անտանելի) intolerable, unbearable; (վտանգավոր) alarming; (ահեղ, սարսափելի, սոսկալի) horrible, horrid, dreadful, formidable, redoutable; *փխբ.* (ծայրահեղ) extreme, awesome, fearsome; ◊ ~ (ուժեղ) **հարբուխ** frightful cold; ~ **շոգ** torrid heat; ~ **սառնամանիք** terrible/ghastly frost; ~ **տեսք** ghastly appearance.

ԱՀԱՐԿՈՒ, ա. horrid, dreadful, formidable, redoubtable.

ԱՀԵԼ, ա. (ահարկու, սարսափելի) terrible, formidable, redoubtable; (անողոք, խիստ) ferocious, stern, merciless; (զորեղ, ուժգին) mighty, vigorous; ◊ ~ **դատաստան** Doomsday, Day of Judg(e)ment, the Last Judg(e)ment; **Իվան** ~ Ivan the Terrible.

ԱՀԵԼԱԴԵՄ, ա. (sb) having awful/frightful/ghastly appearance.

ԱՀԵԼԱՁԱՅՆ, ա. roaring, thundering.

ԱՀԵԼԱՇՈՒՆՉ, ա. storming, raging.

ԱՀԵԼԱՏԵՍ, *տես* ԱՀԵԼԱԴԵՄ:

ԱՀԵԼՈՐԵՆ, մ. terribly, ferociously, vigorously.

ԱՀՌԵԼԻ, ա. (սարսափելի, զարհուրելի) terrible, frightful, fearful, dreadful, monstrous; (հսկայական) huge, enormous, vast, immense, colossal; (դժվարին, անտանելի) intolerable, unbearable; ◊ ~ **խնդիր** colossal task; ~ **ոռնոց** terrifying howl; ~ **տարածություն** vast territory.

ԱՀՌԵԼԻՈՐԵՆ, մ. terribly, frightfully, dreadfully, enormously.

ԱՀՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. hugeness, vastness, enormity; (սարսափելի՝ զարհուրելի լինելը) terror, horror.

ԱՂ, գ. salt; *քիմ.* sodium chloride; *փխբ.* (էություն) gist, essence; *փխբ.* (նուրբ սրամտություն) Attic salt; ◊ **կերակրի** ~ (common) salt, table salt; ~ **դնել** salt, pickle, corn; ~ **դրած միս** corned beef; ~ **ցանել** salt; ~ **ու հացով դիմավորել** give sb an official welcome; ~ **ու հացով մարդ** hospitable person; **երկրի** ~**ը** the salt of the earth.

ԱՂԱ, գ. master; (դիմելու ձև) sir; *հեգն.* grand gentleman.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ, ա. charitable, philanthropic, benevolent; ◊ ~ **ընկերություն** philanthropic society, charitable company, charity; ~ **կազմակերպություն** charitable organization, charity; ~ **ներկայացում** charity performance; ~ **նպատակով** for a charitable purpose/object.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. charity, philanthropy, benevolence, beneficence.

ԲԱՐԵԳՈՒՄ, ա. merciful, charitable, kind heart.

ԲԱՐԵԴԵՄ, *տես* ԲԱՐԵՏԵՍ:

ԲԱՐԵԼԱՎԵԼ, բ. improve, make better, ameliorate; (ուղղել) amend; (տեսակը) upgrade; *մարզ.* better.

ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, գ. improvement, amelioration.

ԲԱՐԵՀԱՄՈՒՆ, ա. moderate, temperate; (չափավոր, համեստ) modest, frugal; ◊ ~ **կլիմա** temperate climate; ~ **գոտի** temperate zone.

ԲԱՐԵԽԻՂԸ, ա. dilligent, honest, conscientious; ◊ ~ **աշխատող** dilligent/honest worker.

ԲԱՐԵԽՂԸՔԱԲԱՐ, **ԲԱՐԵԽՂԸՐԵՆ** } մ. conscientiously, honestly, dilligently.

ԲԱՐԵԽՂԸՈՒԹՅՈՒՆ, գ. honesty, conscientiousness.

ԲԱՐԵԽՈՍ, գ. intercesser, advocate.
ԲԱՐԵԽՈՍԵԼ, բ. intercede (for).
ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. intercession.
ԲԱՐԵԿԱԶԱՐ, ա. stately, slender.
ԲԱՐԵԿԱՄ, գ. friend; (ազգական) relation, relative, kinsman; (կին) kinswoman; ◊ **ընտանիքի՝ տան ~** friend of the family; **հեռավոր ~ներ** distant relations, relatives, remote kinsfolk; **մոտ ~** intimate/close friend, close relative; **մոտ ~ներ** next of kin; **մտերիմ ~** bosom friend, buddy, pal; *խսկց.* chum.
ԲԱՐԵԿԱՄԱԲԱՐ, մ. in a friendly manner/way, as a friend, amicably.
ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ, ա. friendly, amicable, amiable; (ազգակցական) kindred, related; *գրք.* congener, congeneric; ◊ **~ այցելություն** goodwill visit; **~ երկրներ** friendly nations/countries; **~ հաշտագիր** amicable settlement; **~ կապերի մեջ լինել** be on friendly terms.
ԲԱՐԵԿԱՄԱՆԱԼ, բ. become/make friends (with), become close (with); (ազգակիցներ դառնալ) become related (to).
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ, գ. friendship, amity; (ազգականների ամբողջությունը) relatives, relations, kinsfolk; ◊ **~ անել** be friends (with), be on friendly terms (with); **սերտ ~** close/intimate friendship.
ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻ, գ. female friend, lady-friend, girl-friend; (ազգականուհի) kinswoman.
ԲԱՐԵԿԱՐԳ, ա. well-arranged, well-managed, well-maintained, in good order; (հարմարավետ) comfortable; (լավ կազմակերպված) well-organized; ◊ **~ քաղաք** well-built/planned town/city (with all amenities).
ԲԱՐԵԿԱՐԳԵԼ, բ. put in good order, regulate.
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. good order; public welfare.
ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, գ. organization/improvement of anything (e. g. of public services and amenities).
ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, գ. shrovetide, carnival; *փխբ.* (ուրախ կյանք) a bed of roses, *դրծվ.:*
ԲԱՐԵԿԵՑԻԿ, ա. well-to-do; (բարգավաճ) prosperous; (ապահով) well-off; ◊ **~ մարդ** well-to-do person, person of substance/property; **~ կյանք վարել** live (fairly) comfortably, be fairly well-off.
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. prosperity, welfare, well-being.
ԲԱՐԵԿԻՐԹ, ա well-bred, well-brought up; (քաղաքավարի) polite.
ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ, գ. good breeding/upbringing; (հաճելի շարժուձև) good manners.
ԲԱՐԵՀԱՃԵԼ, բ. *հնգն.* deign (to).
ԲԱՐԵՀԱՃՈՒՐԵՆ, մ. favourably, with favour; ◊ **~ լսել** hear favourably, listen favourably (to), incline one's ear (to).
ԲԱՐԵՀԱՄԲՈՒՅՐ, ա. good-natured, sweet-tempered, amiable; (բարեհամ) affectionate; (սիրալիր) affable, friendly; (քնքուշ) tender; (հաճելի) sweet, pleasant.
ԲԱՐԵՀԱՋՈՂ, ա. successful, safe; ◊ **~ ճամփորդություն** safe/good journey; **~ ճամփորդություն մաղթել** wish sb a good journey/a nice trip.
ԲԱՐԵՀՆՉՈՒԹՅՈՒՆ, գ. harmony, melodiousness, euphony.
ԲԱՐԵՀՈՒՆՉ, ա. harmonious; (ձայնի մասին) melodious; (բառերի մասին) euphonious, euphonic.
ԲԱՐԵՀՈԳԻ, ա. good-natured.
ԲԱՐԵՀՈԳՈՒԹՅՈՒՆ, գ. good nature.
ԲԱՐԵՀՈՒՅՍ, ա. reliable, safe, trusty; *բղք* trustworthy, loyal.
ԲԱՐԵՁԵՎ, ա. well-shaped, well-formed, well-proportioned, well-built, slender.
ԲԱՐԵՄՏԼՈՒԵԼ, բ. wish well, wish the best.
ԲԱՐԵՄՏԼՈՒԹՅՈՒՆ, գ. good/best wishes.
ԲԱՐԵՄԻՏ, ա. simple-minded, kind; (պարզամիտ) artless, naïve; (անկեղծ) frank, sincere, ingenuous, candid.
ԲԱՐԵՄՏՈՒԹՅՈՒՆ, գ. simple-heartedness; (պարզամտություն) artlessness; (անկեղծություն) frankness, sincerity, ingenuity.
ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ, **ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ** } գ. reform, reorganization, remaking; ◊ **հասարակության ~** social reform, remaking/reorganization of society.
ԲԱՐԵՆՊԱՍՍ, ա. favourable, convenient; (նպաստավոր) propitious; (բարեպատեհ) auspicious; ◊ **~ պայմաններ** favourable conditions; **~ քամի՝ եղանակ** favourable/propitious wind/weather.
ԲԱՐԵՇԵՆ, *տես* ԲԱՐԵԿԱՐԳ:
ԲԱՐԵՊԱՇՏ, ա. *կրոն.* pious, devout; ◊ **կեղծ ~** sanctimonious.
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. piety, godliness; ◊ **կեղծ ~** sanctimony.
ԲԱՐԵՊԱՏԵՀ, ա. auspicious, propitious; (բարեպատեհ) favourable; (հարմար) (very) convenient; (պատեհաժամ) timely.
ԲԱՐԵՍԻՐՏ, ա. kind-hearted, good-hearted; (բարի) benign, kind.
ԲԱՐԵՎ, գ. regards, greetings, salutation; ◊ **~ ձեզ** how do you do; (մտերմիկ) hallo(a), salute, hello; *խսկց.* hi; *բնստ.* hail; (առավոտյան) good morning; (ցերեկը) good afternoon; (երեկոյան) good evening; **~ տալ** greet, hail, welcome; **~ը չառնել** not answer sb's greeting, ignore sb, turn one's back (on); **~ տանել** give sb one's best regards; **~ը մոռանալ** be taken aback, be lost for words.
ԲԱՐԵՎԵԼ, բ. greet sb, say hello/how do you do (to sb); (ողջունել) greet, hail, salute, welcome; ◊ **մեկի անունից ~** greet/hail on behalf

of sb; **իմ կողմից ~իր ցրաև** remember me to him/her, give my (kind) regards to him/her, give my compliments to him/her, send my love/best wishes/regards (to).

ԲԱՐԵՏԵՍ, ա. good-looking, handsome.

ԲԱՐԵՏԻՀՄ(ԻԿ), ա. *տես* ԱՋՆՎԱՏԻՀՄ:

ԲԱՐԵՐԱՐ, 1. գ. benefactor; ~ (կին) benefactress; 2. ա. (օգտակար) beneficial, salutary, wholesome; ◊ **~ ազդեցություն** wholesome effect, salutariness.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. good deed, charity.

ԲԱՐԵԿԱՐԳԵԼ, բ. improve, make better, amend; (վերափոխել) reform; (վերակազմել) reorganize; (վերասարքել) remake; (ձևափոխել) modify.

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ, **ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ** } գ. improvement, amendment; (վերափոխում) reform, reformation; (վերակազմում) reorganization; (ձևափոխում) modification.

ԲԱՐԻ, 1. ա. kind, good, nice; 2. վ. well! very well! all right! agreed! O.K. ◊ **~ անուն** good name; **~ ավանդույթով** by good tradition; **~ գալուստ** welcome! **~ գործ** good deed; **~ երեկո՛ գիշեր** good evening/night; **~ երթ** good luck! bon voyage! **~ լույս** good morning; **~ լուր** good news; **~ կամք** good will; **~ կամքի տեր մարդիկ** people of good will; **~ կամքով** voluntarily, of one's accord; **~ հիշատակ թողնել** leave fond memories; **~ հիշել** think kindly (of sb); **~ ճանապարհ** happy journey! have a nice trip! **~ մաղթել** wish well/every happiness; **~ մարդիկ** nice/kind people, pleasant people.

ԲԱՐԻԴՐԱՑԻԱԿԱՆ, ա. good-neighbourly; ◊ **~ հարաբերություններ** good-neighbourly relations, good-neighbourliness.

ԲԱՐԻԿԱԴ, գ. barricade; ◊ **~ կառուցել** barricade; **փողոցում ~ կառուցել** block the street with barricades; **~ներով պաշտպանել** defend with barricades/by barricading.

ԲԱՐԻԿԱԴԱՅԻՆ, ա. barricade; ◊ **~ մարտ** barricade fighting.

ԲԱՐԻՏՈՆ, գ. baritone.

ԲԱՐԻՔ, գ. (բարօրություն) boon, blessing; (ունեցվածք) property, wealth; *հեգն.* trash; ◊ **ամենայն ~** all the best! *խոսկ.* (ցտեսություն) so long!; **~ գործել** be good (to); **աշխարհիկ ~ներ** earthly blessings; **ընդհանուր ~ներ** common/general will, common good; **կյանքի ~ները** the good things of life, creature comforts; **նյութական ~երի արտադրություն** production of material wealth.

ԲԱՐԿ, ա. burning, scorching; (թունդ) strong, heady; (բուրմունքալից) spicy; ◊ **~ արև** scorching/parching sun; **~ քացախ** strong vinegar; **~ օղի** strong vodka.

ԲԱՐԿԱՆԱԼ, բ. be angry (with), be cross (with); ◊ **որևէ բանի վրա ~** be angry (at/about) smth; **~ած** angry/cross (with sb), angry (at/about sth).

ԲԱՐԿԱՅԱՑ, ա. angry, irate; *բնստ.* wrathful; ◊ **~ հայացք** angry look, glare.

ԲԱՐԿԱՅԿՈՏ, ա. hot-tempered, quick-tempered; *խոսկ.* (դյուրաբորբոքը) easily angered, irritable, hasty; ◊ **~ մարդ** hot-tempered person.

ԲԱՐԿԱՑՆԵԼ, բ. anger, make angry.

ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. anger; (զայրույթ) wrath; *բնստ.* (ցասում) ire; ◊ **~ը անցնել** calm down; **~ը գալիս է** he feels annoyed/vexed; **~թյամբ բռնված** in a fit of anger, in a temper, beside oneself with rage.

ԲԱՐՁ, գ. pillow; (բազմոցի) cushion, pad; (փչովի) air-cushion; *տեխ.* cushion, bolster; ◊ **~ի երես** pillow-case, pillow-slip; **գլուխը ~ին դնել** lay/rest the head on a pillow; **գլխի տակ փափուկ ~ դնել** lull/blunt sb's vigilance; **մի ~ի ծերանաք** may the two of you grow old together (traditional wedding wish in Armenia).

ԲԱՐՁԵԼ, բ. load (on); ◊ **վագոն ~** load goods on trucks; **(ապրանքը) նավի վրա ~** ship/load/put (cargo) on board.

ԲԱՐՁԻԹՈՂԻ, ա. neglected, abandoned; ◊ **~ անել** neglect, abandon, ignore, let slide; **~ վիճակում** in a state of neglect/decay.

ԲԱՐՁՈՂ, loader; (նավահանգստում) stevedore, longshoreman.

ԲԱՐՁՐ, ա. high; (գեղահասակ) lofty; (սարի մասին) high, lofty; (ձայնի հնչյունի մասին) high, high-pitched; (նշանակալից, վեհ, վսեմ) high, lofty, elevated; ◊ **~ բերք** big/heavy harvest/crop; **~ գին** high price; **~ դասարան** senior class, upper grade; *էլ.* **~ լարման** high-voltage; **~ լարում** high tension; **~ կարծիքի լինել** think highly (of), have a high opinion (of); **~ ճնշում** high pressure; **~ նոտա** high note; **~ նպատակներ** high/lofty/exalted aims; **~ ոճ** lofty/elevated style; **~ ջերմություն** high temperature/fever; **~ տեղանք** highland district, highlands; **~ից նայել** look down on/upon sb, condescend to sb, be condescending towards sb; **պայմանավորվող ~ կողմեր** the (High) Contracting Parties.

ԲԱՐՁՐԱԲԵՐՉ, ա. high-altitude, towering, cloud-capped, heaven-kissing, overhanging; ◊ **~ շենք** skyscraper, high-rise, tall building.

ԲԱՐՁՐԱԳԱԳԱՓ, ա. high, elevated, lofty, high-peaked.

ԲԱՐՁՐԱԳԼՈՒԽ, ա. with one's head up; (հպարտ) proud; (գոռոզ) haughty, supercilious; (խիզախ) bold.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ա. highest, topmost, upper-

most, superior; ◊ ~ դպրոց university, college; ~ իշխանություն the supreme/highest authority; ~ կետ acme; ~ կրթություն higher/university/college education.

ԲԱՐՁՐԱԴԱՍ, ա. high, of high ranking, high standing; ◊ ~ անձ high-ranking person, V.I.P. (Very Important Person).

ԲԱՐՁՐԱԴԻՐ, ա. high, elevated; (լեռնային) upland, highland, mountainous.

ԲԱՐՁՐԱԽՈՍ, ա. loud-speaking; գ. *տեխ.* (ռադիո) loud-speaker.

ԲԱՐՁՐԱԿԱՅՈՒՅՑ, ա. skyscraper.

ԲԱՐՁՐԱԿԱՐԳ, ա. high-quality, high-class, of high quality/class, classy.

ԲԱՐՁՐԱԿԵՏ, գ. apogee, culminating point, zenith.

ԲԱՐՁՐԱՀԱՍԱԿ, ա. tall.

ԲԱՐՁՐԱՁԱՅՆ, ա., մ. aloud; loudly, in a loud voice.

ԲԱՐՁՐԱՃԱՇԱԿ, ա. having delicate/fine taste.

ԲԱՐՁՐԱՃԻՏ(Ք), ա. high-top (of boot); ◊ ~ կոշիկներ high-boots, top-boots, jack-boots.

ԲԱՐՁՐԱՄԻՏ, ա. haughty, arrogant, supercilious, self-conceited.

ԲԱՐՁՐԱՆԱԼ, բ. rise; (ոտքի ելնել) rise to one's feet; (մագլցել. սարը ևն) climb, ascend; ◊ **աղմուկ** ~ become noisy; **աստիճաններով** ~ go upstairs, ascend the steps; **ավերակներից** ~ rise from the ruins; **մեկի աչքում** ~ rise in sb's opinion; **պաշտոնում** ~ advance; **գները** ~**ան** the prices went up/skyrocketed/soared; **խմորը** ~**ավ** the dough has risen; **ջերմաստիճանը** ~**ավ** the temperature rose, he has fever; *փիլք.* surpass, tower (above); **տրամադրությունը** ~**ավ** his spirits rose; ~**ող աստղ** rising star.

ԲԱՐՁՐԱՆՈՒՆ, ա. distinguished; (ականավոր) eminent; (նշանավոր) notable.

ԲԱՐՁՐԱՇԵՆ, ա. many-storied, multistorey, high, elevated.

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ, ա. talented, highly-gifted, most gracious.

ԲԱՐՁՐԱՉԱՓ, գ. *մաթ.* altimeter, hypsometer.

ԲԱՐՁՐԱՊԱՏԻՎ, ա. very honourable.

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ, ա. high-ranking, of high rank, titled.

ԲԱՐՁՐԱՍՐՈՒՆՔ, ա. long-legged.

ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, գ. *աշխրգ.* plateau (pl. -x), table-land, heights.

ԲԱՐՁՐԱՏԵՍԱԿ, ա. high-grade, of superior quality.

ԲԱՐՁՐԱՐԺԵՔ, ա. highly valuable, expensive.

ԲԱՐՁՐԱՐՎԵՍՏ, ա. highly artistic.

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ, բ. lift, raise, hoist, uplift, heighten; (վերցնել, վեր ~) pick up; (ազնվացնել) elevate, ennoble; ◊ **աղմուկ ~ ճիչ** ~ make a noise, set up a clamour; **աշխատանքի արտադրողականությունը** ~ raise labour productivity; **աչքերը** ~ lift one's eyes; **ապստամբություն** ~ excite/stir up rebellion; **բաժակ** ~ raise one's glass; **գլուխը վեր** ~ hold one's head up; **գները** ~ increase/raise prices; **դրոշ** ~ hoist a flag; *ծով.* make the colours; **երկու՝ երեք՝ չորս անգամ** ~ double, treble/triple, quadruple; **զգոնությունը** ~ increase/redouble/heighten one's vigilance; **զենք** ~ take up arms; **ծանր բան** ~ heave (up), hoist; **կարգապահությունը** ~ raise the standard of discipline; **կենսամակարդակը** ~ raise the standard of living; **հարց** ~ raise a question; **հինգ՝ վեց անգամ** ~ raise fivefold/quintuple, sixfold; **ձայնը** ~ raise one's voice; **ձեռքը** ~ raise one's hand; **մակարդակը** ~ raise to a (much) higher level; **նշանակությունը՝ կարևորությունը** ~ increase the significance (of); enhance the importance (of); **որակավորումը** ~ improve one's qualifications/one's (professional) skills; **պաշտոնը** ~ advance, promote; **վարագույրը** ~ raise the curtain, ring up the curtain, *դրժվ.*; **տագնապ** ~ raise the alarm; **(մեկի) տրամադրությունը** ~ cheer (sb) up; **օձիքը** ~ turn up one's collar; **փոշի** ~ raise dust.

ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, գ. raising, rise, rising, increase; (դրոշի) hoisting; (ծանրության) lifting; (խորտակված նավերի ևն) salvaging; ◊ **աշխատավարձի** ~ rise/increase in wages; **բերքատվության** ~ increasing of crop yield; **որակավորման** ~ improvement of one's (professional) skill; **պաշտոնի** ~ advancement, promotion.

ԲԱՐՁՐԱՔԱՆԴԱԿ, գ. high-relief.

ԲԱՐՁՐՅԱԼ, գ. *կրոն.* The Most High (God).

ԲԱՐՁՐԱՔԻԹ, ա. haughty, arrogant, conceited, supercilious; *խսկց.* stuck-up; ◊ ~ **մարդ** arrogant/conceited/haughty person.

ԲԱՐՁՐԱՐԱԿ, ա. high-quality, of high quality.

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, գ. height; (բարձունք) ridge, hill; (հողի մակերեսից) altitude; (ծովի մակերևույթից) height above sea level; (հնչյունի, ձայնի) pitch; (վեհություն) loftiness, elevation; ◊ **հավասար՝ նույն ~ության վրա լինել** be equal to sth, rise to the occasion; **պատշաճ ~ության վրա** up to the mark; **Ձերդ** ~ Your Eminence.

ԲԱՐՁՈՒՄ, գ. loading; (բեռ) charge, load, cargo; (նավի) shipment; *ռզմ.* embarkation.

ԲԱՐՁՈՒՆՔ, գ. ridge, hill, height; ◊ **լեռնային ~ներ** mountain heights; **երկնային** ~ the clouds.

ԲԱՐՅԱՑԱԿԱՄ, ա. well-disposed, kindly disposed, favourable, benevolent; ◊ ~ **մարդ** well-wisher, well-wishing person.

ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՐԵՆ, մ. benevolently, favourably, with favour.

ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ, գ. good faith, benevolence; (բարիություն) kindness, goodwill;

(բարեհաճություն) favour; ◊ **~ ցուցաբերել** favour (sb), regard with favour.

ԲԱՐՈՅԱԳԵՏ, գ. moralist, moral philosopher.

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ, ա. ethical.

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. ethics, moral philosophy.

ԲԱՐՈՅԱԶՐԿԵԼ, բ. demoralize; (անբարոյացնել) debauch; (անառականացնել) deprave; (փչացնել) corrupt.

ԲԱՐՈՅԱԶՐԿՎԵԼ, բ. grow/become profiligate/depraved/immoral, go to bad; (անբարոյանալ) get corrupted/demoralized; (անառականալ) grow/become dissipated; (փչանալ) grow/become corrupted, go bad.

ԲԱՐՈՅԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. depravity; (անբարոյականություն) immorality, amorality; (սանձարձակություն) dissoluteness; (փչացածություն) corruptness, corruption.

ԲԱՐՈՅԱԶՐԿՈՒՄ, գ. demoralization, seduction.

ԲԱՐՈՅԱԶՈՒՐԿ, ա. amoral, non-moral; (անբարոյական) immoral; (անառակ) depraved, dissipated; (սանձարձակ) dissolute; (փչացած) corrupt(ed).

ԲԱՐՈՅԱԼՔԵԼ, բ. demoralize.

ԲԱՐՈՅԱԼՔՈՒՄ, գ. demoralization.

ԲԱՐՈՅԱԽՈՍ, ա. moralist, moral philosopher.

ԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԿԱՆ, ա. moralizing.

ԲԱՐՈՅԱԽՈՍԵԼ, բ. reason, moralize, lecture sb, preach to sb.

ԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. moral philosophy; lecture, moral admonition.

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ա. moral, ethical.

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. morality.

ԲԱՐՈՅԱՊԵՍ, մ. morally.

ԲԱՐՈՎ, մ. *բրբ.* hi, hello; ◊ **~ գնաս** happy journey! farewell!; **~ եկաք** welcome; **~ - խերով** well, happily, safely; **~ մաշես** wear it with happiness!; **~ մնաս (ք)** good-bye, good luck! **~ տեսանք** glad to see you!

ԲԱՐՈՒՐԱԿ, ա. *բժշկ.* benign, non-malignant.

ԲԱՐՎԱՔ, ա. well-provided; ◊ **~ վիճակում** (գույքի մասին) in good state/repair; (մարդու մասին) well-off, well-to-do.; **~ լինել** be well-provided.

ԲԱՐՎԱՔԵԼ, բ. improve; (ուղղել, ճշտել) amend; (լավացնել) make better, better, ameliorate.

ԲԱՐՎԱՔՈՒՄ, գ. improvement; (լավացում) amelioration; (ուղղում) amendment.

ԲԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. kindness, goodness; (լավություն) good, good deed, goodwill; ◊ **մեկին ~ անել** be good to sb.

ԲԱՐՈՒՐ, գ. (շորերը) swaddling clothes; *ամ.* diaper; (երեխան) the baby in diapers, swaddled baby.

ԲԱՐՈՒՐԵԼ, բ. swaddle.

ԲԱՐՔ, գ. customs, morals and manners; ◊ **այլ ժամանակներ, այլ ~եր** other times, other ways.

ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ, գ. well-being, welfare, prosperity.

ԲԱՑ, ա. open, overt; (անկեղծ, չհետաք) frank; (ոչ գաղտնի) undisguised; (չլուծված) unsettled, open; *փիլ.* (բացահայտ) overt; (գույնի մասին) light; ◊ **~ աչքերով** with one's eyes open; **~ դուռ** open door; **~ երկնքի տակ** in the open air; **~ ընկերություն** public company; **~ ծով** open seas; **~ կապույտ** light-blue, sky-blue; **հանքամշակմամբ ~ եղանակ** open-cast mining; **~ նամակ** open letter; **~ շոր** low necked/cut dress; **~ սրտով** open-hearted; **~ վերք** open wound; **~ քվեարկություն** open ballot, vote by show of hands; **~ անել** *տե՛ս* ԲԱՑԵԼ; **~ թողնել՝ մնալ (հարցի մասին)** leave the question open; **~ թողնել** (ազատել) set free, release, let go/off; (հրապարակել) issue, publish; (հատկացնել, տրամադրել) supply, allot; (վրիպել, փախցնել) miss, let go/slip; (դուրս թողնել) leave out, omit; (արձակել) launch, give sth a start; **առիթը ~ թողնել** miss the opportunity, lose the chance; **հրթիռ ~ թողնել** launch a rocket; **պարապմունքները ~ թողնել** miss/skip a lecture/lesson; **ջուր՝ գազ ~ թողնել՝ չթողնել** leave the water running/the gas on.

ԲԱՑԱԿԱ, 1. ա. absent; 2. գ. (անձ) absentee; ◊ **~ (յող) ճանաչել** declare (as) absent; **~ները** those absent.

ԲԱՑԱԿԱՅԵԼ, բ. be absent, absent oneself; *իրավ.* make default; ◊ **~ող հայացք** vacant/blank look.

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. absence, absenteeism; (որևէ բանի) lack; ◊ **(անձի) ~թյան պատճառով** in the absence (of); **(որևէ բանի) ~թյան պատճառով** for lack (of); **(հանցանշանների) ~թյան պատճառով** in the absence of (criminal evidence); **ժամանակի՝ դրամի ~թյան պատճառով** for lack of time/money; **որևէ մեկի ~ թյան ընթացքում** in one's absence.

ԲԱՑԱԿԱՆԱՂԱԿԱՆ, ա. exclamatory; ◊ **~ նշան (՛)** exclamation mark, note/mark of exclamation(!).

ԲԱՑԱԿԱՆԱՂԵԼ, բ. exclaim, cry, shout.

ԲԱՑԱԿԱՆԱՂՈՒԹՅՈՒՆ, գ. exclamation, cry; ◊ **~ներ տեղից** cries from the audience.

ԲԱՑԱՀԱՅՏ, ա. evident; (ակնհայտ) obvious; (ակներև) manifest, patent; (չքողարկված) undisguised; ◊ **~ դժգոհություն** evident/obvious displeasure; **~ հիմարություն** downright/sheer nonsense; **~ սուտ** downright/barefaced lie.

ԲԱՑԱՀԱՅՏՈՐԵՆ, մ. obviously, apparently; (ակնհայտորեն) manifestly, openly.

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ, բ. reveal; (հայտնաբերել) disclose, discover; (լուսաբանել) bring to light;

(մերկացնել) unmask; ◊ **~ գաղտնիքը** expose; **փաստեր ~** reveal/elicit facts.

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ, գ. *քեր.* apposition.

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, գ. revelation, opening, finding; (հայտնաբերում) disclosure, disclosing, discovery.

ԲԱՑԱՌԱՆՁԱՐ } մ. (հատկապես)
ԲԱՑԱՌԱՊԵՍ } exceptionally; (միայն) exclusively, solely.

ԲԱՑԱՌԱԿԱՆ, ա. *քեր.* ablative.

ԲԱՑԱՌԵԼ, բ. exclude, except, rule out; ◊ **նախօրոք ~** preclude; **~ով** excepting, with the exception (of), barring; **~ով այն դեպքերը, երբ** except (in those cases), when.

ԲԱՑԱՌԻԿ, ա. exceptional; (արտակարգ) exclusive; ◊ **~ իրավունք** exclusive right, monopoly; **~ կարևորության գործ՝ դեպք** a case of exceptional importance; **~ օրենք** exceptional law.

ԲԱՑԱՌՎԵԼ, բ. be excluded, be ruled out; ◊ **դա ~վում է** this is out of the question; **դրա հնարավորությունը ~վում է** no such case is possible, it's impossible.

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. exclusion; (կանոնից ևն) exception; ◊ **~բյան կարգով** by way of (an) exception; **~բյամբ** with the exception (of); **առանց ~բյան** without exception.

ԲԱՑԱՍԱԲԱՐ, մ. negatively; ◊ **~ վերաբերվել** disapprove; **գլուխը ~ շարժել** shake one's head.

ԲԱՑԱՍԱԿԱՆ, ա. negative; (վատ, ոչ բարենպաստ) bad, negative, unfavourable; ◊ **~ ազդեցություն** bad influence; **~ ազդեցություն գործել** have an adverse effect on sb/sth, affect (sb/sth) adversely; **~ կարծիք՝ գրախոսական** negative/unfavourable criticism; **~ հերոս** negative character, anti-hero; *լեզվ.* **~ մասնիկ** negative particle; *մաթ.* **~ մեծություն** negative quantity; **~ պատասխան** negative answer.

ԲԱՑԱՍԵԼ, բ. deny; (ժխտել) negate; (չընդունել, հրաժարվել) disclaim; (հերքել) refute, disprove; ◊ **հեղինակությունը ~** disclaim authorship; *իրավ.* **մեղավորությունը ~** plead not guilty.

ԲԱՑԱՍՈՒՄ, գ. negation; (ժխտում) denial; (հերքում) refutation, disproof.

ԲԱՑԱՏ, գ. glade, clearing; (մարգագետին) lawn, grass-plot.

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ, գ. explanatory/elucidatory note.

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ, ա. explanatory, elucidative, elucidatory; ◊ **~ աշխատանք** explanatory work; **~ բառարան** explanatory dictionary.

ԲԱՑԱՏՐԵԼ, բ. explain; (մեկնաբանել) interpret, elucidate (to), construe; ◊ **խնդիրը՝ իմաստը ~** explain/elucidate the meaning/the problem, comment; **սեր ~** make a declaration of love; **օրինակով ~** exemplify (to), illustrate by an example, give an example.

ԲԱՑԱՏՐԵԼԻ, ա. explainable; (հասկանալի) understandable, explicable.

ԲԱՑԱՏՐՎԵԼ, բ. explain (oneself), be explained (by), be accounted for (by), be interpreted/construed; (պարզել իրար հետ) get clear, be cleared up, have it out (with); (բանակցել) have a talk (with); ◊ **նշաններով ~** converse (with sb) by signs, use sign language; **օտար լեզվով ~** speak a foreign language, make oneself understood in a foreign language.

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ, գ. explanation; (պատճառ) cause; (խոսակցություն) talk; (մեկնաբանություն) interpretation, commentary; *իրավ.* (կողմերի) pleading; ◊ **~ տալ** give an explanation (to), explain; **~ը գտնել** find the explanation/cause (of).

ԲԱՑԱՐԿ, գ. *իրավ.* rejection, challenge.

ԲԱՑԱՐԿԵԼ, բ. *իրավ.* object to sb's candidature, challenge sb.

ԲԱՑԱՐՁԱԿ, ա. absolute, unconditional; (լրիվ) utter, complete; (կատարյալ) perfect; (ակնհայտ) evident, obvious; ◊ **~ զրո** absolute zero; **~ լսողություն** perfect pitch; **~ հիմարություն** downright/sheer nonsense; **~ ճշմարտություն** absolute truth; **~ մեծամասնություն** absolute majority; **~ չեմպիոն** all-round champion, supreme/absolute champion; **~ սուտ** barefaced lie; **~ տգիտություն** perfect/sheer/utter ignorance.

ԲԱՑԲԵՐԱՆ, ա. gawk, gullible person.

ԲԱՑԲԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. gullibility, thoughtlessness.

ԲԱՑԵԲԱՑ, մ. frankly, openly, publicly.

ԲԱՑԵԼ, բ. open; (բացումը կատարել) inaugurate; (մերկացնել) bare, uncover; (սկիզբ դնել) make a start; ◊ **աչքերը ~** open one's eyes; **դուռը ~** open the door; **թերությունը ~** expose/lay bare shortcomings, discover/find out/reveal/bring to light (shortcomings); **իրերը ~** unpack; **խաղաքարտերը ~** show one's cards/game/hand; **խոսակցություն ~** start a conversation; **ծորակը ~** turn on a tap; **կապը՝ հանգույցը ~** untie, unbind, unknot; *ռազմ.* **կրակ ~** open fire, blaze into action; *տնտ.* **հաշիվ ~** open an account; **հուշարձան ~** unveil a monument; **ճանապարհ ~** build/construct/lay a road; **(մեկի առաջ) սիրտը ~** open one's heart (to sb); **նոր դարաշրջան ~** open/usher in a new era; **նիստը ~** open the session/sitting; **շիշը ~** uncork the bottle; **փակագծերը ~** remove the brackets.

ԲԱՑԹՈՂՈՒՄ, գ. omission; (բաց տեղ) blank, gap; (բաշխում) delivery, distribution; (դրամի՝ արժեթղթերի ևն) issue; (արտադրանքի) output; (գոլորշու) discharge,

emission; (արբանյակի) launch(ing); (ջրի) lowering, leakage.

ԲԱՑԻ, կ. besides; (բացառյալ, բացառությամբ) except, excepting, with the exception (of), apart from; ◊ **~ դրանից** besides (that), in addition, furthermore.

ԲԱՑԻԼ, գ. *կենս.* bacillus(pl.- li).

ԲԱՑԻԼԱԿԻՐ, ա. *բժշկ.* bacilli-carrier.

ԲԱՑԻԼԱՅԻՆ, ա. *բժշկ.* bacillary.

ԲԱՑԻԿ, գ. postcard; ◊ **գեղարվեստական ~** (picture/art) postcard.

ԲԱՑԻՉ, գ. opener, cork-screw.

ԲԱՑՈՎԻ, ա. folding; ◊ **~ սեղան աթոռ** folding table/chair; **~ կամուրջ** drawbridge.

ԲԱՑՈՐՈՇ, ա. definite; (ակնհայտ) evident; (ակներև) obvious.

ԲԱՑՎԱԾՔ, գ. opening; (անցք) aperture; (ծակ) hole; (հորանցք) borehole, boring well; *ճարտ.* (որմանցք) embrasure, orifice; (ճեղքվածք, ճեղք) breach, brake, gap, cleft, crevice; (դեպի ներս) inlet; (դեպի դուրս) outlet; ◊ **դռան լուսամուտի ~** doorway, window opening; *ճարտ.* **կամարի ~** bay; **կամուրջի ~** span, bridge span; **հագուստի ~** low neck; **թևերի ~** wing-span, wing-spread.

ԲԱՑՎԵԼ, բ. (բացահայտվել) come to light; (եղանակը պարզվել) clear up; (վերքի մասին) open, lance; ◊ **երկինքը ~վեց** the sky has cleared; **մեկի մոտ ~** confide in/to, open up to sb.

ԲԱՑՈՒՄ, գ. opening, throwing open; ◊ **հուշարձանի ~** inauguration/unveiling of a memorial; **փաթեթի ~** unpacking, unsealing; **~ման օր** opening day.

ԲԱՑՕԹՅԱ, ա. open-air, in the open air; ◊ **~ լողավազան** open-air swimming-pool/bath.

ԲԵԼԱՌՈՒՍ, գ. B(y)elorussian.

ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ, ա. B(y)elorussian.

ԲԵԼԱՌՈՒՍԵՐԵՆ, գ., ա., մ. B(y)elorussian, the B(y)elorussian language.

ԲԵԼԳԻԱԿԱՆ, ա. Belgian.

ԲԵԼԳԻԱՑԻ, գ. Belgian.

ԲԵԿԱՆԵԼ, բ. *իրավ.* annul, reverse; ◊ **դատավճիռ ~** reverse a judgment; **որոշում ~** overturn a decision.

ԲԵԿԱՆՈՒՄ, գ. cassation; ◊ **~ման տալ** appeal/take to the court of cassation.

ԲԵԿՈՐ, գ. fragment; (կտոր) piece, bit, shard; *հոգմ.* debris, wreakage; (ռումբի կն) splinter, shiver; ◊ **արկի ~** shell-splinter; **տոհմի՝ ժողովրդի՝ բնաջնջի ~** survivor.

ԲԵԿՈՒՄ, գ. turning point, sudden change; (հիվանդության մասին) crisis (pl. crises); ◊ **(մեծ) ~ման տարի** year of (great) changes; **~ման պահ** turning-point.

ԲԵՂ, գ. moustache; (կենդանու) whisker; (միջատի) feeler, antenna (pl. -ae); (բույսի) tendril; ◊ **~ի տակ ծիծաղել** smirk, grin; **~ի տակ մրմրալ** mutter, mumble.

ԲԵՂԱՎՈՐ, ա. moustached, with a (long) moustache; (կենդանու մասին) whiskered.

ԲԵՂԻԿ, գ. little/short moustache; (ելակի կն) runner.

ԲԵՂՄՆԱՎՈՐ, ա. fruitful, prolific; (արդյունավետ) productive; useful, helpful; ◊ **~ գործունեություն** fruitful/productive/prolific activity.

ԲԵՂՄՆԱՎՈՐԵԼ, բ. *կենս.* impregnate, fecundate; (սերմնավորել) inseminate; (փոշոտման միջոցով) pollinate.

ԲԵՂՄՆԱՎՈՐՎԵԼ, բ. get/become impregnated.

ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄ, գ. *կենս.* fecundation, impregnation; (սերմնավորում) insemination; (փոշոտում) pollination.

ԲԵՂՄՆԱՓՈՇԻ, գ. *բոտ.* pollen.

ԲԵՂՄՆԻԿ, գ. *կենս.* spore.

ԲԵՂՄՆԻԿԱՎՈՐ, ա. *կենս.* cryptogamous, cryptogamic.

ԲԵՄ, գ. stage, boards, scene; (բեմահարթակ, էստրադա) platform, scene, estrade; ◊ **~ դուրս գալ ելնել** go on (stage); **~ի վրա** on the stage; **~ի վրա լինել** be on (stage); **~ից իջնել հեռանալ** quit the stage, make the exit; **~ի հետևում** behind the scenes, backstage.

ԲԵՄԱԴՐԱԿԱՆ, ա. dramatic, theatrical, spectacular, stage.

ԲԵՄԱԴՐԵԼ, բ. stage, put on the stage, produce.

ԲԵՄԱԴՐՈՂ, գ. producer, stage-manager, (ռեժիսոր) director.

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, **ԲԵՄԱԴՐՈՒՄ** } գ. staging, production; (ներկայացում) performance, show, play.

ԲԵՄԱԿԱՆԱՑՆԵԼ, բ. stage, put on the stage, dramatize.

ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. dramatization, staging; **ԲԵՄԱՀԱՐԹԱԿ**, գ. stage, boards.

ԲԵՄԱԶԳԵՍ, գ. stage/scenic clothes.

ԲԵՄԱԿԱՆ, ա. scenic, stag(e)y, theatrical; ◊ **~ արվեստ** histrionic art, histrionics.

ԲԵՄԱՆԿԱՐ, գ. scenery, decoration, scene.

ԲԵՄԱՆԿԱՐԻՉ, գ. scene-painter.

ԲԵՄԱՐՎԵՍ, գ. histrionic art, histrionics.

ԲԵՄԶԱՐ, գ. footlights.

ԲԵՄԵԼ, գ. debut; ◊ **~ կատարել** make one's debut.

ԲԵՆԳԱԼՅԱՆ, ա. Bengal, Bengalese; ◊ **~ հուր՝ կրակ** Bengal light.

ԲԵՆԶԱԿԱՅԱՆ, գ. petrol pump/station, filling station, gas station.

ԲԵՆԶԱՏԱՐ, գ. (մեքենա) petrol lorry; *ամ.* gasoline truck; (նավ) tanker.

ԲԵՆԶԻՆ, գ. benzine; (ավտոմեքենայի հանույթ) petrol; *ամ.* gasoline, gas.

ԲԵՌ, գ. load; (ծանրություն) weight, burden; *փիլ.* (հոգս) burden, weight; ◊ **երկաթուղային ~** freight, goods; **ծանր ~** heavy burden; **ծովային ~** cargo, lading; **~ դառնալ՝**

լինել become/be a burden; **մեկի ուսերին ~ դնել** lay/put/place a burden on sb/sb's shoulders.

ԲԵՌՆԱԳԻՐ, գ. invoice, way-bill, bill of lading, consignment note.

ԲԵՌՆԱԹԱՓԵԼ, բ. unload, discharge, unlade; ◊ **նավը ~** discharge, unship, disembark; **գնացքը ~** detrain.

ԲԵՌՆԱԹԱՓՎԵԼ, բ. get unloaded.

ԲԵՌՆԱԹԱՓՈՒՄ, գ. unloading; (նավից) discharging, unshipping, disembarkation; (գնացքից) detraining; ◊ **~ող** unloader; **~ող նավ** lighter.

ԲԵՌՆԱԽՑԻԿ, գ. luggage/baggage compartment, boot.

ԲԵՌՆԱԿԻՐ, ւ. գ. porter, carrier; (բեռնող) loader; (նավահանգստում) stevedore; *ամ.* longshoreman; 2. ա. (բեռնատար) cargo, cargo-carrying; ◊ **~ նավ** freighter; **~ ավտոմեքենա** lorry, goods vehicle; *ամ.* truck.

ԲԵՌՆԱՀԱԿ, գ. package, bale.

ԲԵՌՆԱՄԲԱՐՁ, ա. crane, loader, hoist; ◊ **~ մեքենա** fork-lift truck.

ԲԵՌՆԱՆԱՎ, գ. barge, freighter.

ԲԵՌՆԱՄԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ, գ. carrying capacity, tonnage, hoisting capacity.

ԲԵՌՆԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. *տնտ.* goods/freight turnover/volume; ◊ **ծովային գետային տրանսպորտի ~** river-borne/sea-borne freight turnover/volume; **երկաթուղային տրանսպորտի ~** rail freight turnover/volume.

ԲԵՌՆԱՌԱՔԻՉ, գ. consigner, shipper.

ԲԵՌՆԱՌԱՔՈՒՄ, գ. shipping, (freight-) forwarding, dispatch, delivery.

ԲԵՌՆԱՎՈՐԵԼ, բ. load (with), lade, freight; *փխր.* burden (with); ◊ **գնացքը ~** load goods; **նավը ~** ship, load/put cargo on board the ship/aboard.

ԲԵՌՆԱՎՈՐՈՒՄ, գ. loading; (բեռ) load; ◊ **օգտակար՝ չահութաբեր ~** profitable/paying load.

ԲԵՌՆԱՏԱՐ, ա. cargo, cargo carrying; ◊ **~ ավտոմեքենա** lorry, goods vehicle; *ամ.* truck.

ԲԵՌՆԱՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. carrying capacity; (նավի) tonnage, freight-carrying capacity.

ԲԵՌՆԱՐԳԵԼՔ, գ. *մանգ.* (trade) embargo; ◊ **~ դնել** put/place an embargo (on).

ԲԵՌՆԱՐԿՂ, գ. container.

ԲԵՌՆԱՔԱՐՇ, ա. dray; ◊ **~ սայլորդ** drayman, carter; **~ ձի** cart-horse, dray-horse, draught-horse.

ԲԵՌՆԵԼ, բ. load (with); (նավը մարդկանցով) embark; (գնացքը) entrain; (ինքնաթիռը) emplane; (կենդանուն) pack.

ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. loading; ◊ **լրիվ ~** full-time job/loading; **ոչ լրիվ ~** half/part-time job/loading.

ԲԵՌՆՈՒՄ, գ. loading, load, charge, shipping; (նավի) shipment; *ռզմ.* embarkation.

ԲԵՎԵԿՆ, գ. turpentine.

ԲԵՎԵԿՆԱԽԵԺ, գ. colophony, rosin.

ԲԵՎԵԿՆԱՅՈՒՂ, գ. oil/spirit of turpentine.

ԲԵՎԵՌ, գ. pole; *փխր.* (հակադիր երևույթներ՝ ամձեր) two poles; ◊ **Հյուսիսային ~** North/Arctic Pole; **Հարավային ~** South/Antarctic Pole; **մագնիսական ~** magnetic pole.

ԲԵՎԵՌԱԲՆԱԿ, գ. inhabitant of arctic/polar regions.

ԲԵՎԵՌԱԳԻԾ, գ. polar/arctic circle.

ԲԵՎԵՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. science of poles/polar regions, polar science.

ԲԵՎԵՌԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, գ. exploration/research of polar/arctic regions.

ԲԵՎԵՌԱԽՈՒՅԶ, գ. polar explorer, member of polar expedition.

ԲԵՎԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. polarity.

ԲԵՎԵՌԱՅԻՆ, ա. polar, arctic; ◊ **~ արշավախումբ** expedition to the polar/arctic regions, polar/arctic expedition; **~ գիշեր** polar night.

ԲԵՎԵՌԱՆԱԼ, բ. *ֆիզ.* polarize.

ԲԵՎԵՌԱՍՏՂ, գ. the North Star.

ԲԵՎԵՌԵԼ, բ. nail; (գամել) nail down, rivet; (սեեռել) fix; ◊ **հայացքը ~** fix one's gaze on, stare at.

ԲԵՏՈՆ, գ. concrete.

ԲԵՏՈՆԱԳՈՐԾ, գ. concrete worker.

ԲԵՏՈՆԱԽԱՌՆԻՉ, գ. *տնխ.* concrete mixer.

ԲԵՏՈՆԱՊԱՏԵԼ, բ. concrete, pour concrete.

ԲԵՏՈՆԵ, ա. concrete.

ԲԵՐԱԾՈ, ա. alluvial.

ԲԵՐԱՆ, գ. mouth; (երախ) mouth, jaws; (բացվածք) opening, entrance; (եզր. դանակի կն) edge, blade; ◊ **անտառի ~** border, edge of the forest; **գետի ~** estuary, river mouth, issue; **հրացանի ~** muzzle; **շշի ~** neck (of the bottle); **կես ~** through clenched teeth; **~ ծռել** bow low, sue for a favour, bow and scrape; **~ չառնել** not touch; **~ չբացել** not open one's lips/mouth; **~ը գինի չի առնում** he never touches wine; **~ը բաց մնալ** stand agape/open-mouthed; **~ը ջուր առնել՝ առած** not to say a word, be silent as the grave; **~ փակել (կաշառել)** give hush-money; **երեք ~ են** they are a family of three, he has three mouths to feed; **~ի խոռոչ** oral cavity; **~ի ծամոն դառնալ** become the talk of the town; **~ի համը գիտենալ** know what's good, know on which side one's bread is buttered; **~ին սանձ դնել** keep a still tongue in one's head, hold one's tongue; **~ով շնչել** breathe through the/one's mouth; **ամբողջ ~ով հորանջել** give wide yawns, yawn one's head off; **~ից թռցնել փախցնել** let out a secret, *խսկզ.* blab; **~ից կաթի հոտ է գալիս** he is too young/green/

just a baby; **~ից կտրել** stint oneself in everything; **ինչ ~ը գալիս է** loosen the tongue, what's on his mind is on his tongue; **մեկի ~ը փակել** shut sb up.

ԲԵՐԱՆԱՅԻ, մ. by heart/rote: (բանավոր) oral, verbal; ◊ **~ ասել** recite (from memory); **~ իմանալ** know by heart/rote, know from (one's) memory.

ԲԵՐԱՆԲԱՑ, 1. ա. agape, open-mouthed; (ապշած) stunned, stupefied; (հիացած) enchanted; (շշմած) flabbergasted; 2. գ. (անձ) gaper, scatter-brain; (հիմար) gawk; (անգաղտնապահ մարդ) gullible person.

ԲԵՐԱՆԲԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. thoughtlessness; (անգաղտնապահություն) gullibility.

ԲԵՐԱՆՓԱԿ, ա. taciturn, silent, discreet; (գաղտնապահ) secretive; (համեստ) modest, humble; ◊ **~ լինել** be secretive/discreet about.

ԲԵՐԱՆՔՍԻՎԱՅՐ, ա. prone; ◊ **~ ընկնել** lie prone, lie face down.

ԲԵՐԴ, գ. stronghold; (ամրոց) castle; *ռզմ.* fortress.

ԲԵՐԴԱՊԱՏՈՒՄ, գ. *ռզմ.* rampart.

ԲԵՐԴԱՊԱԿԱԼ, գ. commandant.

ԲԵՐԴԱՅԻՆ, ա. stronghold; ◊ **~ ամրություններ** fortifications.

ԲԵՐԴԱՆԿՈՒՂ, գ. cell, ward.

ԲԵՐԴԱՊԱՀ, գ. guard; (զորքը) castle/fortress garrison, garrisoned troops.

ԲԵՐԴԱՊԱՐԻՍՊ, գ. fortress, fortifications.

ԲԵՐԵԼ, բ. bring, fetch; ◊ **արդյունքի ~** lead to results, result (in); **(որպես) ապացույց ~** adduce; **ապացույցներ ~** produce proofs; **գլուխ ~** carry through, manage; **երեխա ~** give birth to a child, bear a child, bring forth children; **երջանկություն՝ դժբախտություն ~** bring luck/misfortune; **զոհ ~** sacrifice, make a sacrifice; **խելքի ~** bring to reason; **ծանրոց՝ փաթեթ ~** deliver a parcel; **կարգի ~** put in order, arrange; **ձեռք ~** get, obtain, acquire; **նվեր ~** make a present, present; **շահույթ՝ եկամուտ ~** bring in returns; **պտուղ ~** yield/bear fruit; **վկա ~** call sb to witness; *իրավ.* subpoena (as) a witness; **վնաս ~** cause damage; **ուշքի ~** bring to senses/sb round; **օգուտ ~** be of use/benefit (to); **օրինակ ~** give an example; **ճանապարհը գյուղ ~եց** the road took us to/led to the village.

ԲԵՐԿՐԱԼԻ(Ր) } ա. rapturous; (ուրախ)
ԲԵՐԿՐԱԼԻՑ } jolly; (խանդավառ) enthusiastic; (ցնծալից) joyful, joyous; (զվարթ) merry, cheerful.

ԲԵՐԿՐԱՆՔ, գ. delight, ecstasy; (ցնծություն) mirth, joyfulness; (զմայլանք) rapture; (խանդավառություն) cheerfulness, enthusiasm; ◊ **~ի մեջ լինել** be delighted (with), rejoice, be enraptured (with).

ԲԵՐՆԵԲԵՐԱՆ, 1. ա. to the brim, brimful; ◊ **~ լիքը** full to the brim, brimful; 2. մ. (բանավոր ձևով) by word of mouth, transmitted/passed orally.

ԲԵՐՈՎԻ, ա. imported; ◊ **~ ապրանք** imported goods.

ԲԵՐՐԻ, ա. fertile, fecund; ◊ **~ հող** rich/fertile soil.

ԲԵՐՐԻՈՒԹՅՈՒՆ, գ. fertility, fecundity.

ԲԵՐՔ, գ. harvest, yield, crop; *փխր.* (արդյունք) fruit, result; ◊ **հարուստ ~** big/heavy harvest/crop; **~ հավաքել** gather in/ reap the harvest.

ԲԵՐՔԱՀԱՎԱՔ, գ. harvest(ing), gathering in; ◊ **բամբակի ~** cotton-picking.

ԲԵՐՔԱՄԱՍ, ա.good/abundant crop, bumper crop; ◊ **~ տարի** good year for the crops, productive year, bumper-crop year.

ԲԵՐՔԱՍՎՈՒԹՅՈՒՆ, գ. fruitfulness, crop yield; ◊ **բարձր ~** good (crop) yield; **~ի բարձրացում** increase in crop yield.

ԲԵՐՔԱՏՈՒ, ա. fruitful, fertile.

ԲՂԵՋ, գ. beetle, bug; ◊ **մայիսյան ~** May-bug, cock-chafer.

ԲՂԵԼ, բ. poke (into), prod (with); (հրել) push, shove; *փխր.* (հրահրել) incite (to), instigate (to); ◊ **արմունկով ~** nudge, elbow; **ուժեղ ~** jab.

ԲՂՂԱԼ, բ. hum, buzz, drone.

ԲՂՂՅՈՒՆ } գ. hum, buzz, drone.
ԲՂՂՈՑ

ԲՂԿՏԵԼ, բ. tear up; (սիրտը, հոգին) rend, lacerate, tear; ◊ **իրար ~** wrangle, squabble.

ԲԹՆԿՏՈՒՑ, գ., ա. *կենդ.* blunt-nosed.

ԲԹԱՄԱՍ, գ. thumb.

ԲԹԱՄԻՏ, ա. dull-brained, thick; գ. (դպրոցականի մասին) dunce, dolt; ◊ **~ մարդ** numskull, blockhead, dunderhead.

ԲԹԱՄՏՈՒԹՅՈՒՆ, գ. dullness, obtuseness; (հիմարություն) stupidity.

ԲԹԱՆԱԼ, բ. get/grow stupid/dull; be in a torpor (հիշողության՝ ցավի մասին) deaden, grow/become dull; (դանակի նևի մասին) grow/become/get blunt.

ԲԹԱՅՆԵԼ, բ. dull; (ցավը) deaden; (դանակը նև) blunt, dull, take the edge off; ◊ **զգոնությունը ~** lull/blunt sb's vigilance.

ԲԹԱՅՈՒՄ, գ. stupefaction; (անզգայացում, ընդարմացում) torpor.

ԲԹՈՒԹՅՈՒՆ, գ. dullness, obtuseness, bluntness.

ԲԺԻՇԿ, գ. doctor, physician; (ընդհանուր հիվանդությունների) general practitioner; (վիրաբույժ) surgeon; ◊ **զինվորական ~** medical officer; *ամ.* army surgeon; **~ հրավիրել** call a/the doctor; **~ի(ն) դիմել** consult a/the doctor.

ԲԺՇԿԱԿԱՆ, ա. medical, medicinal; ◊ **~ ինստիտուտ** medical institute/college/school/university; **~ համայց կատարել**

make/go one's rounds; ~ **միջոցներ** medicines, drugs, medication; ~ **վկայական** medical certificate; ~ **քննություն** medical inspection/examination, a physical; ~ **քույր** (hospital) nurse; ~ **օգնություն** medical aid/service/assistance.

ԲԺՇԿԵԼ, բ. treat (medically); (բուժել. արդյունքը) cure; (ամոքել) heal; ◊ ~ **որևէ հիվանդություն** treat for an illness; **մեկին ինչ-որ բանից** ~ cure sb of sth.

ԲԺՇԿՎԵԼ, բ. undergo a cure; (բուժվել) be/get cured (of), recover (from), heal, be healed; ◊ **որևէ բանից** ~ receive treatment for sth, recover from/be healed of sth.

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, գ. medicine.

ԲԺՇԿՈՒՀԻ, գ. (woman) doctor.

ԲԺՇԿՈՒՄ, գ. (medical) treatment.

ԲԻԲ, գ. *կզմխս.* pupil (of the eye).

ԲԻԶ, *բյբ.* 1. գ. awl; 2. ա. (սրածայր) pointed, sharp; ◊ **բզով ծակած աչքեր** very small/hardly visible eyes; ~**ը տուպրակում չես պարտակի** murder will out.

ԲԻԼԻԱՐԴ, գ. billiards; snooker; ◊ ~**ի մի պարտիա խաղ** a game of billiards.

ԲԻԾ, գ. spot; patch, blot, stain; (ցան) rash; (հեղինակության վրա) blemish; ◊ **աճարգանքի** ~ stigma, speck, speckle; արևի բծեր sunspots; ~ **թողնել** stain, blotch; ~**ը մաքրել** remove/take out stains.

ԲԻՈՔԻՄԻԱ, գ. biochemistry.

ԲԻՈՖԻԶԻԿԱ, գ. biophysics.

ԲԻՐՏ, ա. rough, course; (գռեհիկ) gross; (անքաղաքավարի) rude; (դաժան, անգութ) brutal.

ԲԼԱՆԴԵԼ, բ. baste.

ԲԼԱՆԴՈՒՄ, գ. basting, tacking.

ԲԼԲԼԱԼ, բ. chatter, rattle on, rumble; (շաղակրատել) jabber; (դատարկաբանել) twaddle; (թոթովել. երեխայի մասին) babble, prattle.

ԲԼԲԼԻՑ, գ. chatter, babble; (շաղակրատանք) jabber, twaddle.

ԲԼԹԱԿ, գ. *կզմխս.* lobe of the ear; *ոզմ.* (ձգան) cock, cocking piece, trigger.

ԲԼԻԹ, գ. pancake, flatcake, cookie; *փխբ.* (բշտիկ) blister.

ԲԼՂՈՒՐ, գ. crushed wheat, bulgar.

ԲԼՐԱԳԱԳԱԹ, գ. hill-top.

ԲԼՐԱԼԱՆՋ, գ. hill-side.

ԲԼՐԱԿ, գ. hillock, mound, knoll.

ԲԼՐԱՁԵՎ } ա. hill-shaped.
ԲԼՐԱՆՄԱՆ }

ԲԼՈՒՋ, գ. blouse.

ԲԼՈՒՐ, գ. hill, knoll.

ԲԽԵԼ, բ. (հոսել, դուրս հորդել) flow/run out; (ծագել, սկիզբ առնել) issue/come from; (հիմնված լինել) proceed (from); (հանգել, հետևել) result, follow, ensue; ◊ **այստեղից ~ում է** (hence) it follows, it follows from this, hence; **շահերից** ~ be driven by one's interests.

ԲԽԿԱԼ, բ. belch.

ԲԽԿՈՑ, գ. belching, eructation.

ԲԾԱԽՆԴԻՐ, 1. ա. pedantic, punctilious; (մանրախնդիր) (over) particular, captious, fault-finding; 2. գ. (անձ) pedant, prig.

ԲԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. pedantry, punctiliousness; (մանրախնդրություն) captiousness, nagging; (ծայրահեղ ուշադրություն) utmost/utter consideration.

ԲԾՎՈՏ, ա. spotty, spotted, blotched, dappled; ◊ *բժշկ.* ~ **տիֆ** typhus, spotted fever, ~ **բորենի** *կենդ.* spotted hyena.

ԲԿԼԱՏ } ա. voracious; (որկրամոլ)
ԲԿԼԻԿ } gluttonous; (անկուշտ) insatiable.

ԲԿԼԱՏՈՒԹՅՈՒՆ } գ. voracity,
ԲԿԼԻԿՈՒԹՅՈՒՆ } voraciousness; (որկրամոլություն) gluttony; (անկշտություն) insatiability.

ԲՂԱՎԵԼ, բ. cry, shout, give a cry; (բղավելով աղմկելով պահանջել) clamour; (շատ բարձր) bawl, vociferate, outcry; (գոռալ) vociferate; (սուր, զիլ) scream, yell; ◊ **մեկի վրա** ~ shout/yell/scream at sb.

ԲՂԱՎԻՑ, գ. cry, shout; (գոռոց) shouting, clamour; (բարձր) outcry; (զիլ) yell, scream.

ԲՅԶԱՆԴԱԿԱՆ, ա. Byzantine; ◊ ~ **կայսրություն** Byzantine Empire.

ԲՅԶԱՆԴԱՑԻ, գ. Byzantine, inhabitant of Byzantium (or Constantinople).

ԲՅՈՒՋԵ, գ. budget; ◊ ~**ի եկամտային մասը** (budget) revenue; ~**ի ծախսի ելքի մասը** (budget) expenditure; ~**ի սահմաններից դուրս գալ** overspend one's budget, go over one's budget; ~**ով նախատեսել** budget for sth, include in the budget.

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ա. budgetary; ◊ ~ **հոդված** budget item; ~ **պլան** budget estimates; ~ **տարի** fiscal/budget year.

ԲՅՈՒՐ, 1. ա. myriad, countless, innumerable, numberless, incalculable; 2. թ. *հնց.* (տասը հազար) ten thousand.

ԲՅՈՒՐԱՊԱՏԻԿ, *մ.* ten thousand times, thousands of times.

ԲՅՈՒՐԱՎՈՐ, *տե՛ս* ԲՅՈՒՐ 1:

ԲՅՈՒՐԵՂ, գ. crystal; ◊ **լեռնային** ~ rock crystal; ~**ի նման թափանցիկ** crystal-clear.

ԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ, ա. crystal; *փխբ.* (վճիտ, մաքուր) crystal-clear; *փխբ.* (անբիծ) unstained, stainless; ◊ ~ **մաքրություն** crystal purity.

ԲՅՈՒՐԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. crystallography.

ԲՅՈՒՐԵՂԱԳՈՐԾ, գ. glass-cutter, crystal-cutter.

ԲՅՈՒՐԵՂԱՊԱԿԵ } ա. crystal, cut-glass.
ԲՅՈՒՐԵՂԱՊԱԿՅԱ }

ԲՅՈՒՐԵՂԱՊԱԿԻ, գ. cut-glass, crystal; *հվք.* cut-glass ware.

ԲՅՈՒՐԵՂԱՑՆԵԼ, բ. crystallize.

ԲՅՈՒՐՈԿՐԱՏ, գ. bureaucrat, red-tapist; (ձևապաշտ, բծախնդիր) pedant.

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱԿԱՆ, ա. bureaucratic, red-tape; ◊ **~ քաշքշուկ** red-tape, bureaucracy, procrastination.

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱՆԱԼ, բ. become a bureaucrat.

ԲՅՈՒՐՈԿՐԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. red-tape, bureaucracy.

ԲՆԱԲԱՆ, գ. epigraph; (նշանաբան) motto.

ԲՆԱԳԱՎԱՌ, գ. field, sphere, province, section, domain; (ճյուղ) branch; ◊ **արտաքին քաղաքականության ~** the sphere/area of foreign policy; **գիտելիքների ~** field/sphere of knowledge; **կյանքի բոլոր ~ներում** in all spheres/walks of life.

ԲՆԱԳԵՏ, գ. scientist, naturalist, natural historian.

ԲՆԱԳԻԾ, գ. boundary, border(-line), line; ◊ **պաշտպանական ~** defensive line; **նոր ~ ևլաճել գրավել** make fresh gains/advances.

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (natural) science(s).

ԲՆԱԳԻՐ, գ. text, original; ◊ **~ ով կարդալ** read in the original.

ԲՆԱԶԴ, գ. instinct; ◊ **ինքնապահպանման ~** survival instinct, self-preservation instinct.

ԲՆԱԶԴԱԲԱՐ, մ. instinctively.

ԲՆԱԶԴԱԿԱՆ, **ԲՆԱԶԴԱՅԻՆ** } ա. instinctive; ◊ **~ շարժում** instinctive movement.

ԲՆԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, գ. Nature study, Natural history.

ԲՆԱԽՈՒԶ, գ. scientist, naturalist.

ԲՆԱԾԻՆ, ա. innate, inborn, native; (ապատների մասին) congenital; ◊ **~ թերություն պակասություն** inborn defect; **~ ունակություններ** natural/innate/inherent abilities.

ԲՆԱԿԱՆ, ա. natural; (ոչ արհեստական) real, genuine; ◊ **~ գիտություններ** natural sciences; **~ երևույթներ** natural phenomena; *կեն.* **~ ընտրություն** natural selection; **~ հարստություններ** natural resourses; **~ մեծությամբ** life-size; **~ մետաքս** natural silk; **~ պայմաններ** natural conditions; **~ տարերք** the elements; **~ օրենք** law of nature, natural laws; **~ից** from birth.

ԲՆԱԿԱՆԱԲԱՐ, մ. naturally; (անկասկած) of course, certainly, no doubt; (անշուշտ) to be sure, surely; *ամմ.* sure.

ԲՆԱԿԱՆՈՆ, ա. normal, natural; (կանոնավոր) regular.

ԲՆԱԿԱՎԱՅՐ, գ. settlement, populated area, habitat; (բնակատեղ) residence, dwelling-place, habitat, abode.

ԲՆԱԿԱՏԵՂ(Ի), գ. residence, dwelling, habitation.

ԲՆԱԿԱՐԱՆ, գ. flat, apartment; (բնակատեղ) residence, dwelling; ◊ **նոր ~ տեղափոխվել** move to a new flat/place (of residence); **~ի տեր** landlord, flatowner; (կին) landlady.

ԲՆԱԿԱՐԱՆԱՄՈՒՏ, գ. house-warming; (խնջույքը) house-warming party; ◊ **~ կատարել** give a house-warming (party).

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ, ա. flat, apartment; ◊ **~ իրավունք** housing law; **~ շահագործման ծառայություն** maintenance service.

ԲՆԱԿԱՐԱՆԱՎԱՐՁ, գ. rent.

ԲՆԱԿԵԼԻ, ա. dwelling; (մարդաբնակ) inhabited; (բնակության համար պիտանի) habitable; ◊ **~ թաղամաս** residential district; **~ շենք** dwelling/apartment house/building/highrise, block of flats; **~ տարածություն** dwelling space, floor space.

ԲՆԱԿԵՑՆԵԼ, բ. populate, people, settle; (տեղավորել) lodge; ◊ **բնակեցված սենյակ** inhabited room.

ԲՆԱԿԻՉ, գ. inhabitant, resident, dweller; *իրավ.* occupant; ◊ **գյուղի ~** villager, countryman; *հվբ.* country folk, countrypeople; **հիմնական ~** native, indigene; **քաղաքի ~** city dweller, townsman, town-dweller; *հվբ.* townsfolk, townspeople.

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, գ. population, inhabitation; ◊ **~ության խտություն** population density.

ԲՆԱԿՎԱՐՁ, գ. *հպվ.* rent.

ԲՆԱԿՎԵԼ, բ. inhabit, dwell (in a place), live, reside; (ժամանակավոր) stay, sojourn.

ԲՆԱԿՏԻՐ, գ. *երկրբ.* native/virgin metal, native ore; *փիլ.* (մարդու մասին) a person of natural gifts; ◊ **ոսկու ~** gold nugget.

ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. residence, occupation; (բնակավայր) place of residence, domicile; ◊ **~ության թույլտվություն** residence permit; **~ հաստատել** settle, lodge, take up one's residence/quarters, make one's home; **մշտական ~ ունենալ** be domiciled in.

ԲՆԱՀԱՐԿ, գ. duty paid in kind.

ԲՆԱՀՈՂ, գ. *մանգ.* soil.

ԲՆԱՁԱՅՆԱԿԱՆ, ա. onomatopoeic; ◊ **~ բառ** onomatopoeic word.

ԲՆԱՆԿԱՐ, գ. landscape painting.

ԲՆԱՆԿԱՐԻՉ, գ. landscape painter/artist.

ԲՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գ. landscape painting.

ԲՆԱՇԽԱՐՀ, գ. nature, flora and fauna; (հայրենիք) motherland, fatherland, native land, mother country.

ԲՆԱՊԱՇՏ, գ. pantheist.

ԲՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. pantheism.

ԲՆԱՋՆՋԵԼ, բ. destroy, annihilate, exterminate.

ԲՆԱՋՆՋՈՒՄ, գ. destruction, annihilation, extermination.

ԲՆԱՎ, մ. never; (ամենևին) not in the least, not at all, not a bit; ◊ **~ երբեք** on no account, by no means, never ever.

ԲՆԱՎԱՐՁ, **ԲՆԱՎՃԱՐ** } գ. payment in kind.

ԲՆԱՎԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. character, nature, temperament, disposition; ◊ **ծանր ~** difficult nature; **մեղմ ~** mild temper; **մոայլ**

~ sullen disposition; **չիտակ** ~ straightforwardness; **վատ** ~ bad character/nature; **վճռական** ~ resolute temper; **ուժեղ** ~ strong character; **ուրախ** ~ cheerful disposition; **~բյան գիծ** trait, streak; **ուժեղ ~բյան տեր մարդ** strong-willed person.

ԲՆԱՏՈՒՐ, ա. innate, inborn, native; ◊ **~ ունակություններ** natural/innate/inherent abilities.

ԲՆԱՓԱՅՏ, գ. wood.

ԲՆԻԿ, I. գ. aboriginal (pl. aborigines), native, indigene; 2. ա. indigenous.

ԲՆՈՐԴ(ՈՒԹի), գ. model.

ԲՆՈՐՈՇ, ա. characteristic; (հատկանշական) typical; (յուրահատուկ) distinctive; (առանձնահատուկ) peculiar/particular (to); (ներհատուկ) inherent, specific.

ԲՆՈՐՈՇԵԼ, բ. characterize, qualify, define.

ԲՆՈՐՈՇԻՉ, ա. characteristic, typical.

ԲՆՈՐՈՇՈՒՄ, գ. characterization, definition; (որակում) qualification.

ԲՆՈՒԹԱԳԻՐ, գ. character reference, testimonial; ◊ **(որևէ մեկին) ~ տալ** give (sb) a testimonial.

ԲՆՈՒԹԱԳՐԵԼ, բ. characterize, define, qualify.

ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ } գ. characterization,
ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ } testimonial.

ԲՆՈՒԹՅՈՒՆ, գ. nature; ◊ **~ից** from/by nature, naturally; **~բյան գրկում** in the lap of nature; **~բյան պահպանություն** nature conservation; **~բյան օրենք** law of nature.

ԲՆՈՒՅԹ, գ. nature, character, essence; ◊ **լուրջ ~ կրել** take a grave/threatening turn; **պաշտոնական ~ ստանալ** become official; **հասարակական հարաբերությունների ~ը** the nature of social relations.

ԲՆՕՐԻՆԱԿ, գ. original.

ԲՆՕՐՐԱՆ, գ. *փխբ.* cradle.

ԲՇՏԻԿ, գ. blister; (թարախապալար) abscess, boil; (պիսակ, պզուկ) pimple, blotch; *բժշկ.* pustule.

ԲՇՏԻԿԱՎՈՐ, ա. pimpled, pimply, blotchy.

ԲՈԲԻԿ, ա. barefoot(ed); *փխբ.* (տգետ) ignorant, narrow(-minded), hide-bound; ◊ **~ ոտքին** (on) barefoot.

ԲՈԲԻԿԱՆԱԼ, բ. go barefoot, unclothe one's feet.

ԲՈԲԻԿՈՒԹՅՈՒՆ, գ. barefootedness, *փխբ.* (տգիտություն) ignorance, narrow-mindedness.

ԲՈՀ, գ. grievous/mournful/wistful/ominous/evil news.

ԲՈՀԱԲԵՐ, ա. ill-boding, ill-omened.

ԲՈԺԻԺ, գ. cocoon; (զանգակ) a little bell, bauble; (բամբակի կնգուղ) boll; ◊ **մետաքսի ~** silk cocoon.

ԲՈԼՈՐ, դ., ա., մ. all, the whole of, in entirety, entirely; ◊ **~ը (ամեն ոք)** everybody, everyone; **~ը (ամեն ինչ)** everything; **~ը միասին** all together; **չորս ~ը** around, all around; **տարին ~** the whole year round, all the year round.

ԲՈԼՈՐԱԳԻԾ, գ. border, edging.

ԲՈԼՈՐԱԿ, I. ա. round; 2. գ. (շրջան) circle, sphere; ◊ **~ երես** round face; **արևի ~ը** sun disk.

ԲՈԼՈՐԱՁԵՎ } ա. circular, spherical,
ԲՈԼՈՐԱԿԱՁԵՎ } round.

ԲՈԼՈՐԵԼ, բ. (շրջան կազմել) make a circle; (լրանալ) elapse, expire; ◊ **նրա տասը տարին ~եց՝ ~վեց** he is ten years of age.

ԲՈԼՈՐՎԵԼ, բ. (հավաքվել) gather, assemble.

ԲՈԼՈՐՈՎԻՆ, մ. (ամբողջովին) quite, entirely, totally, perfectly; (ամենևին, բնավ) not at all, not a bit, not in the least, absolutely, utterly; ◊ **~ անսպասելի** quite unexpected; **~ մերկ** stark naked.

ԲՈՂԲՈՋ, գ. bud, leaf-bud, sprout, shoot; *բնաբ.* burgeon; ◊ **~ներ արձակել** sprout, shoot, bud.

ԲՈՂԲՈՋԵԼ, բ. sprout, shoot, bud; (ծաղկել) blossom out, open.

ԲՈՂԲՈՋՈՒՄ, գ. budding, sprouting, shooting.

ԲՈՂԿ, գ. radish.

ԲՈՂՈՔ, գ. protest, remonstrance; (գանգատ) complaint; ◊ **~ հայտարարել** protest (against), remonstrate (against); **~ ներկայացնել** register/enter a protest; **~ի ճիչեր** outcries; **~ի գիրք** book of complaints; *խսկց.* moaner; **~ների բյուրո** complaints office.

ԲՈՂՈՔԱԿԱՆ, գ., ա. Protestant.

ԲՈՂՈՔԱՐԿԵԼ, բ. *իրավ.* appeal (against the decision of a court); (բողոքել) protest, appeal.

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ, գ. *իրավ.* appeal; ◊ **~ը մերժել** dismiss an appeal; **~ման դատարան** Court of Appeal(s), Appellate Court; **~ման ենթակա չէ** not subject to appeal.

ԲՈՂՈՔԵԼ, բ. protest (against), make a protest (against); (առարկել) object (to, against), remonstrate (against); (գանգատվել) make a complaint (to, about), lodge a complaint (with, about), complain (to, of); ◊ **ինչի՞ց եք ~ում** what do you complain of? what is your grievance/complaint?

ԲՈՅԿՈՏ, գ. boycott; ◊ **~ հայտարարել** set up a boycott against (sb).

ԲՈՄ, գ. gadfly.

ԲՈՄԲՈՐ(ԱԳՈՒՅՆ), ա. crimson.

ԲՈՍՏԱՆ, գ. melonfield; (բանջարանոց) kitchen-garden.

ԲՈՎԱՆԴԱԿ, ա. all, the whole of, inclusive; ◊ **~ աշխարհ** all the world, the whole world.

ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ, ա. pithy, meaningful; *խսկց.* meaty.

ԲՈՎԱՆԴԱԿԵԼ, բ. contain, hold.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. contents; (էություն) matter, substance; (թեմա, նյութ) subject-matter; (գանկ) contents; ◊ **կարճ ~** summary, abstract; **ձև և ~** form and content.

ԲՈՎԵԼ, բ. roast; *փխբ.* (կոփել, կլանքի բովով

անցկացնել) harden, strengthen, go through fire and water/thick and thin.

ԲՈՐ[1], գ. *բժշկ.* leprosy; *փխր.* (քոր) itch, scab.

ԲՈՐ[2], գ. *քիմ.* boron.

ԲՈՐԱԹԹՈՒ, գ. *քիմ.* boric/boracic acid.

ԲՈՐԱԿ, գ. *քիմ.* borax, saltpetre, nitre.

ԲՈՐԱՆ, *տես* ԲՈՒՔ:

ԲՈՐԲ, ա. bright; (շիկակարմիր) red-hot; (բոցավառ) flaming; (կրակի մասին) blazing.

ԲՈՐԲՈՍ, գ. mould, mildew.

ԲՈՐԲՈՍՆԱԾ, ա. mouldy, mildewed.

ԲՈՐԲՈՍՆԵԼ, բ. grow mouldy/musty.

ԲՈՐԲՈՔԱՅԻՆ, ա. *բժշկ.* inflammatory; ◊ ~ **պրոցես՝ ընթացք** inflammatory process. inflammation.

ԳԻՐԿ, գ. embrace, arms; (ընդերք) depths, bowels of the earth; (բնության, ժողովրդի) bosom, lap; ◊ **~ը բացել** open one's arms; **~ի առնել** hold sb in one's arms, embrace; **մեկի ~ը նետվել ընկնել** throw oneself, կամ, fall into sb's arms; **բնության ~ում** in the lap of nature, in the open air.

ԳԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. stoutness, corpulence; (չափազանց) obesity; (կնոջ, մանկական) plumpness; (կենդանիների) fatness.

ԳԻՐՔ, գ. book; ◊ **բողոքի ~** book of complaints; **սեղանի ~** reference book, bed-side book, **Սուրբ ~** Holy Bible; **տնային ~** house-register; **տպավորությունների ~** book/record of impressions; **~ հրատարակել** publish a book.

ԳԼԱԺԱՅՌ, գ. boulder.

ԳԼԱՆ, գ. cylinder; *տեխ.* shaft roller; ◊ **թղթի ~** roll of paper.

ԳԼԱՆԱԿ, գ. cigar, cigarette; ◊ **մի տուփ ~** packet/pack of cigarettes.

ԳԼԱՆԱԿԱՏՈՓ, գ. cigarette-case, cigar-case.

ԳԼԱՆԱՁԵՎ, ա. cylindrical.

ԳԼԱՆԱՏԻՊ, գ. rotatory press.

ԳԼԱՆԵԼ, բ. *մանգ.* roll.

ԳԼԱՆԻԿ, գ. roller, cylinder; ◊ **գրամեքենայի ~** platen.

ԳԼԱՆԻԿԱՎՈՐ, ա. roller; (կահույքի մասին) castor.

ԳԼԱՆԻՎ, գ. road-roller.

ԳԼԱՆՈՒՄ, գ. *մանգ.* rolling.

ԳԼԱՔԱՐ, գ. boulder.

ԳԼԳԼԱԼ, բ. purl, babble, murmur.

ԳԼԳԼՈՑ, գ. purl, babble, murmur.

ԳԼԽԱՔԱՑ, ա. bareheaded, hatless.

ԳԼԽԱԳԻՐ, *տես* ԳԼԽԱՏԱՌ:

ԳԼԽԱԳԻՆ, գ. ransom.

ԳԼԽԱԿՈՐՈՒՅՑ, ա. lost, panicstricken, scared out of one's senses/wits.

ԳԼԽԱՄԱՍ, գ. head.

ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ, ա. leading, vanguard; ◊ **~ ձեռնարկություն** chief/main/principal enterprise, head-office.

ԳԼԽԱՆԻ, ա. headed; ◊ **քանի՞ ~ ես** how dare you?

ԳԼԽԱՆՈՑ, գ. hood, cowl.

ԳԼԽԱԾԻՐ, գ. kerchief, scarf.

ԳԼԽԱՊԱՏԱՌ, մ. at breakneck speed, like mad.

ԳԼԽԱՊՏՈՒՅՏ, 1. գ. giddiness, dizziness; 2. ա. giddy, dizzy; ◊ **~ արագություն** giddy/terrific speed; **~ հաջողություն** dizzy/giddy success; **~ հաջողություններից** dizziness with success; **~ ունենալ** feel giddy.

ԳԼԽԱՎԵՐԵՎ, գ. head of the bed; overhead.

ԳԼԽԱՎՈՐ, ա. main, chief; (հիմնական) cardinal, principal; (ավագ) head; ◊ **~ բժիշկ** head physician; *ռազմ.* chief medical officer; **~ինժեներ** chief engineer, engineer-in-chief; **~ հաշվապահ** chief accountant, accountant general; **~ հարված** main blow/attack/thrust; *ռազմ.* **~ հրամանատարություն** general headquarters; *քեր.* **~ նախադասություն** principal clause; *քեր.* **նախադասության ~ անդամներ** main parts of the sentence; **~ վարչություն** central board/administration; **~ ուժեր** main body; **~ փողոց** main street; (փոքր քաղաքում) high street; **~ քարտուղար** secretary general.

ԳԼԽԱՎՈՐԱՊԵՍ, **ԳԼԽԱՎՈՐԱՊԵՍ** } մ. chiefly, mainly, principally.

ԳԼԽԱՎՈՐԵԼ, բ. be at the head of; (ղեկավարել) lead; ◊ **խաղաղության շարժումը ~** be at the forefront of the Peace Movement; **ձեռնարկությունը ~** lead/direct the enterprise.

ԳԼԽԱՍՏԱԿ, գ. head of the bed; *փխր.* (բարձ) pillow; ◊ **~ ծառայել** serve for a pillow.

ԳԼԽԱՏԱՌ, գ. capital letter.

ԳԼԽԱՏԵԼ, բ. behead, decapitate, execute; *փխր.* (ղեկավարությունից զրկել) render leaderless, destroy the brain (of).

ԳԼԽԱՏՈՒՄ, գ. beheading, decapitation.

ԳԼԽԱՐԿ, գ. hat, cap; (կանացի) *հնց.* bonnet; *կոմկ.* head-gear, head-dress; ◊ **զինվորական ~** (peak-)cap, service cap; **մորթե ~** fur hat; (տղամարդու) **~ի խանութ** hatter's; (կանացի) milliner's; **առանց ~ի** hatless; **~ կրել** wear a hat, have a hat on; **~ հագնել/հանել** put on/take off one's hat; **~ը աչքերին իջեցնել** pull one's hat over one's eyes; **~ը գետնովը տալ** disgrace.

ԳԼԽԱՐԿԱԳԱՐԾ, գ. hatter; (կանացի) milliner.

ԳԼԽԱՑԱՎ, գ. headache.

ԳԼԽԱՑԱՎԱՆՔ, գ. bother, trouble, worry; ◊ **~ պատճառել** give/cause (a lot of) trouble.

ԳԼԽԱՔԱՆԱԿ, գ. livestock; ◊ **անասունի և թռչունների ~** the cattle and poultry population.

ԳԼԽԱՀԱԿ, **ԳԼԽԻԿԱՐ** } ա. with hanging head, with head lowered; (ընկճված, վհատված) downcast, depressed.

ԳԼԽԻՎԱՅՐ, ա. head-down, head over heels; ◊ **~ շուռ գալ** go upside down, topsy-turvy.

ԳԼԽԻՎԵՐ, ա. head-up.

ԳԼԽՈՎԻՆ, ա. one and all, (all) to a man, wholly; ◊ **~ թաղվել գործի մեջ** entirely devote oneself to; (մեկին) **~ մատնել** betray sb; **~ ջախջախել** defeat utterly, rout, shatter.

ԳԼԽՈՏԱՆԻՆԵՐ, գ. *կենդ.* cephalopoda.

ԳԼԽՈՒՂԵՂ, գ. brain; *փիտ.* cerebrum (pl.-ra).

ԳԼՈԲՈՒՍ, գ. globe; ◊ **երկրագնդի ~** terrestrial globe; **երկնային ոլորտի ~** celestial globe.

ԳԼՈՐԵԼ, բ. roll; (անիվների վրա) wheel, trundle; (վայր գցել) bring down; (ծառի մասին. տապալել) fell; ◊ **ժամանակը ~** pass away.

ԳԼՈՐՎԵԼ, բ. roll down/over, slide, slip; ◊ **սարից գած ~** slide/roll downhill.

ԳԼՈՒԽ, գ. head; (խելք) mind, brains; (պետ) chief, head, leader, master; (գլխամաս) the chief/main part; (գլխաքանակ) head; (գագաթ) top, summit; (խոշոր կտոր) head; (բաժին) the head; ◊ **ա՛յ քեզ ~** he is very clever/smart (Am); **բութ ~** dull/slow brain, blockhead, dimwit; **գրքի ~** chapter; **դատարկ ~** empty pate; **զինված ոտքից ~** armed to the teeth; **զորաբանակի ~** vanguard, van, advance-guard; **լավ ~ ունենալ** have a great brain; **խելոք ~** clever brain, wise head; **խիզախ ~** bold spirit; **100 ~ անասուն** a hundred head of cattle; **մի ~** every now and then, continually, incessantly; **մի ~ չաքար** sugarloaf; **մի ~ պանիր՝ սոխ** a cheese/an onion; **ոտքից ~** from top to toe; **պայծառ ~** lucid mind, bright intellect/spirit; **տաք ~** hothead; **պետության ~ը** head of state; **~ անցնել՝ կանգնել** pass to/be at the head of; **~ բարձրացնել** raise/lift up one's head; *փխր.* speak up; **~ բերել** arrange, set things going, manage; **~ - գլխի** face to face, confidentially, tête-a-tête, *fr.*; **~ գալ** work well, be a success; **~ դնել** have to do with; **~ խոնարհել** bend one's head(to); **~ ծռել** implore, abase oneself, stoop to; **~ կոտրել՝ ջարդել** puzzle (over), rack/cudgel one's brains (over); **~ չունենալ** have no wish, not to be eager, not to be interested; **~ պահել** idle, loaf, shirk one's work; **~ տալ** bow; **~դ բարձր պահիր** keep your chin up, chin up! **~ս պայթում՝ ճաքում՝ տրաքում է** I have a splitting headache, my head is ready to burst; **~ը գալ՝ գլխով անցնել** cross one's mind, enter one's head, occur, strike; **~ ը գալ** (պատահել. փորձանք են) come like a bolt from the blue; come to one's head; **~ը գովել** brag (of, about), boast (of); **~ը դատարկ, դատարկ գլխով** empty-headed; **~ը դնել (մի բանի համար)** lay down/lose one's life; **~ը կախել** hang one's head, become/be dejected/despondent; **~ը կտրել տալ** stake one's head/life, wager/lay one's life; **~ը մտցնել** get/take into one's head; **~ը պահել** get by, make both ends meet, *դիմ.*; **~ը պտտվում է** his head is spinning/in a whirl, he is/feels giddy; *փխր.* he is giddy with; **~ը տանել՝ ցավեցնել** bore, make sick, bore to death; **~ը տնկել՝ ցցել** hold up one's head; **~ն ուռեց** his head swelled up (with); **~ը քա՛րը** come what may; **~ի գցել** suggest an idea; **~ի ընկնել** guess, suspect; **~ի ճարը տեսնել** find way out of situation, save oneself, escape; **~ին վոռ տալ** split hairs; **~ին խաղ խաղալ** play a trick on sb; **~ին խփել՝ տալ** waste away with grief (over), be distressed; (գոջալ) repent, regret; **~ին խփել** (ալկոհոլի մասին) rush to the head; **~ին կանգնել** (հսկել) pester/harass plague sb, worry the life out of sb; (հովանավորել) patronise, protect; **~ին նստել** abuse sb's trust/kindness; **~ին սառը ջուր լցնել** pour cold water (over), dampen, discourage; **ամսվա ~ին** in/at the beginning of the month; **սեղանի ~ին** at the head of the table; **~իդ դուրս չգալ** stick fast in one's head; **~իդ մտքից դուրս գցել** put out of one's head, dismiss, get rid (of); **~իդ ընկնել** quite/clean forget it/sth; it quite escaped him; **~իդ ձեռք քաշել** scorn/ignore danger, not spare one's head; **~ով անել** nod (one's head); **~ով պատասխանատու լինել** answer with one's life, answer/vouch for sb/sth; **~ով տանճ կշռել** nod, be sleepy, sway, be drowsy; **մի ~ բարձր** be far superior (to), stand head and shoulders above; **մեկի ~ը լվալ** give sb a good scolding, haul sb over the coals, *դիմ.*; **մեկի ~ը լցնել** hammer into sb's head; **մեկի ~ն ուտել** ruin (sb); **մեկի ~ի վրայով** over sb's head; **ուսերի վրա ~ ունենալ** have a good head on one's shoulders.

ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ, գ. masterpiece, chef d'oeuvre, *fr.*.

ԳԼՈՒԽԿԱՆԾԻ, 1. գ. somersault; 2. մ. topsy-turvy, head over heels; ◊ **~ անել՝ տալ** somersault, turn a somersault.

ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿ, գ. puzzle, conundrum; *փխր.* (բարդ խնդիր) puzzler, headache.

ԳԾԱԳԻՐ, գ. draft, drawing, design, draught; (ուրվագիծ) sketch; (գրաֆիկ) graph, diagram; ◊ **աշխատանքային ~** working drawings preliminary draft.

ԳԾԱԳՐԱԿԱՆ, **ԳԾԱԳՐԱՅԻՆ** } ա. drawing; ◊ **~ տախտակ** drawing board; **~ գրիչ** drawing pen/point.

ԳԾԱԳՐԱՆՈՑ, գ. draughtsman's office, drafting room.

ԳԾԱԳՐԱՏԱԽՏԱԿ, գ. drawing board.

ԳԾԱԳՐԱՏԱՐԻՓ, գ. case of drawing instruments.

ԳԾԱԳՐԵԼ, բ. draw, draw a plan.

ԳԾԱԳՐԻՉ, **ԳԾԱԳՐՈՒՀԻ** } գ. draughtsman, draftsman; (կին) draughtswoman, draftswoman.

ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. drawing; ◊ **տեխնիկական ~** technical drawing.

ԳԾԱՄԱՍ, գ. section, length.

ԳԾԱՄԵՏՐ, գ. long/linear metre.

ԳԾԱՅԻՆ, ա. linear.

ԳԾԱՆԱՎ, գ. battleship.

ԳԾԱՆԿԱՐ, գ. drawing, graphic design.

ԳԾԱՆԿԱՐԻՉ, գ. graphic artist, drawer.

ԳԾԱՆԿԱՐՉԱԿԱՆ, ա. graphic.
ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գ. graphic arts.
ԳԾԱՊԱՏԿԵՐ, գ. graph, diagram.
ԳԾԱՎՈՐ, ա. striped, stripy.
ԳԾԵԼ, բ. draw; (գիծ քաշել) draw a line; ◊ **տախը** ~ underline, rule; (գծագրել) trace; (պատկերել) outline, depict.
ԳԾԻՉ, գ. drawing pen, ruling pen.
ԳԾԻԿ, գ. dash, hyphen.
ԳԾՈՒՆԾ, ա. small-minded, mean-spirited; (ժլատ) stingy, niggardly; (չնչին) petty, pettifogging.
ԳԾՈՒՆԾՈՒԹՅՈՒՆ, գ. meanness, pettiness; (ժլատություն) stinginess, niggardliness
ԳՄԲԵԹ, գ. *ճարտ.* cupola, vault, dome; ◊ **կրկեսի** ~ big top; **երկնքի ~ը** the dome of the sky, the heavenly dome.
ԳՄԲԵԹԱՁԵՎ, **ԳՄԲԵԹԱՆՄԱՆ** } ա. cupola-shaped, domeshaped; (կորնքարդ) convex.
ԳՄԲԵԹԱՎՈՐ, ա. domed.
ԳՅՈՒՂ, գ. village; (ի հակադրություն քաղաքի) country, countryside; ◊ ~ **գնալ** go to the country; **~ում ապրել** live in the country/a village; **քաղաք և** ~ town and country.
ԳՅՈՒՂԱԲՆԱԿ, գ. countryman (pl. countrymen, country-folk), villager.
ԳՅՈՒՂԱՊ, գ. hamlet, small village.
ԳՅՈՒՂԱԿԱՆ, ա. country, rural, village; ◊ ~ **բնակչություն** rural population; ~ **երիտասարդություն** village/rural youth; ~ **վայր** countryside; ~ **տնտեսություն** agriculture, farming, rural economy.
ԳՅՈՒՂԱՄԵՋ, գ. square in the centre of the village where village people gather.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ, գ. agriculturist, agronomist.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ա. agricultural, agronomical.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. agriculture, agronomy.
ԳՅՈՒՂԱՑԻ, գ. peasant, villager; (կին) peasant woman.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ, ա. peasant, village; ◊ *պատմ.* ~ **ապստամբություն** peasant revolt/uprising; ~ **զանգվածներ** peasant masses; ~ **տնտեսություն** peasant/village household; **մանր** ~ **տնտեսություն** small (peasant/village) farm.
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆ, գ. *հմբ.* peasantry, the peasants/villagers ◊ **աշխատավոր** ~ working peasantry.
ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔ, գ. settlement (of urban type), (new) housing estate.
ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴ, գ. հպվ. village council.
ԳՅՈՒՏ, գ. discovery, invention; ◊ ~ **անել** invent; (հնարել) devise, contrive.
ԳՅՈՒՏԱՐԱՐ, գ. inventor; (կին) inventress.
ԳՅՈՒՏԱՐԱՐԱԿԱՆ, ա. inventive, ingenious.
ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. invention.
ԳՆԱԳՈՅԱՑՈՒՄ, գ. *տնտ.* price formation, pricing.
ԳՆԱՁՐԿԵԼ, բ. depreciate, devalue; (էժանացնել) cheapen/drop in price.
ԳՆԱՁՐՈՒՄ, գ. depreciation, devaluation.
ԳՆԱՁՈՒԿ, ա. depreciated, devaluated; ◊ ~ **անել** depreciate, cheapen; ~ **լինել** depreciate, cheapen.
ԳՆԱԼ, բ. go; (ոտքով) walk; (հաճախել) go, attend; (մեկնել, հեռանալ) start, leave; (գնացքի՝ նավի նկի մասին) run; (ընթանալ, տեղի ունենալ) proceed, go on; (ներկայացնել ֆիլմի մասին, ներկայացվել) be on; (վաճառվել) sell; (ծախսվել, ժամանակի մասին) pass, elapse, go by; (անցնել) pass, slip away; (թղթախաղում) play, lead; ◊ **առաջ** ~ advance; ~ **- գալ** walk to and fro/up and down; **գնումների** ~ go shopping; **դեպի իր նպատակը** ~ go toward one's aim; **դպրոց** ~ go to school; **ընդառաջ** ~ go/come to meet; *փխբ.* meet halfway; *շխմ.* **թագուհին** ~ move the queen; (մասին) it is a question/matter (of); **թոշակի** ~ retire; **իր կարգով** ~ take/run its normal course; **խղճին դեմ** ~ act against one's conscience; **հյուր** ~ visit, pay a visit on, go to see; *խսկց.* **մարդու** ~ marry; **ապրանքը լավ է ~նում** these goods sell well; **գործերը լավ վատ են ~նում** affairs are in good/sad state; **երիտասարդությունը կյանքը ~նում է** youth/life is slipping away/is over; **~նով, քանի գնում է** increasingly, by and by, in due time, in time; **որսի** ~ go shooting/hunting; **գնաք բարո՛վ** happy journey! good luck!
ԳՆԱՀԱՏԱԿԱՆ, գ. (թվանշան) mark, grade(s); (կարծիք) estimation, estimate; (բարձր դրական) appraisal, appreciation; (արժեք) valuation; ◊ **բարձր՝ ցածր** ~ high/low mark; **բարձր** ~ **ստանալ** win/receive a high appraisal; **դրական** ~ **ստանալ** (գրքի նկի մասին) be favourably received; **լավ** ~ **ստանալ** (նաև աշխատանքի մասին) receive a good rating; ~ **որևէ առարկայից** mark in/for a certain subject; ~ **տալ** assess.
ԳՆԱՀԱՏԱՆՔ, **ԳՆԱՀԱՏՈՒՄ** } գ. valuation, estimation, appreciation; (ունեցվածքի) assessment.
ԳՆԱՀԱՏԵԼ, բ. estimate, value, appraise; (թվանշան դնել) put down/give a mark; (գին դնել) fix the price (of), state the value (of), value; (արժեքավորել, արժեքը հասկանալ) estimate, appraise, evaluate; (որակել, համարել) qualify, consider, regard; ◊ **գույքը** ~ state the value of the property; **դրությունը՝ վիճակը** ~ assess/appraise the situation; **ըստ արժանվույն** ~ appraise at its true worth; **ճիշտ** ~ **որևէ բան** see sth in proper perspective; **~ված ծանրոց** registered parcel (with statement of value).
ԳՆԱՀԱՏԵԼԻ, ա. valuable, appreciable.
ԳՆԱՀԱՏԻՉ, գ. valuer; *ամ.* appraiser.

ԳՆԱՀԱՏՎԵԼ, բ. be valued/estimated/appreciated.
ԳՆԱՑ, գ. inflation.
ԳՆԱՅԻՆ, ա. ◊ **~ ապրանք** sal(e)able, marketable; **~ գիրք** bestseller.
ԳՆԱՆՇՈՒՄ, գ. listing; ◊ **~ման տվյալներ** listing particulars.
ԳՆԱՊԻՏԱԿ, գ. label, tag; ◊ **~ կպցնել** attach a label (to).
ԳՆԱՐՈՒՆԿ, գ. *բոտ.* primrose.
ԳՆԱՑՈՒՅԱԿ, գ. price-list, current price(s), priced catalogue; (ռեստորանում) bill of fare.
ԳՆԱՑՔ, գ. train; ◊ **ապրանքատար ~** freight/goods train; **արագընթաց ~** fast train; **հեռընթաց ~** long-distance train; **ճեպընթաց ~** express (train); **մարդատար ~** passenger train; **մերձքաղաքային ~** local/suburban train; **ուղիղ ~** through train; **փոստատար ~** mail/post train; **~ը մեկնեց** the train has left/departed/pulled out; **~ով մեկնել՝ գնալ** go by train; **~ը գալիս է (ժամին)** the train will arrive/is due (at).
ԳՆԱՑՔԱԶԱՐ, գ. train, rolling stock.
ԳՆԴԱԿ, գ. ball; ◊ **բիլիարդի ~** billiard ball; **ֆուտբոլի ~** football; *ռզմ.* bullet, projectile; **~ արձակել** shoot, fire.
ԳՆԴԱԿԱՀԱՐԵԼ, բ. shoot, execute.
ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ, **ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒՄ** } գ. (military) execution; ◊ **~թյան դատապարտել** sentence to be shot.
ԳՆԴԱԿԵՐՊ, ւ. ա. (գնդանմման) spherical, ball-shaped; 2. գ. spheroid.
ԳՆԴԱԿԻԾԵԼ, բ. fire (at, upon), centre fire (on); (գնդացրով) machine-gun; (հրետանիով) shell.
ԳՆԴԱԿԻԾՈՒԹՅՈՒՆ, **ԳՆԴԱԿԻԾՈՒՄ** } գ. firing, fire; (հրետանու) bombardment, shelling; ◊ **~թյան ենթարկել** concentrate/centre fire on; **~թյան տակ լինել** be under fire.
ԳՆԴԱՁԵՎ, ա. ball-shaped, spherical.
ԳՆԴԱՁՈՂ, գ. (billiard) cue.
ԳՆԴԱՅԻՆ, ա. ball, globe, globular.
ԳՆԴԱՅԻՆ, ա. *ռզմ.* regimental.
ԳՆԴԱՊԱՐԿ, գ. (billiard) pocket.
ԳՆԴԱՊԵՏ, գ. colonel.
ԳՆԴԱՒԱՆՑՔԱԿԱԼ, գ. *տեխ.* ball-bearing.
ԳՆԴԱՍԵՂ, գ. pin; ◊ **փողկապի ~** tie pin, scarf pin; **~ի ծակոց** pin prick.
ԳՆԴԱՍԵՂԱՅԻՆ, ա. pin.
ԳՆԴԱՅԻՐ, գ. machine-gun; ◊ **զենիթային ~** anti-aircraft machine-gun; **ձեռքի ~** light machine-gun.
ԳՆԴԱՅՐԱՅԻՆ, ա. machine-gun; ◊ **~ կրակ** machine-gun fire; **~ ժապավեն** cartridge belt.
ԳՆԴԱՅՐՈՂ, գ. machine-gunner.
ԳՆԴԵԼ, բ. make balls, give round forms; ◊ **խմորը ~** make dough-balls (for baking bread), make the dough round, round off.
ԳՆԴԻԿ, գ. small ball, bead; *գիտ.* globule; *բսկց.* pellet; ◊ **արյան ~ներ** blood corpuscles.
ԳՆԵԼ, բ. buy, purchase; ◊ **չնչին գնով՝ ծրի ~** buy for next to nothing/for a mere trifle, buy for a song, *դրմ.*:
ԳՆՈՂԱԿԱՆ, ա. purchasing.
ԳՆՈՂԱՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. purchasing power; ◊ **բնակչության ~** purchasing capacity.
ԳՆՈՐԴ, գ. buyer, purchaser; (մշտական) customer, client; ◊ **մեծածախ ~** wholesale purchaser.
ԳՆՉՈՒ(ՀԻ), գ. gypsy.
ԳՆՉՈՒԱԿԱՆ, ա. gypsy.
ԳՆՉՈՒԵՐԵՆ, գ., ա., մ. gypsy, the gypsy language, Romany, Romani.
ԳՆՈՒՄ, գ. purchase; ◊ **~ կատարել** lay in supply; **մեծածախ ~** wholesale purchase.
ԳՈԳ, գ. *տես* ԳԻՐԿ; (ծնկներ) lap; ◊ **պատուհանի ~** window-sill; **մայրը երեխան ~ին** mother with a child in her lap.
ԳՈԳԱՎԱՐ, **ԳՈԳԱՁԵՎ** } ա. concave.
ԳՈԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. concavity.
ԳՈԳՆՈՑ, գ. apron; (սովորաբար մանկական) pinafore.
ԳՈԹԱԿԱՆ, ա. Gothic; ◊ **~ ճարտարապետություն** Gothic architecture; **~ ոճ** Gothic style; **~ շրիֆտ՝ գիր** Gothic (type), black-letter.
ԳՈԹԵՐ, գ. *պատմ.* Goths.
ԳՈԼ[1], ա. warm, warmish, tepid, lukewarm.
ԳՈԼ[2], գ. *մարզ.* goal; ◊ **~ խփել** score a goal, score.
ԳՈԼԱՆԱԼ, բ. be warmed up, warm up.
ԳՈԼԱՑՆԵԼ, բ. warm up.
ԳՈԼԱՑՈՒՄ, գ. warming up.
ԳՈԼՈՐՇԻ, գ. steam, evaporation, vapour, exhalation, fumes; ◊ **վնասակար ~** miasma.
ԳՈԼՈՐՇ(Ի)ԱՆԱԼ, բ. evaporate, exhale, turn into vapour, vaporize; (անհետանալ) disappear, vanish.
ԳՈԼՈՐՇ(Ի)ԱՑՆԵԼ, բ. evaporate, exhale.
ԳՈԼՈՐՇ(Ի)ԱՑՈՒՄ, գ. evaporation, exhalation.
ԳՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. tepidity.
ԳՈՀ, ա. content (with); (բավարարված) satisfied (with), pleased (with); ◊ **ինքն իրենից ~** self-satisfied, self-complacent, smug; **~ տեսք** satisfied/gratified/contented/smug look/air/expression.
ԳՈՀԱՐ, գ. gem, precious stone, jewel.
ԳՈՀԱՐԱԶԱՐԴ, ա. strewn/bestrewn with precious stones/jewels.
ԳՈՀԱՐԵՂԵՆ, գ. jewellery, jewelry.
ԳՈՀԱՑՆԵԼ, բ. satisfy, content.
ԳՈՀԱՑՈՒՑԻՉ, ա. satisfactory, satisfying.

ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. satisfaction, gratification.

ԳՈՂ, գ. thief, burglar, robber; (մանր) pilferer; (գրպանահատ) pickpocket; ◊ **խանութի ~** shoplifter; **~ի պես** thievishly, in an underhand way; **~ սիրտը դող** the cap fits; **բռնե՛ք ~ին** stop thief!

ԳՈՂԱՅԻՆ, ա. thief; (գողին հատուկ) thievish; ◊ **~ ժարգոն** thieves' cant/Latin; **~ ձևեր** thievish methods.

ԳՈՂԱՆԱԼ, բ. steal; ◊ (թոցնել) pilfer, filch, pinch.

ԳՈՂԱՐՁ, գ. *den of thieves.*

ԳՈՂԵԳՈՂ, մ. thievishly, in an underhand way.

ԳՈՂՈՐՍՈՐԴ, գ. poacher.

ԳՈՂՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ, գ. poaching; ◊ **~թյամբ զբաղվել** poach.

ԳՈՂՏԻԿ, ա. agreeable, nice-looking, graceful, fine.

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. theft, stealing, thieving; (կողոպուտ) robbery; *իրավ.* larceny, theft; ◊ **մանր ~** petty theft/larceny, pilferage; **կոտրելով ~** burglary; ◊ **~թյամբ զբաղվել, ~ անել** be a thief.

ԳՈՃԻ, գ. sucking-pig, piglet.

ԳՈՄ, գ. cattle shed, cowshed, cowhouse, cattle-yard; (ոչխարի) sheep-cot(e).

ԳՈՄԱՂԲ, գ. manure, dung, muck; ◊ **~ ցանել** manure, dung.

ԳՈՄԵՇ, գ. buffalo.

ԳՈՄՇԱԿՈՎ, գ. cow buffalo.

ԳՈՄՇԱՋԱԳ, գ. young buffalo.

ԳՈՅ, գ. *փիլ.* being, existence; (կյանք) life.

ԳՈՅԱԲԱՆ, գ. *փիլ.* ontologist.

ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ, ա. *փիլ.* ontological.

ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. *փիլ.* ontology.

ԳՈՅԱԿԱՆ, գ. *քեր.* noun, substantive.

ԳՈՅԱԿԱՆԱԲԱՐ, մ. *քեր.* substantively.

ԳՈՅԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. *քեր.* substantivization.

ԳՈՅԱԿՑԵԼ, բ. coexist.

ԳՈՅԱԿՑՈՒԹՅՈՒՆ, **ԳՈՅԱԿՑՈՒՄ** } գ. coexistence; ◊ **խաղաղ ~** peaceful coexistence.

ԳՈՅԱՁԵՎ, գ. *փիլ.* form of existence (of matter).

ԳՈՅԱՄԱՐՏ, գ. struggle for existence.

ԳՈՅԱՄԻՋՈՑ, գ. means of susbsistence/existence, livelihood.

ԳՈՅԱՊԱՅՔԱՐ, *տե՛ս* ԳՈՅԱՄԱՐՏ:

ԳՈՅԱՏԵՎԵԼ, բ. exist, be; *խոսկ.* survive, get by.

ԳՈՅԱՑՈՒՄ, գ. formation, conception; (առաջացում) emergence.

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ, գ. existence; (կյանք) life, being; ◊ **~ը պահպանել** keep body and soul together; **~ը քարշ տալ** drag out (a miserable) existence.

ԳՈՆԵ, վ. if only, even if, at least.

ԳՈՉԵԼ, բ. exclaim, cry.

ԳՈՉՅՈՒՆ, գ. exclamation, cry.

ԳՈՌԱԼ, բ. shout, cry, yell.

ԳՈՌՈՅ, գ. shout, cry, yell; (լաց) howl; ◊ **ամպի ~** roll, peal, peal of thunder.

ԳՈՌՈՋ, ա. arrogant, haughty, supercilious.

ԳՈՌՈՋԱՆԱԼ, բ. become proud; (սնապարծել) get conceited; *խոսկ.* (քիթը տնկել) give oneself airs, *դրժվ.*:

ԳՈՌՈՋՈՒԹՅՈՒՆ, գ. haughtiness, superciliousness, arrogance.

ԳՈՎԱԲԱՆԵԼ, բ. lavish/shower praises (on, upon); (ներբողել) eulogize, belaud, extol.

ԳՈՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. praise, commendation; (ներբող) laudation; (գովեստ) panegyric.

ԳՈՎԱԶԴ, գ. advertisement, publicity; *խոսկ.* advert, ad.

ԳՈՎԱԶԴԵԼ, բ. advertise, *ամ.* advertize; publicize.

ԳՈՎԱՍԱՆԱԳԻՐ, գ. honour certificate.

ԳՈՎԱՍԱՆԱԿԱՆ, ա. laudatory; (ներբողական) eulogistic; (գովեստի) panegyrical.

ԳՈՎԱՍԱՆՔ, *տե՛ս* ԳՈՎՔ:

ԳՈՎԵԼ, բ. praise, commend (for), flatter; (գովք անել) praise.

ԳՈՎԵԼԻ, ա. commendable; (գովասանական) laudable; (գովեստի արժանի) praiseworthy.

ԳՈՎԵՍՏ, գ. praise, approval; ◊ **~ով խոսել** praise, speak farourably.

ԳՈՎԵՐԳ(ՈՒԹՅՈՒՆ), գ. ode, dithyramb.

ԳՈՎԵՐԳԵԼ, բ. sing the praises (of); (փառաբանել) glorify, celebrate; (մինչև երկինք հասցնել) extol/praise (to the skies).

ԳՈՎՔ, գ. praise, praising; (գովասանք) laudation; (հավանություն) approval; (ներբող) eulogy; ◊ **~ անել** praise; **մեկի ~ն անել** eulogize, belaud, extol.

ԳՈՏԵՄԱՐՏ, գ. (կռիվ) skirmish, close fight; (ձեռնամարտ) hand-to-hand fight, man-to-man fight; *մարզ.* wrestling.

ԳՈՏԵՄԱՐՏԵԼ, բ. fight; *մարզ.* wrestle.

ԳՈՏԵՄԱՐՏԻԿ, գ. fighter; *մարզ.* wrestler.

ԳՈՏԵՊՆԴԵԼ, բ. cheer up; (քաջալերել) encourage; (սիրտ տալ) hearten, enhearten.

ԳՈՏԵՊՆԴՎԵԼ, բ. take heart, encourage oneself.

ԳՈՏԻ, գ. belt, girdle; (գոտկատեղ) waist; (գոնա) zone; ◊ **ազատ ~** free zone; **ազդեցության ~** area of influence; **արգելված ~** restricted area; **արևադարձային ~** torrid zone; **ավտոմեքենայի ~** seat-belt; **բարեխառն ~** temperate zone; **լայն ~** sash, waistband; **սահմանային ~** borderland, border zone; **սառուցյալ ~** frigid zone; **փրկարար ~** lifebelt; **~ն սեղմել պնդացնել** be quite full, eat to satiety; **մինչև ~ն** up to the waist, waist-deep, waist-high.

ԳՈՏԿԱՏԵՂ, գ. waist.

ԳՈՐԳ, գ. carpet; (ոչ մեծ) rug; (գոբելեն) tapestry; ◊ **~ բուխարիկի առջև** hearthrug; **~ով պատել՝ ծածկել** carpet.

ԳՈՐԳԱԳՈՐԾ, գ. carpet maker, rug maker, tapestry weaver/maker.

ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ, ա. carpet making.

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. carpet making.

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒՀԻ, գ. (woman) carpet maker, rug maker.

ԳՈՐԳԱԶԱՐԴ, ա. carpeted.

ԳՈՐԳԱՆԱԽՇ, գ. carpet design/pattern.

ԳՈՐԳԱՎԱՃԱՌ, գ. carpet/rug/tapis dealer.

ԳՈՐԳԵ, ա. carpet, rug.

ԳՈՐԾ, գ. business, affair, job; (զբաղմունք) pursuit, work, employment, occupation; (աշխատանք, երկ) work, writing; (արարք, եղելություն) deed, act, cause; (փաստաթուղթ, գրասենյակային պաշտոնական) file, dossier; ◊ **ազնիվ ~** good/noble cause; **անձնական ~** private affair; (փաստաթուղթ) personal record(s)/file; **արդար ~** just cause; **բարի ~** good deed; *իրավ.* **դատական ~** (court) case, action; **երաժշտական ~** composition; **խաղաղության ~** the cause of peace; **կյանքի ~** life-work; **մեծ ~** great work, feat; **ռազմական ~** military training; **~ բացել** open a can of worms, *ոչխ.*; **~ բռնել** start a business/an affair; **~ հարուցել** start/file an action, sue; **~ չունեմ** it is no business/concern of mine; **~ը բացել** reveal/discover a plot, bring to light; **~ը գլուխ բերել** set things going, manage, cope with the task; **~ը երկարացնել** drag out a business; **~ը կարճել** discontinue a case; **~ը տեղից շարժել** get things going, move things; **~ը փչացնել** make a mess of everything; **~ի գցել** start (sth), set (sth) going, give sth a start, launch sth; **~ի դնել** settle, place, fix; **~ի կպչել** work with zeal/deligence/ardour/gusto; **~ի մարդ** business man, an (very) active person; **իր ~ի վարպետ** know one's trade, be an expert at one's job; **~ից գցել** prevent sb from working, distract sb from work, disturb sb; **~ից ընկնել** 1. be diverted/distracted away from; 2. (գործազուրկ դառնալ) be out of work, become jobless; 3. (աշխատունակությունը կորցնել) loose one's ability to work; **~ից խոսել** speak about/on business, talk shop, *ոչխ.*; **~ից խոս(եց)եք** get to the point; **~ով ընկնել** forget oneself in working, work too long/late; **~ով և խոսքով** in word and deed; **~երը լավ՝ վատ են գնում** affairs are in a good/sad state; **~երը կարգի գցել** put one's affairs in order; **~երի վիճակը** the state of affairs; **~ այնպիսի բնույթ ստացավ** matters took such a turn; **բոլոր միջոցները ~ի դնել** leave no stone unturned, move heaven and earth; **~ի՛դ գնա** go away! be off! get away! on your way now!; **~ի սնունդ ի՞նչ է** what is he engaged in?; **դա իմ ~ն է** that is my business/affair; **դա իմ ~ը չէ** that is no business/concern of mine, that is none of my business; **դա նրա ձեռքի ~ն է** this is his handiwork; **երբ ~ն ինձ հասնի** when it is my turn; **իր ~ը անել** have done one's part; **մեկի հետ ~ ունենալ** have (some) business with sb; **խոսքով... բայց ~ով** in words... but actually, ostensibly... but in reality; **մի խառնվեք ուրիշի ~երին** mind your own business; **նրա ի՞նչ ~ն է** what does he care (for, about)?

ԳՈՐԾԱԴԻՐ, գ. executive; ◊ **~ տնօրեն** executive director.

ԳՈՐԾԱԴՐԵԼ, բ. apply, employ, use; (պրակտիկայում իրագործել) put into practice; ◊ **իշխանություն ~** exercise one's authority; **ճիգ ~** make/exert efforts; **ջանք ~** take pains, exert oneself; **ամեն ջանք ~** do/try one's best; **ուժ ~** use violence.

ԳՈՐԾԱԴՐԵԼԻ, ա. applicable, suitable.

ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ, **ԳՈՐԾԱԴՐՈՒՄ** } գ. application, use; ◊ **~ գտնել** find a use/an application (for); **լայն ~ ստանալ** be widely adopted.

ԳՈՐԾԱԴՈՒԼ, գ. strike; ◊ **ընդհանուր ~** general strike; **կարճատև ~** short-term/lightning strike; **քաղաքական՝ տնտեսական ~** political/commercial strike; **~ անել** strike, go on strike, come out; **~ը ղեկավարել** conduct a strike; **~ը գրել** disrupt/break a strike; **~ իտալական ձևով** sitdown strike.

ԳՈՐԾԱԴՈՒԼԱԲԵԿ, գ. strikebreaker, blackleg; *խոկ.* scab.

ԳՈՐԾԱԴՈՒԼԱՅԻՆ, ա. strike; ◊ **~ կոմիտե** strike committee; **~ պայքար՝ շարժում** strike movement.

ԳՈՐԾԱԴՈՒԼԱՎՈՐ, գ. striker.

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. unemployment; ◊ **զանգվածային ~** mass unemployment.

ԳՈՐԾԱԶՈՒՐԿ, ա. unemployed; *ամ.* jobless; ◊ **լրիվ՝ մասնակի ~** totally/partially unemployed; **~ լինել** be unemployed, be out of work.

ԳՈՐԾԱԾԱԿԱՆ, ա. common, generally used; (սովորական, հաճախ օգտագործվող) of the current/usual type; ◊ **~ ապրանքներ** popular goods; **~ արտահայտություններ** common expressions.

ԳՈՐԾԱԾԵԼ, բ. use, make use (of); (դեղի մասին) take, apply; ◊ **շահութաբեր ձևով ~** benefit (from, by), profit (from, by).

ԳՈՐԾԱԾՎԵԼ, բ. be used, be in use; ◊ **լայնորեն ~** be in wide/common usage, be in wide use, be widely used.

ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ, **ԳՈՐԾԱԾՈՒՄ** } գ. use, usage; (կիրառում) application; ◊ **~ի՛ այն մեջ դնել** bring into use, put

in use; **~ից դուրս գալ** get/go out of use, be no longer in use, fall into disuse; become obsolete.

ԳՈՐԾԱԿԱԼ, գ. agent; (առևտրի միջնորդ) factor, broker.

ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ, ա. secret service; ◊ **~ տվյալներ** intelligence.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. agency; *հմմ.* agency; ◊ **առևտրական ~** (trade) agency; **գնգվածային լրատվության ~** news agency; **թշնամու ~** enemy/hostile agents; **լրտեսական ~** secret service.

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ, գ. shop-assistant; (վաճառող) seller, salesman, vendor; (կին) saleswoman, shop girl.

ԳՈՐԾԱԿԻՑ, գ. (աշխատակից) colleague, collaborator; *մար.* coefficient, factor; ◊ **օգտակար գործողության ~** *տեխ.* efficiency; *մարգ.* showing.

ԳՈՐԾԱԿՑԵԼ, բ. collaborate (with), cooperate (with).

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, **ԳՈՐԾԱԿՑՈՒՄ** } գ. collaboration, cooperation; *տնտ.* consortium, ◊ **սերտ ~** close collaboration/cooperation (with); **~ից հրաժարվել** refuse to cooperate.

ԳՈՐԾԱՎԱՐ, գ. clerk.

ԳՈՐԾԱՎԱՐԱԿԱՆ, ա. clerical.

ԳՈՐԾԱՎԱՐՁ, գ. piece wage, payment by the piece.

ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ, ա. by the job, job; ◊ **~ աշխատանք** piecework; (աշխատանքի) **~ վճարում** piece-rate system/payment.

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. clerical work; (գրագրություն) business correspondence.

ԳՈՐԾԱՏԵՐ, գ. employer.

ԳՈՐԾԱՐԱՆ, գ. factory, works, plant, mill; *կպմխ.* (օրգան) organ; ◊ **աղյուսի ~** brickfield, brickyard, **ապակու ~** glassworks, glass-(manu)factory; **ատաղձագործական ~** sawmill; **գարեջրի ~** brewery; **գործվածքեղենի ~** weaving mill; **կաշվի ~** tannery; **հախճապակու ~** porcelain/ceramic works; **հրուշակեղենի ~** confectionary; **մահուդի ~** cloth factory; **շաքարի ~** sugar refinery; **ռազմական ~** munition/arms factory; **օճառի ~** soap works; **խոսելու ~ներ** speech organs.

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ, ա. factory, mill; (արդյունաբերական) industrial, manufacturing; ◊ **~ արտադրանք** factory-made product; **~ (արհ)կոմիտե** factory (trade-union) committee; **~ բանվոր** factory worker; **~ պիտակ** trade mark; **~ քաղաք** industrial city.

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ, գ. factory owner, manufacturer.

ԳՈՐԾԱՐԱՐ, 1. ա. business; 2. գ. (անձ) smart dealer; *խսկց.* big wig, boss; ◊ **~ համագործակցություն** business co-operation; **~ շրջաններ** business circles; **~ մարդ** businessman.

ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ, ա. efficient, businesslike.

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. (business-like) efficiency, business; ◊ **նա աչքի է ընկնում իր ~ությամբ** he is very efficient, he is very businesslike.

ԳՈՐԾԱՐԿԵԼ, բ. (գործի դնել) start, put in action; (մեքենան) set in motion; (ձեռնարկությունը) set working.

ԳՈՐԾԱՐԿՎԵԼ, բ. start, set working.

ԳՈՐԾԱՐԿՈՒՄ, գ. starting, running, launching; (ձեռնարկության) starting; (մեքենայի ևն) setting in motion; ◊ **~ման հրապարակ** launching pad.

ԳՈՐԾԱՐՔ, գ. (վաճառքի) transaction, deal, bargain; (համաձայնություն) agreement; (բանկային) transaction, operation; ◊ **առևտրական ~ կնքել** conclude a bargain, arrange a (commercial) deal; **բորսային ~** stock exchange deal; **~ի մեջ մտնել** strike a bargain (with); **խղճի հետ ~ի մեջ մտնել** bargain with one's conscience.

ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ, *տես* ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ.

ԳՈՐԾԵԼ, բ. act, operate, function; (աշխատել) work; (կատարել) make, perform; (ազդել) have an effect (upon), act (on); (մեխանիզմի մասին) function; (մեքենայի մասին) run; (հյուսել) knit; ◊ **առանց չտապելու՝ հանդարտ ~** take one's time; **հանցանք ~** commit a crime; **հեկլումով ~** crochet; **սխալ ~** make a mistake; **հեռախոսը չի ~ում** the telephone is out of order, կամ, is not working; **ստամոքսը չի ~ում** he has constipation; **օրենքը ~ում է** the law is valid/holds good/true; **~ող** operating, acting; (հյուսող) knitting; **~ող անձինք** characters in the play; **~ող բանակ** Army in the Field; *ամ.* Field Forces; *տպսղ.* **~ող մեքենա** knitting machine; **~ող մոդել** (մեքենայի ևն) working model; **~ող օրենք** law in force.

ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ, **ԳՈՐԾԵԼԱՁԵՎ** } գ. mode/line of action; (քաղաքականության) policy.

ԳՈՐԾԸՆԿԵՐ, գ. colleague, co-worker, fellow-labourer, partner, associate; ◊ **ավագ ~** senior partner.

ԳՈՐԾԻԱԿԱՆ, ա. *քեր.* instrumental; ◊ **~ հոլով** instrumental case.

ԳՈՐԾԻՄԱՑ, ա. efficient, business-like.

ԳՈՐԾԻՉ, գ. worker, promoter; ◊ **արվեստի ~** cultural /art worker; **արվեստի վաստակավոր ~** Honoured Art Worker; **գիտության ~** scientist, man of science; **գիտության վաստակավոր ~** Honoured Scientist; **հասարակական ~** public man/figure; **պետական ~** statesman; **քաղաքական ~** political figure; **վաստակավոր ~** honoured worker.

ԳՈՐԾԻՔ, գ. instrument, implement, tool; (սարք) device, apparatus, instrument; ◊ **արտադրության ~ներ** implements/instruments of production; **գյուղատնտեսական ~ներ** agricultural implements; **երաժշտական ~ներ** musical instruments; **ճշգրիտ ~ներ** precision instruments.

ԳՈՐԾԻՔԱԳՈՐԾ, գ. *մանգ.* tool-maker, instrument-maker.

ԳՈՐԾԻՔԱՅԻՆ, ա. *տեխ.* tool-making, used for making tools; *երաժշ.* instrumental; ◊ **~ համույթ** instrumental ensemble.

ԳՈՐԾԻՔԱՇԻՆԱԿԱՆ, ա. instrument-making.

ԳՈՐԾԻՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. instrument-making (industry).

ԳՈՐԾԻՔԱՎՈՐԵԼ, բ. *երաժշ.* instrument, orchestrate.

ԳՈՐԾԻՔԱՎՈՐՈՒՄ, գ. *երաժշ.* instrumentation.

ԳՈՐԾԿՈՄ, գ. *հպվ.* executive committee.

ԳՈՐԾՆԱԿԱՆ, ա. practical; (գործունյա) active, energetic; (օպերատիվ) operative; (գործարար) business; (գործող) working, operating; (նպատակահարմար, օգտակար) useful, expedient, rational; ◊ **~ մարդ** practical man; **~ պարապմունքներ** practical training/studies.

ԳՈՐԾՆԱԿԱՆԱՊԵՍ, **ԳՈՐԾՆԱԿԱՆՈՐԵՆ** } մ. practically.

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. practicality, practicalness.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. action, operation; (արարք) act, deed; (իրադարձություն) act, action; *բաներ.* act; *մաթ.* operation; ◊ **բռնի ~ներ** forcible acts; **թվաբանական չորս ~ներ** the four rules of arithmetic; **ռազմական ~ներ** military operations, hostilities; *բաներ.* **~ը տեղի է ունենում** the scene is laid, the action takes place; **~թյան ազատություն տալ** give a free hand, give carte blanche, *ֆր.*; **~թյան մեջ դնել** put in action, set going; **~թյան վայր** scene of action; *բաներ.* **երեք ~թյամբ պիես** play in three acts.

ԳՈՐԾՈՆ, գ. factor; ◊ **ժամանակավոր ~** temporary/transient factor; **մշտական ~** permanent factor.

ԳՈՐԾՎԱԾՔ, գ. cloth, fabric, material, textile; (հյուսվածք) knitted fabric; ◊ **մետաքսե ~** silks; **բրդյա ~** woollen cloth.

ԳՈՐԾՎԱԾՔԱՅԻՆ, ա. weaving, weaver's; (հյուսելու) knitting, crochet.

ԳՈՐԾՎԱԾՔԵՂԵՆ, գ. cloth, woven fabrics.

ԳՈՐԾՈՒՂԵԼ, բ. send on business, կամ, on mission.

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ, գ. mission, business trip; ◊ **գիտական ~** scientific mission; **~ման գնալ** go (away/out) on a mission, make a business trip, go away on business; **~ման մեջ լինել** be on a mission/away on business.

ԳՈՐԾՈՒՆ, 1. ա. active , effective, efficacious, effectual; 2. մ. (եռանդագին) actively.

ԳՈՐԾՈՒՆԱԿ, ա. able to function, capable of functioning; *իրավ.* capable.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, գ. activities, activity, practice, functioning, work; ◊ **գիտակցական ~** conscious activity; **գրողի ~** the profession/vocation of a writer, work/occupation as a writer, authorship; **հասարակական ~** public/social work; **հեղափոխական ~** revolutionary activities; **սրտի ~** functioning of heart; **իրավաբանական ~թյամբ զբաղվել** be in legal practice.

ԳՈՐԾՈՒՆՅԱ, ա. active, energetic.

ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅՈՒՆ, գ. effectiveness, efficacy, effectualness.

ԳՈՐՇ, ա. grey, gray; *փիլ.* (աշգույն, աննիտապրքիր) dull, dim; ◊ **~ կյանք** dull life, drab humdrum existence.

ԳՈՐՇԱԳՈՒՅՆ, ա. grey/gray, of grey/gray colour.

ԳՈՐՇԱԽԱՒՌՆ, ա. greyish, grayish.

ԳՈՐՇԱՆԱԼ, բ. go/turn grey, grey, gray.

ԳՈՐՇԱՎՈՒՆ, ա. greyish, grayish.

ԳՈՐՇՈՒԹՅՈՒՆ, գ. grey/gray colour; *փիլ.* dullness, ignorance.

ԳՈՐՇՈՒԿ, գ. *կենդ.* badger.

ԳՈՐՈՎ, գ. tender emotion, tenderness, affection.

ԳՈՐՈՎԱԳՈՒԹ, ա. tender-hearted, compassionate, affectionate.

ԳՈՐՈՎԱԼԻ(Ր), **ԳՈՐՈՎԱԼԻՑ** } ա., մ. touching, moving, affecting.

ԳՈՐՏ, գ. frog.

ԳՈՐՏԱՅԻՆ, ա. frog.

ԳՈՐՏ(Ն)ԱԼՈՂ, **ԳՈՐՏՆԱԼՈՂ** } գ. *մարզ.* breast stroke.

ԳՈՐՏՆՈՒԿ, գ. wart.

ԳՌԵՀԻԿ, ա. vulgar; (կոպիտ) rough, gross; (անվայել, անթույլատրելի) inadmissible, intolerable, indecent, improper.

ԳՌԵՀԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. *լեզվ.* vulgarism.

ԳՌԵՀԿԱՑՆԵԼ, բ. vulgarize, debase.

ԳՌԵՀԿԱՑՈՒՄ, գ. vulgarization, debasing.

ԳՌԵՀԿՈՒԹՅՈՒՆ, գ. vulgarity; (կոպտություն) roughness, rudeness; (հասարակություն) commonplaceness; (անպատշաճություն) impropriety, inadmissibility.

ԳՌՄՌԱԼ, բ. growl, snarl.

ԳՌՄՌՈՑ, գ. growl, snarl.

ԳՌՓԵԼ, բ. grab.

ԳՌՓՈՂ, գ. grabber, self-seeker.

ԳՌՓՈՂԱԿԱՆ, ա. grabbing, self-seeking.

ԳՌՓՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. grabbing, self-seeking.

ԳՎԱՐԴԻԱ, գ. guards.

ԳՎԱՐԴԻԱԿԱՆ, ա. guards.

ԳՏՆԵԼ, բ. find; ◊ (հայտնաբերել) discover.

find out, detect; (համարել) consider, find; (ձեռք բերել) find; ◊ **հաճույք ~** find/take pleasure (in); **մեղավոր ~** find guilty; **մխիթարություն ~** find comfort; **իր մահը ~** meet one's death; **նոր հանքավայրեր՝ հանքերակ ~** strike (oil, a vein); **սատարում ապակցություն ~** find support; **բժիշկը ~ում է** the doctor considers.

ԳՏՆՎԵԼ, բ. be found, turn up, be situated/located; (լինել) be; ◊ **բոլորի համար աշխատանք կ~վի** we will find work for everybody, there will be work for everybody; **նա այնտեղ է ~ում** she is there; **ցանկացողներ չ~ցին** no one volunteered.

ԳՐԱԲԱՐ, գ. Old Armenian (language).

ԳՐԱԲԱՐՅԱՆ, ա. Old Armenian (language, literature).

ԳՐԱԲԵՐ, գ. bearer.

ԳՐԱԳԵՏ, 1. ա. literate, lettered; 2. մ. correctly, grammatically; ◊ **~ շարադրանք** grammatically correct exposition/account.

ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. literacy; (հմտություն) competence, skill; ◊ **~ սովորել** learn reading and writing.

ԳՐԱԳԻՐ, գ. secretary, clerk.

ԳՐԱԳՈՂ, գ. plagiarist.

ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. plagiarism.

ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. business correspondence.

ԳՐԱԴԱՐԱԿ, գ. bookshelf.

ԳՐԱԴԱՐԱՆ, գ. library; ◊ **հանրային ~** public library; **տեղեկատու ~** (գրքերը դուրս չեն տրվում) reference library.

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. library science.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ, ա. library.

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ, գ. librarian.

ԳՐԱԺ, գ. bet; ◊ **~ գալ** bet, lay a bet (on); **~ կգամ, (որ)** I bet (that); **~ը չահել** win the bet; **~ը տանուլ տալ** lose the bet.

ԳՐԱԽԱՆՈՒԹ, գ. bookshop; *ամ.* bookstore.

ԳՐԱԽՈՍ, գ. reviewer, critic.

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ, ա., գ. review, critical.

ԳՐԱԽՈՍԵԼ, բ. review, criticize.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. review, critique; (թատերական) notice.

ԳՐԱԽՈՍՈՒՄ, գ. reviewing.

ԳՐԱԿԱՆ, ա. literary; ◊ **~ անգլերեն** correct English; **~ աշխարհ** literary world; **~ լեզու** literary language; **~ շրջաններ** literary circles.

ԳՐԱԿԱՆԱԳԵՏ, գ. specialist in literature, literary critic.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ, ա. literary critical.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. history of literature, literary criticism.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. literature; ◊ **գեղարվեստական ~** belles-lettres, fiction; **բանավոր՝ անգիր ~** folklore.

ԳՐՔԱՀԱՎԱՔ, **ԳՐՔԱՍԵՐ** } գ. bibliophil(e).

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, գ. publishing house; (գործը) book publishing.

ԳՐԱՃԱՆԱՉ, ա. literate.

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ, գ. reading and writing, ability to read and write, literacy.

ԳՐԱՄ, գ. gramme, gram; ◊ **50 ~** fifty grams.

ԳՐԱՄԱՆՈՑ, 1. ա. gramme, gram; 2. գ. one gram weight.

ԳՐԱՄԵՔԵՆԱ, գ. typewriter.

ԳՐԱՄՈԼ, գ. graphomaniac.

ԳՐԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. graphomania.

ԳՐԱՆԻՏ, գ. granite.

ԳՐԱՆԻՏԵ, **ԳՐԱՆԻՏՅԱ** } ա. granite; *գիտ.* granitic.

ԳՐԱՆՑԵԼ, բ. (գրի առնել) write/put/take down; make a note of; (արձանագրել) record; (գրքում՝ մատյանում) register, enter; (ձայնագրել) record; ◊ **ամուսնությունը ~** register one's marriage; **անձնագիրը ~** register/visa a passport; **արժեթղթեր ~** register securities; **հապճեպ ~** jot down; **որևէ հասցեով ~** register (at an address).

ԳՐԱՆՑԻՉ, գ. registrar, registering clerk.

ԳՐԱՆՑՎԵԼ, բ. register/enter one's name.

ԳՐԱՆՑՈՒՄ, գ. writing down, record; (անձնագրի) visa, registration, registration of a passport; (արձանագրում) recording, entry; (ձայնագրում) tape-recording; ◊ **երկակի ~** dual registration; **սեփականության ~** registration of ownership; **~ման մատյան** register.

ԳՐԱՇԱՊԻԿ, գ. cover; (անջատվող) folder, dust wrapper, dust cover, dust jacket; *ամ.* sleeve.

ԳՐԱՇԱՐ, գ. *տպգր.* compositor, typesetter.

ԳՐԱՇԱՐԱՆՈՑ, գ. *տպգր.* typesetting office.

ԳՐԱՊԱՀԱՐԱՆ, գ. bookcase.

ԳՐԱՊԱՀՈՑ, գ. book depository.

ԳՐԱՅԵԼ, բ. write/put/take down, note, record; (նշումներ անել) take/make notes; (հապճեպ) jot down.

ԳՐԱԴՈՒԹՅՈՒՆ, **ԳՐԱԴՈՒՄ** } գ. writing, record.

ԳՐԱՍԱՐՔ, գ. deskset.

ԳՐԱՍԵՂԱՆ, գ. writing-table, (writing-) desk; (զզրոցներով, դարակներով) bureau.

ԳՐԱՍԵՆՅԱԿ, գ. office, bureau; ◊ **գլխավոր ~** headquarters; **հաստատության ~** registered office; **շինարարական ~** building office.

ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ, ա. office; *փխբ.* (ձևական; բյուրոկրատական) formal, dry, bureaucratic, red-tape; ◊ **~ պիտույքներ** stationery.

ԳՐԱՎ, գ. (առարկան, իրը) pledge, pawn, mortgage; (գործողությունը) pawning; (անշարժ գույքի մասին) mortgaging; ◊ **դրամական ~** security, caution (money); **որպես ~** on the security (of); in security (for); **անշարժ գույքը**

~ դնել mortgage; ~ դնել pawn, hypothecate, put in pledge.

ԳՐԱՎԱԿԱՆ, գ. pledge; (առհավատչյա) guarantee; ◊ **բարեկամության** ~ token of friendship; **հաջողության** ~ pledge/earnest of success.

ԳՐԱՎԱՃԱՌ, գ. bookseller.

ԳՐԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. book-trade.

ԳՐԱՎԱՏՈՒՆ, գ. pawnshop; *ամ.* hockshop.

ԳՐԱՎԵԼ, բ. seize, capture, grab; (հրապուրել) captivate, fascinate, enthrall, attract, draw; (բռնագրավել) confiscate, requisition; (զբաղեցնել) occupy, take up; *մարզ.* win; ◊ **առաջին տեղը** ~ win/capture first place, take (the) first place; **դիրք** ~ occupy/fill a post/position; **իշխանությունը** ~ seize power; **իր կողմը** ~ win round; **մեկի տեղը** ~ take sb's place, supplant/supersede sb; **շատ տեղ** ~ occupy/take (up) much/a lot of room; **պաշտոն** ~ hold/fill a post; **ուշադրություն** ~ attract/draw attention; **քաղաքներ** ~ occupy/capture towns.

ԳՐԱՎԻՉ, ա. attractive, winning; (հրապուրիչ) alluring, inviting, tempting; ◊ ~ **անձնավորություն** attractive personality; ~ **ժպիտ** winning smile.

ԳՐԱՎՈՐ, 1. ա. written; 2. գ. test paper; 3. մ. in writing, in written form; ◊ ~ **աշխատանք** written work; ~ **խոսք** written language; *իրավ.* ~ **հարցաքննություն** letters rogatory; ~ **շարադրել** put sth down on paper; ~ **քննություն** written examination.

ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ, գ. attractiveness, allurements.

ԳՐԱՎՈՒՄ, գ. seizure, capture; (զավթում) occupation; ◊ **իշխանության** ~ seizure of power; **քաղաքական իշխանության** ~ conquest of political power.

ԳՐԱՔՆՆԱԴԱՏ, գ. literary critic.

ԳՐԱՔՆՆԻՉ, գ. censor.

ԳՐԱՔՆՆՉԱԿԱՆ, ա. censorial.

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ, գ. censorship; ◊ ~**ն անցած** passed by the censor, censored, licensed.

ԳՐԳԻՌ, գ. excitation; (զայրույթ, բորբոքում) irritation; (ազդակ) impulse, stimulus (pl. -li), incentive; ◊ **արտաքին** ~**ներ** external stimuli.

ԳՐԳԻՌԵԼ, բ. excite; (բորբոքել) irritate; (դրդել) incite, provoke; (առաջացնել) rouse, arouse, stir; ◊ **ախորժակ** ~ provoke/stimulate/sharpen/whet the appetite; **դեմ** ~ incite sb against, set sb against, instigate (to), set on, urge on.

ԳՐԳՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. excitability.

ԳՐԳՌԻՉ, ա. exciting; (զայրացուցիչ) irritating; (հրահրիչ) inciting, instigating, provoking; (խթանիչ) stimulating, stimulant; (հուզիչ) stirring, exciting.

ԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. excitedness, irritability.

ԳՐԳՌՎԵԼ, բ. (զայրանալ) irritated, angry, exasperated; (հուզվել) agitated; (լարվել) highly strung, wrought up, strung-up; ◊ ~**ված տեսք** excited face/look.

ԳՐԳՌՈՒՄ, գ. excitation, excitement; (հուզում) agitation; (բորբոքում, սաստկացում) kindling, intensication, strengthening.

ԳՐԵԹԵ, վ. almost, nearly; *գրք.* well-nigh; ◊ ~ **ոչինչ** next to nothing; ~ **ոչ մի փոփոխություն** practically no change; ~ **անհնարին** almost well-nigh/practically impossible, next to impossible.

ԳՐԵԼ, բ. write; (ստեղծագործել) write, compose; (թերթերում՝ ամսագրերում) write (for); ◊ **ապրանքագիր** ~ make out an invoice; **գրիչով** ~ write in pen/ink; **երաժշտություն** ~ compose music; ~ **ու թուղթ** writing paper; **հստակ՝ ընթեռնելի** ~ write legibly/plain/a good hand; **ոչ հստակ՝ անընթեռնելի** ~ write illegibly/a bad hand; **մատիտով** ~ write in pencil, make a note in pencil; **մեծատառերով փոքրատառերով** ~ write in upper-case/lower-case (կամ capital/small) letters.

ԳՐԵՆԱԿԱՆ, ա. writing; ◊ ~ **պիտույքներ** stationery, writing materials.

ԳՐԻՉ, գ. pen; ◊ **ինքնահոս** ~ fountain-pen; **գնդիկավոր** ~ ball(-point) pen; ~ **վերցնել** put pen to paper; ~**ի մեկ հարվածով** with a stroke of the pen; ~**ի վարպետ լինել** wield a skilful pen; **մեկի** ~**ին պատկանել** belong to one's pen.

ԳՐԿԱՔԱՑ, ա. with open arms; ◊ ~ **ընդունել** receive with open arms, give a cordial/hearty welcome.

ԳՐԿԱԽԱՌՆՎԵԼ, բ. embrace, hug one another.

ԳՐԿԱԽԱՌՆՈՒԹՅՈՒՆ, **ԳՐԿԱԽԱՌՈՒՄ** } գ. embrace.

ԳՐԿԵԼ, բ. embrace, take/fold/clasp in one's arms; *խսկց.* put one's arms (round).

ԳՐՈՀ, գ. attack, storm; ◊ **հեծյալ** ~ cavalry charge; **հետիոտն** ~ assault; **սվինային** ~ bayonet attack/charge, assault with the bayonette; **օդային** ~ air attack; ~**ի գնալ՝ նետվել** advance/rush to the attack; ~ **ով վերցնել առնել** take/capture by storm; ~ **տալ**, *տես* ԳՐՈՀԵԼ:

ԳՐՈՀԱՅԻՆ, **ԳՐՈՀԻՉ** } ա. assault; ◊ ~ **ավիացիա** assault aircraft, low flying attack aircraft; *ամ.* attack plane; ~ **ջոկատ** assault detachment.

ԳՐՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. *խսկց.* rush work.

ԳՐՈՀԵԼ, բ. attack, storm, assault, rush; (հեծելազորով) charge; ◊ **թևից** ~ take in flank; **թիկունքից** ~ take in the rear.

ԳՐՈՀՈՒՄ, *տես* ԳՐՈՀ:

ԳՐՈՂ[1], գ. writer, author, man of letters; (արձակագիր) prose-writer, prosaist; ◊ **կին ~** (lady) writer, author(ess).

ԳՐՈՂ[2], գ. devil, deuce; (չար ոգի) evil spirit; ◊ **~ը տանի** deuce take it! damn! confound it!; **~ի ծոցը (գնա)** (go) to the devil/hell; **~ի ծոցում** at the world's end, in the back of beyond; **~ի տարած՝ բաժին** cursed, damned, accursed.

ԳՐՈՇ, գ. penny, farthing; ◊ **առանց ~ լինել** be penniless/without a penny, not have a penny to one's name; **~ի արժեք չունենալ** be not worth a brass farthing/a penny.

ԳՐՈՇԱՆԱՅՆ, ա. cheap; (մանր, ճղճիմ) paltry, petty.

ԳՐՉԱԾԱՅՐ, գ. pen.

ԳՐՉԱԿ, գ. *պոետ.* scribbler; (խզբզող) scrawler; (թուղթ մրոտող) quill-driver, ink-slinger.

ԳՐՉԱԿԻՑ, գ. fellow-writer, pen-pal.

ԳՐՉԱԿԱՒՃ, գ. pen-holder.

ԳՐՉԱՏՈՒՓ, գ. pencil box, pencil case.

ԳՐՊԱՆ, գ. pocket; ◊ **ժամացույցի ~** watch pocket, fob; **կողքի ~** side pocket; **տաբատի հետևի ~** hip-pocket; **~ը դնել** put into the pocket; **~ը հաստացնել** line one's pockets; **~ի բառարան** pocket dictionary; **~ի դրամ՝ փող** pocket money; **~իս խփել՝ հարվածել** cost a pretty penny; **~ից հանել** take out of the pocket; **~ում մկներ են խաղում, ~ը դատարկ է** be penniless, be without a penny, not have a penny in one's pocket.

ԳՐՊԱՆԱՀԱՏ, գ. pickpocket.

ԳՐՊԱՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. pickpocketing.

ԳՐՊԱՆԱՅԻՆ, ա. pocket.

ԳՐՊԱՆԵԼ, բ. *խոսկ.* pocket.

ԳՐՎԱԾՔ, գ. work, work of literature, writing; ◊ **ընտիր ~ներ** selected works, selections; **լավագույն ~** masterpiece, chef d'oeuvre.

ԳՐՎԱՆՔԱ, գ. *հնց.* (կշռի միավոր. ֆունտ) pound; (այդ չափի կշռաքար) weight (409 gr.).

ԳՐՎԵԼ, բ. be written; (ուղղագրության մասին) spell, be spelt; ◊ **ինչպե՞ս է այդ բառը ~ում** how is this word spelt? how do you spell this word?

ԳՐՏՆԱԿ, գ. rolling-pin.

ԳՐՏՆԱԿԵԼ, բ. roll (out); ◊ **խմորը ~** roll the dough/paste.

ԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. (երկտող) note, letter; ◊ **պաշտոնական ~** official letter, memorandum; **կից ~** covering letter; **հետ~** postscript (p.s.).

ԳՐՔԱՅԻՆ, ա. bookish; (վերացական) abstract; (ոչ գործածական, ոչ կենսական) unpractical; ◊ **~ արտահայտություններ** bookish expressions; **~ գիտելիքներ** book-knowledge/science; **~ ոճ** pedantic/bookish style.

ԳՐՔԱՆԻՇ, գ. ex-libris, bookplate.

ԳՐՔԱՍԵՐ, գ. bibliophile, lover of books, *խոսկ.* bookworm.

ԳՐՔՈՒՅԿ, գ. (փոքր գիրք) brochure, notebook; ◊ **գրպանի ~** pocketbook; **թոշակի ~** pension card; **խնայդրամարկղի ~** savings-account book; **չեկի ~** cheque-book.

ԳՑԵԼ, բ. (նետել) throw; (շպրտել) hurl, chuck, fling; (անցկացնել, տեղադրել) lay, build, construct; (թողնել) give up, leave off; (տապալել) throw off/down, overthrow; *փխր.* cast, dart, fling, hurl; ◊ **անկողինը ~** make the bed; **անուշը ~** injure; **ապակի ~** glaze; **ատամ(ներ)ը ~** have a set of teeth made, to have a tooth made; **արմատ ~** take root; **բանտ ~** fling/throw/cast into prison/goal; **գետին ~** drop, let fall; **զառերը ~** throw/cast the dice; **թունել ~** build/dig/make a tunnel; **իրար վրա ~** blame each other; **խարիսխ ~** cast/drop anchor; **կամուրջ ~** construct a bridge; **հայացք ~** cast a glance (at), dart/shoot a glance (at), cast one's eyes (at, over); **ձեռքը ~** raise, kam, hold/reach out one's hands; **ճանապարհ ~** accompany, see (to); **ճանկը ~** seize, get hold of; **միտքը ~** remind (of); **հոգի օրը ~** drive to despair; **պաշտոնից ~** remove from office, sack, *խոսկ.*; **ռումբ ~** drop bombs; **սեղան ~** lay the table; **ստվեր ~** cast/throw a shadow; **վրան ~** throw (on, over); **տեղը ~** fix, put (into, in); *բժշկ.* **(թևը) տեղը ~** set, reduce; **քաշը ~** slim; **քար ~** cast a stone.

ԳՈՒԹ, գ. mercy, charity, clemency; (կարեկցանք) compassion; (խղճահարություն) pity; ◊ **~ զգալ** feel (for); **~ ունենալ** have/take compassion (on, upon).

ԳՈՒԹԱՆ, գ. plough.

ԳՈՒԹԱՆԱՎԱՐ, գ. ploughman.

ԳՈՒԺԵԼ, բ. inform bad/mournful/grievous news, give/break sad news.

ԳՈՒԺԿԱՆ, գ. messenger/herald of sad news/misfortune.

ԳՈՒԼՊԱ, գ. stocking, sock, hose; ◊ **մետաքսե՝ բրդե ~ներ** silk/woollen stockings; **հաստերը չփախչող ~** nonrun stockings; **կարճ ~ներ** socks.

ԳՈՒԼՊԱՅԱԳՈՐԾ, գ. stocking-maker.

ԳՈՒԼՊԱՅԱԳՈՐԾԱԿԱՆ, ա. stocking-making.

ԳՈՒԼՊԵՂԵՆ, գ. hosiery.

ԳՈՒՄԱԿ, գ. string of carts; *ռզմ.* (unit) transport; *ամ.* train.

ԳՈՒՄԱՐ, գ. sum; ◊ **մեծ ~** large sum; **ընդհանուր ~** total sum.

ԳՈՒՄԱՐԵԼ, բ. add/sum up, summarize; (հրավիրել. ժողով՝ նստաշրջան) call together, summon, convoke, convene; (ի մի բերել, միավորել) assemble, bring/get together, hold a reunion.

ԳՈՒՄԱՐԵԼԻ, գ. *մար.* item.

ԳՈՒՄԱՐՏԱԿ, գ. battalion; ◊ **կապի ~** signal battalion; **հրաձգային ~** infantry battalion;

սակրավոր ~ field engineer battalion; **~ի հրամանատար՝ պետ** battalion commander.
ԳՈՒՄԱՐՏԱԿԱՅԻՆ, ա. battalion.
ԳՈՒՄԱՐՈՒՄ, գ. *մաթ.* adding, composing, addition; (հրավիրում) convocation; ◊ **ժողովի** ~ calling/convening of a meeting; *ֆիզ.* **ուժերի** ~ composition of forces.
ԳՈՒՅԺ, գ. grievous/bad/sad/mournful news, sorrowful message.
ԳՈՒՅՆ, գ. colour, coloration, colouring; ◊ **կարմիր** ~ red (colour); **դեմքի** ~ complexion; *ֆիզ.* **հիմնական ~եր** primary colours; **լրացուցիչ ~եր** complementary colours; **պաշտպանական** ~ protective coloration; **~երը խտացնել** exaggerate, lay it thick, *դրմ.*; **սև ~երով տեսնել՝ ներկայացնել** see/show everything in the worst light; **~ը գցել** *տե՛ս* ԳՈՒՆԱԹԱՓՎԵԼ; **ամեն ~ի ու երանգի** of every colour and stripe; ~ **տալ** ~ **առնել** change (one's) countenance.
ԳՈՒՅՆԱԳՈՒՅՆ, ա. many-coloured; (բազմագույն) multi-coloured; (խայտաբղետ) motley, particoloured; (երփներանգ) variegated.
ԳՈՒՅՔ, գ. property, belongings; (ապրանք) stock, goods; *ռզմ.* stores; ◊ **անշարժ** ~ real property/estate, *ամ.* realty; **գյուղատնտեսական** ~ agricultural implements; **կենդանի** ~ livestock; **մեռյալ** ~ dead stock, farm equipment; **շարժական** ~ personal/movable property, personal estate; **պետական** ~ state property; **սեփական՝ անձնական** ~ private property, goods and chattels.
ԳՈՒՅՔԱԳՐԵԼ, բ. make an inventory, inventory, take stock (of).
ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, գ. making inventory, taking stock.
ԳՈՒՅՔԱՄԱՏՅԱՆ, գ. inventory.
ԳՈՒՅՔԱՅԻՆ, ա. property; ◊ ~ **ցենզ** property qualification; ~ **հարաբերություններ** property relations.
ԳՈՒՅՔԱՓՐԿՈՒՄ, գ. salvage, ◊ **~ման պայմանագիր** salvage contract.
ԳՈՒՆԱԳԵՂ, ա. colourful, (highly) coloured; (պատկերավոր) picturesque; (գունեղ, վառ) vivid.
ԳՈՒՆԱԶԱՐԴ, ա. painted, coloured.
ԳՈՒՆԱԶԱՐԴԵԼ, բ. paint, colour.
ԳՈՒՆԱԶԱՐԴՈՒՄ, գ. colouring, painting.
ԳՈՒՆԱԶԱՐԿԵԼ, բ. decolo(u)rize, decolour, fade; *փխբ.* make colourless/insipid, deprive of colour.
ԳՈՒՆԱԹԱՓ, ա. faded, discoloured; (գունատ. մարդու մասին) pale, pallid.
ԳՈՒՆԱԹԱՓՈՒՄ, գ. decolo(u)ration.
ԳՈՒՆԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ, գ. (մարդու մասին) pallor, paleness.
ԳՈՒՆԱԹԱՓՎԵԼ, բ. fade, lose colour.
ԵՌԱՀԱՐԿ, ա. three-storied, of three stories.
ԵՌԱՀԵՐԹ, ա. three-shift; ◊ **~ աշխատանք** three-shift work.
ԵՌԱՀՆՉՅՈՒՆ, գ. *լեզվ.* triphthong, *տե՛ս նաև* ԵՌԱԲԱՐԲԱՌ:
ԵՌԱՁԱՅՆ, ա. *երաժշ.* three-part; ◊ **~ ֆուգա** three-part fugue.
ԵՌԱՖԱՅՈՒՂ, ա. *ֆիզ.* three-phase.
ԵՌԱՄՅԱ, ա. three-year; *գրք.* triennial; (տարիքի մասին) of three, three-year-old; ◊ **~ դասընթաց** three-year course; **~ երեխա** child of three, three-year-old child; **~ ուսուցում** three-year education/training/instruction.
ԵՌԱՄՅԱԿ, գ. (տարեդարձ) third anniversary; (ժամանակամիջոց) (period) of three years; *գրք.* triennial period.
ԵՌԱՄՅԱՆ, ա. (տևողությամբ) of three months, three month, quarterly, trimestrial; (տարիք) three-months old.

ԵՌԱՄՅԱԿ, գ. quarter.
ԵՌԱՄՅԱԿԱՅԻՆ, ա. quarterly; ◊ ~ **հաշվետվություն** quarterly account.
ԵՌԱՆԴ, գ. energy; (ջանք) ardour, fervour; (փույթ) zeal; ◊ **~ով աշխատել** work with zeal/diligence.
ԵՌԱՆԴԱԳԻՆ, մ. energetically, ardently, fervently.
ԵՌԱՆԴԱԼԻՑ, *տես* ԵՌԱՆԴՈՏ, ԵՌԱՆԴՈՒՆ:
ԵՌԱՆԴԱՄ, գ., ա. trinomial.
ԵՌԱՆԴՈՏ, **ԵՌԱՆԴՈՒՆ** } ա. zealous, ardent, energetic, fervent.
ԵՌԱՆԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ, գ. *հզվ.* zeal, ardency, fervency.
ԵՌԱՆԻԾ, *տես* ԵՌԱԹԻՎ:
ԵՌԱՆԻՍ, ա. three-edged; *մաթ.* trihedral.
ԵՌԱՆԻՎ, ա. three-wheeled; ◊ ~ **հեծանիվ** tricycle; ~ **մոտոցիկլետ** motor tricycle.
ԵՌԱՆԿԱՐ, գ. *արվ.* triptych.
ԵՌԱՆԿՅՈՒՆ, 1. ա. three-cornered; *մաթ.* triangular; 2. գ. triangle.
ԵՌԱՆԿՅՈՒՆԱՉԱՓԱԿԱՆ, ա. *մաթ.* trigonometric(al); ◊ ~ **ֆունկցիա** trigonometrical function.
ԵՌԱՆԿՅՈՒՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, գ. *մաթ.* trigonometry; ◊ **ուղղագիծ** ~ plane trigonometry; **գնդաձիգ աֆերիկ** ~ spherical trigonometry.
ԵՌԱՆՎԱԳ[1], գ. *երաժշ.* trio; ◊ **լարային** ~ string trio.
ԵՌԱՆՎԱԳ[2], մ. (երեք անգամից) three-times, thrice-repeated.
ԵՌԱՇԵՐՏ, ա. three-layered; ◊ ~ **ներքատախտակ ֆաներա** three-ply.
ԵՌԱՉԱՓ, ա. *տրչփ.* of three feet, trimeter; ◊ ~ **տող** verse of three feet/measures; ~ **յամբ** iambic trimeter.
ԵՌԱՊԱՏԻԿ, մ. threefold, three times, triple, treble; ◊ ~ **վճարել** pay three times as much.
ԵՌԱՊԱՏԿ(Վ)ԵԼ, բ. treble, triple, triplicate.
ԵՌԱՊԱՏԿՈՒՄ, գ. trebling, triplication.
ԵՌԱՊԱՏԿՈՒԹՅՈՒՆ, գ. *գրք.* triplicity.
ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. *պատմ.* triumvirate, triarchy.
ԵՌԱՍՏԻՃԱՆ, ա. of three degrees; *երաժշ.* of three notes/tones.
ԵՌԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. *կրոն.* tritheism, triune deity.
ԵՌԱՎԱՆԿ, ա. *քեր.* trisyllabic; ◊ ~ **բառ** trisyllable.
ԵՌԱՏԱՄ, 1. ա. tridented, tridentate; 2. գ. trident.
ԵՌԱՏԵՐԵՎ, գ. *բուս.* trefoil, trifoliate, tripetalous, shamrock.
ԵՌԱՍՏԱՆԻ, ա. three-star; ◊ ~ **հյուրանոց** three-star hotel.
ԵՌԱՑՆԵԼ, բ. boil; ◊ **~րած ջուր** boiled water.
ԵՌԱՑՈՒՄ, գ. boiling.
ԵՌԱՑՈՒՑԻՉ, գ. boiler; ◊ ~ **կաթսա** boiling-tank, boiling pot.
ԵՌԱՓԵՂԿ, ա. three-leaved; ◊ ~ **պահարան** three-leaved wardrobe.
ԵՌԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. *գրկ.* trilogy.
ԵՌՅԱԿ, 1. գ. three; 2. ա. threefold, triple; (տղամարդու բաճկոնակով կոստյում) a three-piece suit, man's suit with a waistcoat; ◊ *պատմ.* ~ **համաձայնություն** Triple Entente; **ձիերի** ~ carriage-and-three; *պատմ.* ~ **միություն** Triple Alliance; *խորհ.* ~ **(կոմիտե)** three-men-committee.
ԵՌՈՏԱՆԻ, գ. tripod, tripedal.
ԵՌՈՒՉԵՒ, գ. full swing; (աշխույժ) liveliness, animation; (շտապողականություն) feverish haste, hurry-scurry, hurry; ◊ **աշխատանքը ~ի մեջ է** the work is in full swing.
ԵՌՈՒՄ, գ. boiling; ◊ **~ան կետ** boiling point.
ԵՌՕՐՅԱ, ա. three-day, of three days, ◊ ~ **տենդ** tertian ague.
ԵՍ, դ. I; ◊ ~ **ինքս** I myself; **օրինակ** ~ I for one; **ոչ** ~ not I/me.
ԵՍԱԿԱՆ, ա. selfish, egoistical, self-loving.
ԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. self-love.
ԵՍԱԿԵՆՏՐՈՆ, ա. egocentric(al).
ԵՍԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. egocentrism.
ԵՍԱՄԻԼ, գ. egoist.
ԵՍԱՄԻԼԱԲԱՐ, մ. egoistically.
ԵՍԱՄԻԼԱԿԱՆ, ա. egoistic(al), selfish.
ԵՍԱՄԻԼՈՒԹՅՈՒՆ, գ. egoism, selfishness.
ԵՍԱՊԱՇՏ, *տես* ԵՍԱՄԻԼ:
ԵՍԱՊԱՇՏԱԿԱՆ, *տես* ԵՍԱՄԻԼԱԿԱՆ:
ԵՍԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, *տես* ԵՍԱՄԻԼՈՒԹՅՈՒՆ:
ԵՍԱՍԵՐ, 1. գ. egoist, self-lover, egotist; 2. ա. selfish, egoistical, self-loving.
ԵՍԱՍԻՐԱԲԱՐ, մ. selfishly, egoistically, egotistically.
ԵՍԱՍԻՐԱԿԱՆ, ա. selfish, egoistical, egotistical.
ԵՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. self-love, egoism, egotism.
ԵՎ, շ. and; (նաև, ևս) too, also, as well; (ժխտ. առումով) either; ◊ ~ - ~ both...and; ~ **ահա** and now; ~ **այլն** etcetera, etc, and so forth, and so on; ~ **այն էլ,** ~ **դեռ** and what is more, in addition, and moreover; ~ **այլք** and others; ~ **այսպես** thus, so; ~ **այսպես, ~ այնպես** this way and that; this way, that way and every way; ~ **դարձյալ** and again, besides; ~ **ես** ~ **ընկերս** both my friend and I/me; ~ **իսկապես** indeed, really; ~ **ոչ թե** and not; ~ **ոչ միայն** and not only; **այստեղ մի** ~ **կա** there is sth wrong here.
ԵՎԵԹ, վ. just; ◊ **այժմ** ~ just/exactly now; **այսօր** ~ just today; **իսկույն** ~ just/right now, immediately; **վաղը** ~ just/exactly tomorrow.
ԵՎԱ, մ. more, some more; (նույնպես, նաև)

also, as well; too; ◊ **առավել ~** the more so, especially as; **այս դեպքում ~** in this case too; **նա ~ այդ չարեց** he did not do it either; **նա ~ չի գա** he will not come either; **տուր ինձ ~ մեկ գիրք՝ մի քիչ կաթ** give me one more book/ some more milk.

ԵՎՐԱՀԱՄԱՅՆՔ, գ. European Union (EU); ◊ **~ի խորհուրդ** EU Council.

ԵՎՐԱՊԱՐԼԱՄԵՆՏ, գ. European Parliament, Europarliament.

ԵՎՐՈ, գ. euro.

ԵՎՐՈՐԴՈՒՅԹ, գ. euro-currency (ecu).

ԵՎՐՈՊԱԿԱՆ, ա. European; ◊ **~ արժութային համակարգ** European Monetary System; **~ քաղաքակրթություն** western civilization.

ԵՎՐՈՊԱԿԱՆԱՆԱԼ, բ. become Europeanized.

ԵՎՐՈՊԱԿԱՆԱՅՆԵԼ, բ. Europeanize.

ԵՎՐՈՊԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. Europeanization.

ԵՎՐՈՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Europeism.

ԵՎՐՈՊԱՑԻ, գ. European.

ԵՐԱՉ, գ. dream; (անուրջ) reverie, day-dream, dream; (տեսիլք) vision; ◊ **~ների աշխարհ** dream-land, the realm of fancy; **~ տեսնել** dream, have a dream; **~ում** in one's sleep/ dream; **~ում տեսնել** dream (about/that).

ԵՐԱՉԱԿԱՆ, **ԵՐԱՉԱՅԻՆ** ա. spectral; (տեսիլքային) phantasmal; (խարուսիկ) shadowy; (գնորական) ghostly; (անիրական) unreal, illusory.

ԵՐԱՉԱՆՄԱՆ, ա. spectral, phantasmal.

ԵՐԱՉԱՆՔ, գ. dreaming, dream, day-dream, waking-dream; (տեսիլք) vision, fancy; (բաղձանք) longing; (գնորք) ravings, delirium.

ԵՐԱՉԵԼ, բ. dream (of), rave; (անրջել) reverie, be lost in reverie, indulge in reverie; ◊ **հարթմնի ~** day-dream.

ԵՐԱՉԵԼԻ, ա. dreamt, desired, longed-for.

ԵՐԱՉՈՂ, 1. ա. dreaming; 2. գ. dreamer, day-dreamer, visionary.

ԵՐԱՉԿՈՏ, ա. dreamy; (մտածկոտ) pensive, thoughtful; (անրջող) day-dreamer; ◊ **~ տեսք՝ հայացք** dreamy look, air of reverie.

ԵՐԱՉԿՈՏՈՒԹՅՈՒՆ, գ. dreaminess, reverie; (մտածկոտություն) pensiveness.

ԵՐԱՉՈՒՆ, ա. dreamy; (մտածկոտ) pensive; (տենչալի, ցանկալի) longed for, desired, long-wished for.

ԵՐԱԺԻՇ, գ. musician.

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ, գ. music(al) expert, musicologist.

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ, ա. musicological.

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. musicology, musical science.

ԵՐԱԺՇՏԱԽՈՒՄԲ, գ. orchestra; (փողային) brass band; (ժողգործիքների) folk orchestra.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ա. musical; ◊ **~ գործ** composition; **~ գործիք** musical instrument; **~ դպրոց** music school; **~ լսողություն** an ear for music; **~ կատակերգություն** musical comedy; **~ տաղանդ** talent for music, musical talent; **~ քննադատ** music critic.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆՈՐԵՆ, մ. musically.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. musicality, musicalness.

ԵՐԱԺՇՏԱՄԱԼ, *տե՛ս* ԵՐԱԺՇՏԱՍԵՐ:

ԵՐԱԺՇՏԱՄՏԱԼՈՒԹՅՈՒՆ, *տե՛ս* ԵՐԱԺՇՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ:

ԵՐԱԺՇՏԱՆՈՑ, գ. conservatory, conservatoire.

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ, գ. music master, maestro; (նվագախմբի) band master; (երգչախմբի) choir master.

ԵՐԱԺՇՏԱՍԵՐ, գ. ա. lover of music, music lover.

ԵՐԱԺՇՏԱՍԻՐԱԿԱՆ, ա. philharmonic.

ԵՐԱԺՇՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. love of music, melomania.

ԵՐԱԺՇՏԱՍՐԱՀ, գ. concert hall.

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. music; (երկը, ստեղծագործությունը) music, composition; ◊ **գործիքային ~** instrumental music; chamber music; **երգեցողական ~** vocal music; **Խաչատրյանի ~ը** Khachaturian's music; **~ի վերածել** set to music; **~ով զբաղվել** practice music; **~ի տակ պարել** dance to (the) music.

ԵՐԱԽ, գ. mouth (of animal), jaws; *տեխ.* orifice; ◊ **գենքի ~** muzzle, blade; **հրաբխի ~** crater.

ԵՐԱԽՏԱԳԵՏ, ա. grateful, thankful; ◊ **~ լինել** be grateful/thankful.

ԵՐԱԽՏԱԳԻՏԱՐԱՐ, մ. gratefully, thankfully.

ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ, ա. gratifying, grateful, thankful.

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՐԵՆ, *տե՛ս* ԵՐԱԽՏԱԳԻՏԱՐԱՐ:

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. gratitude, thankfulness, acknowledgment.

ԵՐԱԽՏԱՀԱՏՈՒՑ, ա. grateful, thankful; ◊ **~ լինել** show one's gratitude, return smb's kindness; (փոխհատուցել) pay back, repay.

ԵՐԱԽՏԱՄՈՌ, ա. ungrateful, thankless, unthankful.

ԵՐԱԽՏԱՄՈՌՈՒԹՅՈՒՆ, գ. ingratitude.

ԵՐԱԽՏԱՊԱՐՏ, ա. indebted, grateful, thankful, obliged; ◊ **~ լինել** be obliged/indebted/ grateful/thankful; **ես ձեզ անչափ ~ եմ** I am very much obliged to you; *խսկց.* much obliged.

ԵՐԱԽՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ, գ. gratitude, thankfulness, indebtedness; ◊ **~ի զգացում** feeling of gratitude.

ԵՐԱԽՏԱՎՈՐ, 1. ա. merited, well-deserved; 2. գ. highly merited person; (բարեգործ, բարերար) benefactor, beneficient.

ԵՐԱԽՏԻՔ, գ. benefit, good deed, kindness, boon; (վաստակ) merit, deserts, benefit.

ԵՐԱԿ, գ. vein; (զարկերակ) artery, pulse; *հնք.*

lode; ◊ **արյունատար** ~ vessel, blood vessel; **ոսկե** ~ gold mine; **~ը չոշափել** feel the pulse; **~ների բորբոքում** phlebitis; **~ների լայնացում** varicose veins; **~ներում արյունը սառչում է** it chills one's blood, one's blood freezes (in one's veins).

ԵՐԱԿԱԶԱՐԿ, գ. *բժշկ.* pulse, pulsation; ◊ **անկանոն** ~ uneven/irregular pulse; **ընդհատումներով** ~ dropped-beat/intermittent pulse; **թույլ** ~ obliterated pulse.

ԵՐԱԿԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. *բժշկ.* vasectomy, venesection, phlebotomy; *խսկզ.* blood-letting.

ԵՐԱԿԱՅԻՆ, ա. *կզմխս.* venous, vascular, of veins, pertaining to veins.

ԵՐԱԿԱՎՈՐ, ա. sinewy, stringy, veined, veiny; ◊ **~ ձեռքեր** sinewy/knotty hands.

ԵՐԱՄ, գ. bevy; (թռչունների) flock, flight; (ձկների) run, school, shoal; (մի ջատների) swarm.

ԵՐԱՄԱԿ, գ. (ձիերի) herd/drove of horses.

ԵՐԱՄԱԿԱՅԻՆ, ա. herd, drove.

ԵՐԱՄԱԿԱՊԱՆ, գ. horse-herd; (օգնական տղա) horse-boy.

ԵՐԱՄԱԲԵՎ, մ. in flocks/swarm/shoal.

ԵՐԱՄԱՅԻՆ, ա. of flock/swarm/shoal.

ԵՐԱՄԱՊԵՏ, գ. leader of the flock/swarm/shoal.

ԵՐԱՆԳ, գ. nuance, shade; (երանգավորում) inflection; (գույնի մասին) tint, hue, tinge, colouring; *երաժշ.* tone; ◊ **իմաստի ~ներ** shades of meaning; **մեղմ ~ներ** mild colours.

ԵՐԱՆԳԱԽԱՂ, գ. tint, tinge, play; *երաժշ.* modulations.

ԵՐԱՆԳԱՊՆԱԿ, գ. palette.

ԵՐԱՆԳԱՎՈՐ, ա. iridescent; (ծայնի մասին) lilting.

ԵՐԱՆԳԱՎՈՐԵԼ, բ. shade, tincture; *փխբ.* (զարդարել, արտահայտիչ դարձնել) put expression, set off.

ԵՐԱՆԳԱՎՈՐՈՒՄ, գ. shading; (գունազարդում) colour, colouring, coloration.

ԵՐԱՆԵԼԻ } ա. blissful, beatific,
ԵՐԱՆԱՎԵՏ } blessed.

ԵՐԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. beatitude, blessedness; (երանություն) bliss; (երջանկություն) felicity, happiness.

ԵՐԱՆԻ, վ. blessed, happy; ◊ **~ թե** I wish, if only; **~ թե այդպես լիներ** I wish/if (only) it were so; **~ տալ** consider happy/lucky, beatify; **~ քեզ** how lucky you are! lucky you!

ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. bliss, happiness, felicity; ◊ **~յան մեջ լինել** be in perfect bliss, be in (the) seventh heaven, *դրվ.*:

ԵՐԱՇԽԱՎՈՐ, գ. guarantee, guarantor, bail; ◊ **~ լինել** stand surely for; **~ կանգնել** answer (for sb), vouch (for sb).

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ, գ. letter of recommendation, credentials, reference.

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԿԱՆ, ա. recommendation, guarantee; ◊ **~ նամակ** letter of recommendation/reference.

ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ, բ. guarantee/warrant/certify (smth), guarantee/secure (against), vouch/go bail (for), bail out.

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. guarantee, guaranty, warrant; *իրավ.* (գրավոր երաշխիք) bail-bond; ◊ **~յամբ արձակել** accept/take/bail (for), hold to bail.

ԵՐԱՇԽԻՔ, գ. guarantee, bail, warranty; ◊ **բարեկամության ~** token of friendship; **հաջողության ~** pledge/guarantee of success; **~ տալ** guarantee; **~ով ազատվել** accept/take bail (for), hold to bail; **մեկի համար ~ տալ** bail (out), go bail (for).

ԵՐԱՇԽՔԱՅԻՆ, ա. guarantee; ◊ **~ ժամկետ** guarantee term, term of guarantee.

ԵՐԱՇՏ, 1. գ. drought, dryness, aridity; 2. ա. (չոր) dry, arid, drought-afflicted; ◊ **~ գոտի** arid/drought zone; **~ տարի** dry/arid year, year of drought.

ԵՐԱՇՏԱԴԻՄԱՑԿՈՒՆ } ա. drought-resis-
ԵՐԱՇՏԱԿԱՅԻՆ } tant.

ԵՐԱՇՏԱԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ } գ.
ԵՐԱՇՏԱԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ } drought-resistance.

ԵՐԱՇՏԱՀԱՎ, գ. tomtit, titmouse, blue titmouse.

ԵՐԱՇՏԱՅԻՆ, ա. arid, dry, drought-afflicted.

ԵՐԱՍԱՆ(ԱԿ), գ. reins; *խսկզ.* ribbons; (սանձ) bridle; ◊ **~ը քաշել** draw the rein(s), hold in leash; *փխբ.* (զգաստացնել, կարգի հրավիրել) keep in check; **~ները թողնել** give horse the rein/reins; *փխբ.* (ազատություն տալ) slacken the reins.

ԵՐԲ, մ. when; (հարաբերական) while, when; ◊ **այն ժամանակ, ~** when, while; **մինչև ~՞** how long? till what time? till when? **~վանի՞ց** since when? **~ էլ որ** whenever; **~ կարդում էր, քնեց** while he was reading he fell asleep; **~՞ նա կգա** when will he come? **նա կգնա, ~ ավարտի աշխատանքը** he will leave, when he finishes work.

ԵՐԲԵՄՆ, մ. sometimes, at times, (every) now and then; (ժամանակ առ ժամանակ) now and again, from time to time; ◊ **~ այսպես, ~ այլ կերպ** sometimes this way, sometimes otherwise.

ԵՐԲԵՄՆ-ԵՐԲԵՄՆ, մ. now and then, from time to time.

ԵՐԲԵՄՆԻ, ա. one-time; (նախկին) former, late, ex-, quondam; ◊ **~ նախարար** ex-minister, former minister; **~ ղեկավար** former manager; **~ բնկեր** quondam friend; **~ պրեզիդենտ նախագահ** ex-president.

ԵՐԲԵՎ: } մ. ever; (ապագայի մասին)
ԵՐԲԵՎԻՑԵ } some time/day; (հարց. և պայմ. նախադասություններում) ever, ◊ **դուք նրան ~ տեսե՞լ եք** have you ever seen him?

ԵՐԲԵՔ, մ. never; (բնավ, ամենևին) never, not at all; ◊ **այժմ կամ ~** now or never; **ինչպես ~** as never before; **~ կյանքում** never in one's life/born days/as long as one lives; **լավ է ուշ, քան ~** better late than never.

ԵՐԳ, գ. song; (եղանակ, մեղեդի) air, tune; (կրկներգով) roundalay; (քերթված) canto; ◊ **ազգային ~** national song; **ժողովրդական ~** folk/popular song; **խնջույքի ~** drinking-song; **հարսանեկան ~** nuptial song; canticle hymn; epithalamium, *բնաս.*; **հոգևոր ~** motet, anthem; **կարապի ~** swan song; *աստված.* **~ ~ոց** Canticles, the song of songs, the song of Solomon; **~ի փառատոն** song festival; **ինն ~ է** it is the same old story; **նրա ~ը ~ված է** he is done for, his goose is cooked, *դիմ.*; **նույն ~ը ~ել** harp in the same string, *դիմ.*:

ԵՐԳԱԽԱՂ, գ. story/legend performed by singing; (մրցույթ) singing competition.

ԵՐԳԱԽԱՌՆ, ա. accompanied by singing/songs; (երգերով ընդմիջված) recessed/accompanied by vocal intermezzi.

ԵՐԳԱԿՑԵԼ, բ. (ձայնակցել) join in singing/in a song; (միասին երգել) sing jointly.

ԵՐԳԱԿՑՈՒԹՅՈՒՆ, **ԵՐԳԱԿՑՈՒՄ** } գ. joint singing, participation in singing.

ԵՐԳԱՀԱՆ, գ. author/composer of songs.

ԵՐԳԱՅԻՆ, ա. song, of songs, melodious.

ԵՐԳԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. melodiousness;

ԵՐԳԱՇԽԱՐՀ, գ. world of songs.

ԵՐԳԱՊՆԱԿ, *տես* ՁԱՅՆԱՊՆԱԿ:

ԵՐԳԱՍԱՑ, գ. singer, performer of songs.

ԵՐԳԱՍԵՐ, ա. melomaniac; *խսկց.* song-mad.

ԵՐԳԱՐԱՆ, գ. book of songs, song-book, singing book.

ԵՐԳԱՐՎԵՍՏ, գ. art of singing.

ԵՐԳԱՑԱՆԿ, գ. repertoire, repertory.

ԵՐԳԵԼ, բ. sing; *եկեղ.* chant; (կիսաձայն) hum; (թռչունի մասին) pipe, warble; (աքաղաղի մասին) crow; (գովերգել) sing the praise; *փիլիսփ.* glorify; (դերը կատարել) sing the part (of); (ասերգել) intone; (տարբեր ձայների մասին. ինքնաեռ, թեյամած ևն) sing, whistle, hiss; ◊ **ճիշտ՝ սխալ ~** sing in tune/out of tune; **բաս՝ սոպրանո և այլ ձայնով ~** have a bass/a soprano etc. voice.

ԵՐԳԵՀՈՆ, գ. organ, church organ.

ԵՐԳԵՀՈՆԱՀԱՐ, գ. organist.

ԵՐԳԵՀՈՆԱՅԻՆ, ա. organ.

ԵՐԳԵՑԻԿ, ա. singing; ◊ **~ թռչուն** singing-bird, song-bird, warbler; **~ խումբ** chorus; *եկեղ.* choir; **~ խմբի անդամ** chorister, choir-boy; (կին) chantress.

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. singing, chantership; ◊ **խմբակային ~** singing in chorus, choir singing, choir service.

ԵՐԳԻԾԱԲԱՆ, գ. satirist; (հումորիստ, ծաղրաբան) humo(u)rist; (պարսավագրող) lampooner.

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ, ա. satiric(al), humorous, comic.

ԵՐԳԻԾԱԲԱՆՈՐԵՆ, մ. satirically, humouristically.

ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. satire, humouristics.

ԵՐԳԻԾԱԹԵՐԹ, գ. comic paper/magazine.

ԵՐԳԻԾԱԿԱՆ, ա. satirical, satiric.

ԵՐԳԻԾԱՆՔ, գ. satire; ◊ **~ի ենթարկել** satirize, ridicule.

ԵՐԳԻԾԱՎԵՊ, գ. satirical novel.

ԵՐԳԻԾԵԼ, բ. satirize, ridicule.

ԵՐԳԻԾՈՒՄ, գ. satirizing, ridicule.

ԵՐԳԻՉ, գ. singer, vocalist; *խսկց.* songster.

ԵՐԳՉԱԽՄՈՒՄԲ, գ. chorus, choir; *եկեղ.* choir.

ԵՐԳՉԱԿԱՆ, ա. vocal, of singing; ◊ **~ երաժշտություն** vocal music.

ԵՐԳՉՈՒՀԻ, գ. singer, vocalist; *խսկց.* songstress.

ԵՐԳՈՒՍՈՒՑ, գ. singing master.

ԵՐԴԻԿ, գ. an opening in the roof for the fire-smoke, a kind of flue, garret-window.

ԵՐԴԻԿԱՎՈՐ, ա. roof with garret-window (with this opening).

ԵՐԴՄՆԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ, գ. treachery, disloyalty, perfidy.

ԵՐԴՄՆԱԴՐՈՒԹ } 1. ա. perfidious,
ԵՐԴՄՆԱՁԱՆ } treacherous; 2. գ. (աճծ) perjurer; ◊ **~ լինել** perjure, oneself, commit perjury.

ԵՐԴՄՆԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. perjury, perfidy.

ԵՐԴՄՆԱՊԱՀ, ա. true to one's oath/vow.

ԵՐԴՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, գ. faithfulness/loyalty towards one's oath/vow.

ԵՐԴՎԵԼ, բ. swear, vow, make/take/swear an oath, take the oath; ◊ **պատվով ~** swear on one's honour; **պատրաստ եմ ~** I am prepared to swear; **~ վրեժ լուծել** vow vengeance.

ԵՐԴՎԵՑՆԵԼ, բ. swear sb, swear in, administer the oath (to), attest.

ԵՐԴՎՅԱԼ, 1. գ. juror, juryman; 2. ա. sworn; (մղի) confirmed, inveterate; ◊ **~ ատենակալ** barrister; **~ թշնամի** sworn enemy; **~ների դատարան** jury.

ԵՐԴՈՒՄ, գ. vow, oath; *ռզմ.* oath of allegiance/enlistment; ◊ **~ տալ** make/take/swear an oath; **հանդիսավոր ~ տալ** swear a solemn oath; **հավատարմության ~ տալ** swear allegiance (to); vow fidelity; **~ը դրժել** break one's oath; *իրավ.* commit perjury, perjure oneself; **կեղծ ~** perjury; **~ով** on oath.

ԵՐԵԽԱ, գ. child (pl. children), infant; (անչափահաս) underage, *իրավ.* minor; ◊ **անխնամ ~** neglected child; **կրծքի ~** baby, child in arms; **~ դառնալ** become a dotage, be in one's second childhood, be in one's dotage; **~ բե-**

րել՝ ծնել՝ ունենալ give birth to a child; **~յի խնամք** child care; **նա այլևս ~ չէ** he is no longer a child.

ԵՐԵՎԱ-ԵՐԵՎԱ, մ. childish, puerile, naive as a child; ◊ **~ խոսել** talk baby-talk/child's talk.

ԵՐԵՎԱՄԱՅՐ, գ. nursing mother.

ԵՐԵՎԱՅԱԲԱՐ, մ. like a child, childishly.

ԵՐԵՎԱՅԱԿԱՆ, ա. childish, infantile.

ԵՐԵՎԱՅԱՄԻՏ, ա. naive, childish, infantile.

ԵՐԵՎԱՅԱՄՏՈՒԹՅՈՒՆ, գ. naivety, childishness, infantility.

ԵՐԵՎԱՅԱՆԱԼ, բ. behave like a child, be childish.

ԵՐԵՎԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. childishness; (մանկություն) childhood; ◊ **դա ~ է** this is infantile/puerile; **~ մի՛ արա** don't be a child, don't behave like a child.

ԵՐԵԿ, մ. yesterday; ◊ **~ ամբողջ օրը** the whole of yesterday; **~ երեկոյան** last evening/night, yesterday evening; **~ չէ մյուս օրը** the day before yesterday; **~վա** yesterday's; **~վա օրը փնտրել** run/go on a wild goose chase, *դրամ.*; look for yesterday; ◊ *խոսկ.* **~ մեկ, այսօր երկու** only a few days; very soon.

ԵՐԵԿՈ, գ. evening; (հավաքույթ) party, evening party; *ֆր.* soiree; ◊ **առավոտից ~** all day long; **բարի ~** good evening; **գրական ~** literary evening/soiree; **երաժշտական ~** musical evening; **հուշ-~** memorial meeting; **ուսանողական ~** student's party; **~ն իջավ** night has fallen, the day has drawn to a close.

ԵՐԵԿՈՅԱՆ, մ. in the evening; ◊ **~ դեմ** towards evening; **ուշ ~** late at night; **~ թերթ** evening paper.

ԵՐԵԿՈՅԱՆԱԼ, բ. get dark; ◊ **~ում է** the day draws to a close, night is falling.

ԵՐԵԿՈՒՅԹ, գ. party, evening party; soiree, *ֆր.*; ◊ **հուշ~** memorial meeting.

ԵՐԵՍ, գ. face; (այտ) cheek; (էջ) page; (դրամի, մեդալի) obverse; (կտորի մասին) right side; ◊ **բարձի ~** pillow-case, pillow-slip; **ներքնակի ~** slip/cover of mattress; **վերմակի ~** outside/top side of a quilt; **բրված ~** sulky/scowling face; **~ առ ~** face to face; tête-à-tête *ֆր.*; **~առած** spoilt; **~ առնել** become/get spoiled; **~ դարձնել՝ թեքել** avert one's face/eyes; *փխր.* (կապերը խզել) break (with sb), turn away (from sb); **~ը բրվեցնել** pull/make a wry face; **~ը չբռնել** not to dare, not to have the cheek/face; **~ը պարզ անել** justify smb's confidence/trust/hopes; **~ը պնդացնել** have the impudence/cheek/face; **~ը սև անել** put to shame, cover oneself with shame, bring shame upon oneself; **~ը փառ բռնել** grow mouldy/musty; **~ը փափուկ** yielding, pliable, tractable, lenient; **(կաթի) ~ը քաշել** cream/skim the milk, take off the cream; **~ - ~ի թերել** confront; **~ի գույնը թռցնել** turn/grow pale; **~ի մեռոնը գնացած** shameless, barefaced, brazenfaced; **~ի վրա ընկած լինել** be neglected/deserted/abandoned; **~ի վրա թողնել** neglect, abandon; **~ի քրտինքով** by the sweat of one's brow; **~ին ասել** say to sb's face; **~ին գրված է** it is written on sb's face/countenance; **~ին գույն չլինել** be deathly pale; **~ին նայել** look in the face; **աշխարհի ~ին** on the earth, in the world; **ճշմարտության ~ին նայել** face the truth; **աննետանալ աշխարհի ~ից** disappear from the face of the earth; **~ից ժանգ թափվել** make a wry/sullen/gloomy face; **մեկի ~ից կախվել** worry/pester/badger/importune/plague sb (with); **~ով(ը) տալ** reproach, cast in one's teeth; **ի՞նչ ~ով երևալ** have the cheek/impudence; **ջրի ~ դուրս գալ** come to the surface; *փխր.* (բացվել, բացահայտվել) come to light, reveal itself.

ԵՐԵՍԱՆՑ, I. ա. (ոչ խոր, մակերեսորեն), superficial, shallow; 2. մ. (արտաքուստ) on the outside, outwardly; ◊ **~ հայելի, տակից ածելի** honey tongue, heart of gall; honey is sweet, but flee bee stings, *ասգ.*:

ԵՐԵՍԱՊԱՍ, ա. reveted/faced (with); (դրսի պատ) exterior (wall).

ԵՐԵՍԱՊԱՏԵԼ, բ. revet/face (with).

ԵՐԵՍԱՊԱՏՈՒՄ, գ. revetment, facing; (քարով) lining, incrustation.

ԵՐԵՍԱՌԱԾ, ա. spoilt.

ԵՐԵՍԱՅՈՒ, 1. ա. facing, decorative; 2. գ. (ծածկոց) covering material.

ԵՐԵՍԻՑ, I. կ. (պատճառով) through sb's fault; 2. մ. (դրսից, արտաքուստ) on/from the outside.

ԵՐԵՄՆԱԿԱՆ, բ. thirties,◊ **~ թվականներ** the thirties; **նրանց ~ դրամ տվեցին** they were given thirty drams each.

ԵՐԵՄՆԱՄՅԱ, ա. (տարիքի մասին) of thirty, thirty-year-old; (ժամկետ, տևողություն) of thirty years, thirty year; ◊ **~ հոբելյան** thirtieth anniversary; **~ մարդ** thirty-year-old man.

ԵՐԵՄՆԱՄՅԱԿ, գ. thirtieth anniversary; (ծննդյան օր) thirtieth birthday; (ժամանակամիջոց, տևողություն) thirty years.

ԵՐԵՄՆԻՎԱՅՐ, մ. prone, face downwards; ◊ **~ պառկել** lie prone/face downwards.

ԵՐԵՄՆԻՎԵՐ, մ. backwards; ◊ **~ ընկնել** fall flat on one's back; **~ պառկել** lie flat on one's back, lie supine.

ԵՐԵՍՈՎ, ա. impudent; *խոսկ.* cheeky.

ԵՐԵՍՊԱՇՏ, I. ա. hypocritical, pharisaical; 2. գ. (անձ) hypocrite, dissembler; (փարիսեցի) pharisee.

ԵՐԵՍՊԱՇՏԱԲԱՐ } մ. hypocritically.
ԵՐԵՍՊԱՇՏՈՐԵՆ }

ԵՐԵՍՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. hypocracy, dissimulation; (փարիսեցիություն) pharisaism.

ԵՐԵՍՍՐԲԻՋ, գ. (face) towel.

ԵՐԵՍՈՒՆ, թ. thirty; ◊ **մոտ ~ տարի** about thirty years; **~ին մոտ է** he is about/nearly thirty; **~ին մոտ մարդ** a man of/about thirty; **~ից անց է** he is over thirty/in his thirties.

ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ, թ. thirtieth; ◊ **~ օրը գարնան** the thirtieth day/spring.

ԵՐԵՎԱԼ, բ. be seen, can (could) be seen; (նշմարվել) emerge, show up; (ի հայտ գալ) appear, make one's appearance (տեսանելի դառնալ) show oneself, come in sight; (թվալ) seem, look; ◊ **~ում է** it seems, it looks; **~ում է, թե** it seems that, it looks as if/though; **ինձ այնպես է ~ում** it seems to me; **նա խելոք է ~ում** he seems clever/to be clever; **հեռվից ~ում էր անտառը** a forest could be seen in the distance.

ԵՐԵՎԱԿ, գ. *աստղ.* Saturn.

ԵՐԵՎԱԿԱՅԱԾԻՆ, ա. fantastic(al), imaginary.

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ, ա. imaginary; (պատրանքային) illusory; (անիրական) fantastic(al); (կեղծ, սուտ) false.

ԵՐԵՎԱԿԱՅԵԼ, բ. imagine, fancy; (պատկերացնել) picture, fancy; (համարել, կարծել) think, consider, take sth into one's head, imagine/fancy sth; ◊ *խսկց.* **իրեն ~** think too much of oneself, think no small beer of oneself, *դրձվ.*; put on airs, *դրձվ.*; **~յե՛ք** (just) fancy! **չես կարող ~** you can't imagine.

ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. imagination, phantasy; ◊ **վառ ~** lively imagination; **~բյան մեջ** in imagination/fancy, in the mind's eye, *դրձվ.*:

ԵՐԵՎԱԿԵԼ, բ. *լսկ.* develop.

ԵՐԵՎԱԿԻՉ, գ. *լսկ.* developer.

ԵՐԵՎԱԿՈՒՄ, գ. *լսկ.* development.

ԵՐԵՎԱՆ, միայն հետևյալ կապակցություններում ◊ **~ գալ** be revealed, come to light; **~ հանել՝ բերել** reveal, bring to light, discover.

ԵՐԵՎԵԼԻ, 1. ա. eminent; (ականավոր) outstanding, distinguished; (նշանավոր) prominent; (հռչակավոր) celebrated, illustrious; 2. գ. (հտկ. հոգն.) the celebrities.

ԵՐԵՎԻ, վ. apparently, seemingly; (հավանաբար, ըստ երևույթին) evidently, obviously.

ԵՐԵՎՈՒԹԱԿԱՆ, ա. illusory, illusive; (անիրական) unreal, phantasmal.

ԵՐԵՎՈՒՅԹ, գ. phenomenon (pl. -na), occurence; (մեծ իրադարձություն, *նաև* անձ, առարկա) great event; (փաստ) fact; (հայտնվելը, երևան գալը) appearance; *բատեր.* scene; ◊ **տարօրինակ ~** strange fact/thing; **բնական, հասարակական ~ներ** natural/social phenomena; **կյանքի հիվանդագին ~ները** morbid features of life; **հարակից ~ներ** side effects; **մնացորդային ~ներ** residual effects; **ըստ ~ին** apparently, to all appearance.

ԵՐԵՐԱԼ, բ. reel from side to side; (ոտքերին հագիվ կանգնել) reel, stagger; (տատանվել) sway, waver, hesitate; ◊ **բոցը ~ում է** the flame is swaying; **~ով դուրս գալ** stagger out.

ԵՐԵՐԱՔԱՅԼ, մ. staggering, swaying.

ԵՐԵՐՈՒՄ, գ. wavering, reeling; (տատանում) hesitation, swaying.

ԵՐԵՐՈՒՆ, ա. shaky; (անկայուն) unsteady, unstable; (տատանվող) oscillating; (ճոճվող) shaking.

ԵՐԵՑ, 1. ա. (ավագ) senior; 2. գ. *եկեղ.* (քահանա) priest.

ԵՐԵՔ, թ. three; (գնահատական. բավարար) satisfactory.

ԵՐԵՔԱԿԱՆ, թ. by three, in threes.

ԵՐԵՔԱՆՈՑ, թ. *խորհ., խսկց.* (թղթադրամ) three roubles, three-rouble note; (թղթախաղում) three; ◊ **խաչի ~** three of clubs.

ԵՐԵՔԳԼԽԱՆԻ, ա. three-headed, of three heads.

ԵՐԵՔՀԱԶԱՐԱՄՅԱ, ա. three millenia.

ԵՐԵՔՀԱՐԿԱՆԻ, ա. three-storey, three-floor.

ԵՐԵՔՆՈՒԿ, գ. *բսբ.* clover, trefoil, field clover.

ԵՐԵՔՇԱԲԹԻ, գ. Tuesday; ◊ **այս ~** this Tuesday; **անցյալ ~** last Tuesday; **հաջորդ ~** next Tuesday; **~ օրը** on Tuesday.

ԵՐԵՔՎՈՐՅԱԿ, գ. triplets.

ԵՐԵՔՏԱԿ, ա. threefold, triple.

ԵՐԵՔՏԱԿ(Վ)ԵԼ, բ. treble.

ԵՐԵՔՏԱԿՈՒՄ, գ. trebling.

ԵՐԵՔՏԵՂԱՆԻ, ա. three-seater.

ԵՐԵՔՏՈԿՈՍԱՆԻ } ա. three-per-cent;
ԵՐԵՔՏՈԿՈՍԱՆՈՑ } ◊ **~ փոխառություն** three-per-cent loan.

ԵՐԵՔՕՐՅԱ, ա. three-day, of three days; ◊ **~ արձակուրդ** three-day vacation/holiday.

ԵՐԹ, գ. march, march past, parade; (թափոր) procession, train; ◊ **բարի ~ մաղթել** wish happy journey/good luck.

ԵՐԹԱԼ, *տես* ԳՆԱԼ:

ԵՐԹԱՅԻՆ, ա. march, marching; (ճանապարհային) route, field; (ճանապարհորդական) travelling.

ԵՐԹԱՆԻՍ, գ. boarding; (նավի) embarkation.

ԵՐԹԱՐՔԱՆ, գ. trip, run.

ԵՐԹԱՏԱՐԱՋ, գ. (համազգեստ) marching order, field dress.

ԵՐԹԱՓՈԽ, գ. transfer, change of carriage/train; ◊ **~ կատարել** transfer.

ԵՐԹԵՎԵԿԵԼ, բ. (երթուղիով) run, ply (between); (գնալ-գալ) come and go, trip out and in; (զբոսնել) walk, take a walk.

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ } գ. movement,
ԵՐԹԵՎԵԿՈՒՄ } traffic; (քայլելը, զբոսնելը) walking, walk; ◊ **փողոցային ~** street traffic; **~բյան կանոններ** traffic rules, highway code.

ԵՐԹՈՒՂԻ, գ. run, route, itinerary.

ԵՐԹՈՒՂԱՅԻՆ, ա. route, itinerary; ◊ **~ ավտոբուս** express bus; **~ գնացք** express goods-train; **~ տաքսի** minibus, taxi on a fixed run/route.

ԵՐԻՁ, գ. band, ribbon; (երիզակ, ժապավեն) braid; (եզրագիծ, եզրաշերտ) border, edging.
ԵՐԻԶԱՊԱՏ, ա. edged, bordered; (երիզազարդ) trimmed.
ԵՐԻԶԱՊԱՏԵԼ, բ. edge, border; (երիզազարդել) trim.
ԵՐԻԶԱՊԱՏՈՒՄ, գ. edging, bordering; (երիզազարդում) trimming.
ԵՐԻԶԱՎՈՐ, ա. edged, bordered.
ԵՐԻԶԱՎՈՐԵԼ, բ. border, edge, frame, fringe, hem.
ԵՐԻԶԱՎՈՐՈՒՄ, գ. bordering, edging, framing, fringing, hemming.
ԵՐԻԶՈՐԴ, գ. *կենդ.* tapeworm.
ԵՐԻԿԱՄ, գ. *կզմխս.* kidney; *խսկց.* rein.
ԵՐԻԿԱՄԱՑԻՐԲ(ՈՔՈՒՄ), գ. *բժշկ.* nephritis.
ԵՐԻԿԱՄԱՅԻՆ, ա. *կզմխս.* nephritic, renal.
ԵՐԻԿԱՄԱՔԱՐ, գ. gall-stone(s).
ԵՐԻԿԱՄՈՒՆՔ, գ. *կզմխս.* (զույգը) kidneys, reins.
ԵՐԻՆՋ, գ. calf, heifer; ◊ **~ի միս** veal.
ԵՐԻՎԱՐ, գ. fast horse, runner; *բնաստ.* (նժույգ) courser, steed.
ԵՐԻՏԱՍԱՐԴ, 1. ա. young, youthful; *խսկց.* (մատղաշ) unripe, green; (կրտսեր) young, junior, 2. գ. (անձ) young man/person; **~ երևալ** look young for one's age; **~ սերունդ** young generation; **տարիքով ~** young in years.
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ա. youth, young; (պատանեկան) juvenile, youthful.
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԱԼ, բ. grow young again, be restored to youth, rejuvenate.
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՎԱՐԻ, ա. like/as a young man/a youth.
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՆԵԼ, բ. rejuvenate, rejuvenize; *խսկց.* make look younger.
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄ, գ. rejuvenation.
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ, գ. (երիտասարդ լինելը, ջահելություն) youth, youthfulness; *հմք.* (մարդիկ) young people, youth; ◊ **~թյան օրեր** youthful days; **երկրորդ ~** second youth/spring; **ուսանող՝ սովորող ~** students.
ԵՐԻՅ, մ. three times, thrice; (շատ, չափազանց) very, too, too much/many; ◊ **~ անիծված** thrice cursed.
ԵՐԻՑՈՒԿ, գ. camomile; (խոշոր՝ դաշտային) ox-eye daisy.
ԵՐԿ, գ. work, writing; ◊ **~երի լիակատար ժողովածու** complete works; **ընտիր ~եր** selected works, selections.
ԵՐԿԱԹ, գ. iron; ◊ **~ը տաք-տաք կծեծեն** strike while the iron is hot; **~ի դար** the Iron Age; **~ից** of iron.
ԵՐԿԱԹԱԲԵՐ, ա. ferriferous; ◊ **~ հանք** iron ore, iron-stone.
ԵՐԿԱԹԱԳԻԾ, ա. railway, railroad; ◊ **~ ուղիներ** (railway) track/line.
ԵՐԿԱԹԱԳԼԱՆՈՒՄ, գ. (iron) rolling.
ԵՐԿԱԹԱԳՈՐԾ, գ. tinman, tinsman, whitesmith.
ԵՐԿԱԹԱԳՈՐԾԱԿԱՆ, ա. of iron-works.
ԵՐԿԱԹԱԳՈՐԾԱՐԱՆ, գ. ironworks.
ԵՐԿԱԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. iron metallurgy.
ԵՐԿԱԹԱԹԵՐԹ, գ. tin(-plate).
ԵՐԿԱԹԱԼԱՐ, գ. (iron) wire.
ԵՐԿԱԹԱԿԱՄ, ա. iron-willed, strong-willed, resolute.
ԵՐԿԱԹԱԿՈՒՌ, ա. iron made, ironclad.
ԵՐԿԱԹԱՀԱՆՔ, գ. iron ore/pit/mine.
ԵՐԿԱԹԱՇԵՆ, ա. made of iron.
ԵՐԿԱԹԱՊԱՏ, ա. ironclad, covered with iron.
ԵՐԿԱԹԱՑԱՆՑ, գ. iron net/netting/gauze.
ԵՐԿԱԹԱՓՈՇԻ, գ. iron powder.
ԵՐԿԱԹԱՔԱՅԼ, ա. *փխր.* (ամուր, հաստատապատյալ) in firm/iron steps.
ԵՐԿԱԹԱՔԱՐ, գ. ironstone, ironclay; *հմք.* siderite; ◊ **կարմիր ~** haematite; **գորշ ~** bog iron ore, brown haematite.
ԵՐԿԱԹԲԵՏՈՆ, գ. reinforced concrete, ferro-concrete.
ԵՐԿԱԹԲԵՏՈՆԱՅԻՆ, **ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ** } ա. reinforced concrete; ◊ **~ արտադրանք** *ferroconcrete items*; **հավաքովի ~ կառուցվածքներ՝ մասեր** pre-fabricated ferro-concrete structures/parts.
ԵՐԿԱԹԳԻԾ, գ. railway, railroad.
ԵՐԿԱԹԵ, **ԵՐԿԱԹՅԱ** } ա. iron; *բիմ.* ferreous, ferrous; ◊ **~ կարգապահություն** iron discipline; **~ վարագույր** iron curtain.
ԵՐԿԱԹԵՂԵՆ, գ. iron ware, ironmongery, hard ware.
ԵՐԿԱԹՈՒՂԱԳԻԾ, գ. railway track/line.
ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ, 1. ա. railway, railroad; 2. գ. (անձ) railwayman, railroadman; *ամ.* railroader; ◊ **~ ճյուղ** branch line; **~ ցանց** railway system.
ԵՐԿԱԹՈՒՂԻ, գ. railway, railroad; (երթևեկությունը) railway traffic; ◊ **~ով** by rail/train; **~ղու վարչություն** railway/railroad management.
ԵՐԿԱԿԻ, ա. double, dual; (երկկերպ) of two kinds; ◊ *բեր.* **~ թիվ** dual number; **~ դեր խաղալ** play a double game.
ԵՐԿԱԿԻՈՒԹՅՈՒՆ, գ. duality, duplicity, doubleness.
ԵՐԿԱՄԱՐՏ, գ. biathlon.
ԵՐԿԱՄՅԱ, ա. (տարիքի մասին) two-year-old, of two; (ժամկետ, ժամանակամիջոց) of two years, two-year; *գիտ.* biennial; ◊ **~ երեխա** a child of two, two-year-old child.
ԵՐԿԱՄՅԱԿ, գ. second anniversary; (ծննդյան) second birthday; (ժամանակամիջոց) two years.
ԵՐԿԱՄՈՅԱ, ա. (տարիքի մասին) two-months-old; (ժամկետ, ժամանակամիջոց) two-month, of two months; ◊ **~ արձակուրդ** two-month holiday.

ԵՐԿԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ, գ. bigamy.
ԵՐԿԱՅՆԱԶԱՅՈՒԿ, ա. long-armed.
ԵՐԿԱՅՆԱԿԱՆ } ա., մ. longitudinal,
ԵՐԿԱՅՆԱԿԻ } lengthwise; ◊ **~ կտրվածք** slit; (գծագրի վրա) longitudinal section; **~ առանցք** longitudinal/long axis.
ԵՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. *աշխրգ.* longitude.
ԵՐԿԱՅՆՔ, գ. length; ◊ **~ով** lengthwise, longwise; **ամբողջ ~ով** at full length, the full length (of), all along (sth); **ամբողջ ~ով ձգվել** measure one's length.
ԵՐԿԱՅՆԱՁԳՈՒՄ, գ. stretching, pulling, lengthening.
ԵՐԿՆԱՁՈՒԿ, գ. *կենդ.* grey mullet.
ԵՐԿՆԻՇ, ա. two-digit; ◊ **~ թիվ** two-digit number.
ԵՐԿՆԻՎ, ա. two-wheeled.
ԵՐԿԱՍՏԻՃԱՆ, ա. two-stage; ◊ **~ ընտրություններ** two-stage elections.
ԵՐԿԱՏԵԼ, բ. bisect, bifurcate, fork, divide.
ԵՐԿԱՏՈՒԹՅՈՒՆ } գ. bisection, dichotomy,
ԵՐԿԱՏՈՒՄ } divarication, bifurcation; ◊ **անձի ~** split personality.
ԵՐԿԱՐ, ա. long; (հեռավոր) long; (երկարատև) protracted, prolonged; (ճառի մասին) lengthy; ◊ **~ ժամանակ** (for) a long time; **~ ժամանակ անց** long after; **~ ժամանակի ընթացքում** over a long period of time; **~ ճանապարհ** long way; **~ կյանք** long life; **~ տևել** last long.
ԵՐԿԱՐԱԶԱՅՈՒԿ, ա. long-armed.
ԵՐԿԱՐԱԲԱՆ, ա. loquacious, verbose, garrulous.
ԵՐԿԱՐԱԴԵՄ, ա. long-faced.
ԵՐԿԱՐԱԴԻՄԱՑԿՈՒՆ, ա. long-lasting, durable; (ամուր) solid, firm.
ԵՐԿԱՐԱԶԳԵՍՏ, ա. in long clothes/robes; *փխր.* (կրոնականություն) long robe.
ԵՐԿԱՐԱԹԵՎ, ա. long-armed.
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ, ա. long-term, long-dated; ◊ **~ պայմանագիր** long-term contract; **եղանակի ~ տեսություն** long-term forecast.
ԵՐԿԱՐԱԼԻՔ, ա. long-wave.
ԵՐԿԱՐԱԿԱՆՋ, ա. long-eared.
ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. longevity.
ԵՐԿԱՐԱԿՅԱՑ, ա. long-lived, that lives long; (կենսունակ) tenacious of life.
ԵՐԿԱՐԱԿՆԵՐԻԹ, գ. *կենդ.* weevil.
ԵՐԿԱՐԱԿՍՈՒՑ, ա. long-beaked.
ԵՐԿԱՐԱՁԳԵԼ, բ. prolong, extend, hold over; ◊ **ժամկետը ~** prolong the term; **տոմսը ~** extend a ticket.
ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ, բ. last (for some time).
ԵՐԿԱՐԱՁԵՎ, ա. oblong, prolonged, lengthened.
ԵՐԿԱՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ, գ. oblong shape/form.
ԵՐԿԱՐԱՁԻԳ, ա. long, protracted, prolonged; *փխր.* (ձանձրալի, ձգձգված) tedious; ◊ **~ ճառ** tedious speech.
ԵՐԿԱՐԱՃԻՏ(Ք), ա. top; ◊ **~ կոշիկ** high/riding boot, top-boot.
ԵՐԿԱՐԱՄԱԶ, ա. long-haired.
ԵՐԿԱՐԱՄՅԱ, ա. of many years, of many years's standing, long-term.
ԵՐԿԱՐԱՄՈՐՈՒՍ } ա. long-bearded.
ԵՐԿԱՐԱՄՈՐՈՒՔ }
ԵՐԿԱՐԱՇՈՒՆՉ, ա. long-breathed, long, extensive, lengthy; *երժշ.* long-breathed, pause.
ԵՐԿԱՐԱՈՏ, ա. long-legged.
ԵՐԿԱՐԱՍՊՈՒՆՔ, ա. long-legged, long-limbed; *խսկգ.* lanky.
ԵՐԿԱՐԱՎԱՐՍ, ա. long-haired; *փխր.* (երկար ճյուղեր ունեցող) having long branches, long-branched;
ԵՐԿԱՐԱՎԻՋ, ա. (*ճան կժի՝ փարչի՝ շշի մասին*) long-necked.
ԵՐԿԱՐԱՎՈՒՆ, ա. longish, lengthy, oblong.
ԵՐԿԱՐԱՎՈՒՇ, գ. *բուս.* flax-fibre.
ԵՐԿԱՐԱՏԵՎ, ա., մ. long, prolonged, long-lasting, protracted; (տևական) durable, enduring, of long duration; *ոգմ.* permanent; ◊ **~ ծափահարություններ** prolonged applause.
ԵՐԿԱՐԱՑՆԵԼ, բ. lengthen, make longer; (ձգել) elongate, extend; (ձգձգել) delay, drag out; (ժամկետի մասին) prolong; ◊ **ժամկետ ~** prolong/extend a term.
ԵՐԿԱՐԱՑՈՒՄ, գ. lengthening, making longer; (ձգում) drawing out, elongation, extension; (ձգձգում) delay, prolongation; ◊ **ժամկետի ~** prolongation/extension of a term; **աշխատանքային օրվա ~** increase in working hours.
ԵՐԿԱՐԱՓԵՇ, ա. long-skirted, maxi-robe.
ԵՐԿԱՐԱՔԻԹ, ա. long-nosed.
ԵՐԿԱՐԱՔԱՆՁՔ, *տես* ԵՐԿԱՐԱՓԵՇ:
ԵՐԿԱՐ-ԲԱՐԱԿ, մ. very long, long-winded; (մանրամասն) detailed, in detail, at great length; (ձանձրալի) tedious; ◊ **~ խոսակցություն** tedious conversation.
ԵՐԿԱՐԵԼ, բ. lengthen, become longer; (ձգվել՝ սպարծևական տեսակետից) become elongated, draw in length; (ժամկետի մասին) become prolonged; (ձգձգվել) be delayed/dragged out.
ԵՐԿԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ, ա. of long duration, lasting, long-term; *ոգմ.* permanent; ◊ *ոգմ.* **~ ամրություն** fortification.
ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. length; (տևողություն) duration, length, extent; *աշխրգ.* longitude; ◊ **ամառային օրվա ~ը** the length of the summer day; **աշխատօրվա ~** length of the working day; **~թյան չափեր** measures of length, linear measures; **~թյամբ** long; **երեք մետր ~թյամբ** three meters long.
ԵՐԿԱՔԱՅԵԼ, բ. hesitate, waver, doubt.

ԵՐԿԲԱՅԵԼԻ, ա. doubtful, questionable, uncertain, dubious.

ԵՐԿԲԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. incertitude, hesitation; (տատանում) hesitation, vascillation; (կասկած) doubt.

ԵՐԿԲԱՐԲԱՌ, գ. *քեր.* diphthong.

ԵՐԿԲԵՐԱՆ, ա. (երկսայր) double-edged, with two blades, having two blades.

ԵՐԿԳԼԽԱՆԻ } ա. two-headed, double-
ԵՐԿԳԼՈՒԽ } headed, *գիտ.* bicephalus; ◊ *պատմ.* ~ **արծիվ** double-headed eagle.

ԵՐԿԴԱՐՅԱ, ա. bicentennial, bicentenary.

ԵՐԿԴԵՄ, ա. two-faced; *գիտ.* bifacial; *փիլ.* (երկերեսանի) double-faced.

ԵՐԿԴԻՄԻ, ա. ambiguous, equivocal; (անորոշ) vague, uncertain; (կեղծավոր) hypocritical; ◊ ~ **արտահայտություն** ambiguous expression.

ԵՐԿԴԻՄՈՐԵՆ, մ. ambiguously, equivocally.

ԵՐԿԴԻՄՈՒԹՅՈՒՆ, գ. doublefacedness, duplicity; (երկիմաստություն) ambiguity; (կեղծավորություն) hypocracy.

ԵՐԿԴՌՆԱՆԻ } ա. (դռան մասին) folding;
ԵՐԿԴՈՒՌ } (մեքենայի, ինքնաթիռի ևի մասին) two-door.

ԵՐԿԵՂՋՅՈՒՐ } ա. two-horned.
ԵՐԿԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ }

ԵՐԿԵՐԵՍԱՆԻ, ա. two-faced, bifacial; *փիլ.* double-faced; ◊ ~ **Յանուս** two-faced Janus.

ԵՐԿԵՐԵՍԱՆԻՈՒԹՅՈՒՆ } գ. double-
ԵՐԿԵՐԵՍԱՆՈՒԹՅՈՒՆ } facedness, duplicity.

ԵՐԿԸՆՏՐԱՆՔ, գ. dilemma, alternative; ◊ **նա կանգնած է ~ի առջև** he is confronted/faced with the dilemma; **(այլ) ~ չունենալ** have no alternative, have no other alternative but.

ԵՐԿԹԵՎ(ԱՆԻ), *ճարտ.* two-flanked, having two flanks.

ԵՐԿԹԵՐԹ(ԱՆԻ), ա. with two flower leaves, dipetalous; (գրքի ևի մասին) two-page, having two pages.

ԵՐԿԺԱՄՅԱ, ա. of two hours, two-hour.

ԵՐԿԻՄԱՍՏ, ա. (բառի մասին) having two meanings; (երկդիմի) ambiguous, equivocal.

ԵՐԿԻՄԱՍՏՈՐԵՆ, մ. ambiguously, equivocally.

ԵՐԿԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ, գ. ambiguity; (երկիմաստ արտահայտություն) ambiguous expression.

ԵՐԿԻՆՔ, գ. sky, heaven; ◊ ~ **բարձրացնել՝ հանել** praise/extol to the skies; **~ի տակ՝ ներքո** under the sky; **բաց ~ի տակ** in the open(air); **~ը գլխին մթնեց՝ փուլ եկավ** everything went dark before his eyes; *խսկց.* **~ից աստղեր չի վեր բերում** he is no genius; **~ից իջնել** fall from the sky; **~ից կրակ է թափվում** it is unbearably hot, scorching heat; **~ում** in the sky; **յոթերորդ ~ում լինել** be in (the) seventh heaven.

ԵՐԿԻՆՔ-ԳԵՏԻՆՔ, գ. heaven and earth, all the universe, all the world; (երդում) by heaven!

ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. dual power, diarchy.

ԵՐԿԻՐ, գ. country (*ճաև* բնակչությունը); (երկրագունդ) earth, the world, the globe; (գյուղ) land; (վայր) land, place; *փիլ.* (մարդկություն) mankind, humanity; (սփյուռքի համար՝ Հայաստան) Armenia; ◊ **հայրենի ~** native home/land, fatherland; **օտար ~** foreign country; **~ի երեսին** on the earth; **ամբողջ ~ում ~ով մեկ** all over the country; *աստվծ.* **Ավետյաց ~** the Promised Land.

ԵՐԿԼԵԶՎՅԱՆ } ա. bilingual; ◊ ~ **բառարան** bilingual dictionary.
ԵՐԿԼԵԶՈՒ }

ԵՐԿԼԵԶՎՈՒԹՅՈՒՆ, գ. bilingualism.

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. dialogue; ◊ ~ **վարել** carry on a dialogue.

ԵՐԿՃԱԼ, ա. twofold.

ԵՐԿԿԱՅՄԱՆԱՎ, գ. two-master.

ԵՐԿԿԱՅՄԱՆԻ, ա. two-masted.

ԵՐԿԿԵՆՅԱՂ, ա. *կենդ.* amphibious; ◊ ~ **կենդանի** amphibia.

ԵՐԿԿՃՂԱԿ(ԱՎՈՐ), ա. *կենդ.* cloven-footed; **~ներ** artrodactyla.

ԵՐԿԿՈՂՄ(ԱՆԻ), ա. (երկու կողմ ունեցող) double-sided; (փոխադարձ) bilateral, two-way, bipartite; ◊ ~ **համաձայնություն** bilateral agreement; ~ **փոխանակություն** two-way exchange; *խսկց.* two-way street.

ԵՐԿԿՈՂՄԱՆԻՈՒԹՅՈՒՆ, գ. double-sidedness.

ԵՐԿՀԱԶԱՐԱՄՅԱ, ա. two-millenia, bimilleniat.

ԵՐԿՀԱՏՈՐ, ա. two-volume.

ԵՐԿՀԱՏՈՐՅԱԿ, գ. two-volume edition.

ԵՐԿՀԱՐԿ(ԱՆԻ), ա. two-storey, two-floor.

ԵՐԿՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ, ա. bicentennial, bicentenary.

ԵՐԿՀԵՐԹ, ա. two-shift; ◊ ~ **աշխատանք** two-shift work.

ԵՐԿՀՆՉՅՈՒՆ, 1. ա. consisting of two sounds, 2. գ. *տե՛ս* ԵՐԿԲԱՐԲԱՌ:

ԵՐԿՁԱՅՆ, ա., մ. *երաժշ.* two-voice; ◊ ~ **երգչախումբ** two-voice chorus; ~ **երգել** sing in two-part harmony.

ԵՐԿՁԵՎ, ա. of two forms, having two forms.

ԵՐԿՃԵԼՔԵԼ, բ. bifurcate, fork, bisect, divide into two.

ԵՐԿՃԵԼՔՎԵԼ, be divided into two, ◊ ~**ված** bisected, split.

ԵՐԿՃԵԼՔՈՒՄ, գ. divarication, bifurcation.

ԵՐԿՃՅՈՒՂ, ա. two-branched, having two branches.

ԵՐԿՄԻՏ, ա. uncertain, unsteady; (կասկածող) doubtful; (անվճռական) irresolute; (տատանվող) wavering.

ԵՐԿՄՏԵԼ, բ. doubt; (տատանվել) hesitate, waver.

ԵՐԿՄՏՈՐԵՆ, մ. irresolutely; (կասկածանքով) doubting.

ԵՐԿՄՏՈՒԹՅՈՒՆ, գ. irresolution; (տատանում) hesitation; (կասկած) doubt; (անվստահություն) distrust.

ԵՐԿՅՈՂ, գ. fear, fright; (վատ բանի նախազգացում) apprehension; (կասկած) misgiving; ◊ **~ առաջացնել** excite apprehension; **~ զգալ** be afraid (of); **~ կրել** have a dread of smth; **մահացու ~** mortal fear; **մահվան ~** fear/dread of death; **~ից** for fear of/that, out of fear; **~ով բռնվել** be gripped/seized by fear.

ԵՐԿՅՈՒՂԱԼԻ(Ց), ա. frightful, fearful; (վտանգավոր) dangerous, perilous.

ԵՐԿՅՈՒՂԱԾ, ա. scared, startled; (վախեցած) afraid, frightened.

ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. timidity, timorousness; (բարեպաշտություն) piety.

ԵՐԿՅՈՒՂԵԼ, բ. apprehend; (վախենալ) fear, be afraid (of).

ԵՐԿՆԱԳՈՒՅՆ, ա. sky blue, light/pale blue; *բնաստ.* azure; ◊ **~ էկրան** television, TV set, TV.

ԵՐԿՆԱԾԻՆ, ա. given by heaven; (աստվածային) divine; (սքանչելի) wonderful, marvellous.

ԵՐԿՆԱԿԱՄԱՐ, գ. firmament, the vault/dome/canopy of heaven., the sky.

ԵՐԿՆԱՅԻՆ, ա. celestial; *փիլիս.* (աստվածային) heavenly, divine, etheral; ◊ **~ մարմիններ** celestial bodies; **~ պատիժ՝ պատուհաս** God's punishment.

ԵՐԿՆԱՇՈՂ, ա. *բնաստ.* radiant, effulgent.

ԵՐԿՆԱՔԱՐ, գ. meteorite, fire-ball; *հզվ.* bolide.

ԵՐԿՆԱՔԵՐ(Ծ), գ. sky-scraper; (բազմահարկ շենք) tall/multi-storey house block.

ԵՐԿՆԵԼ, բ. experience birth throes; *փիլիս.* (դժվարությամբ ստեղծել. մտավոր աշխատանքի մասին) create with difficulty/hard labour.

ԵՐԿՆՉԵԼ, *տես* ԵՐԿՅՈՒՂԵԼ:

ԵՐԿՇԵՐՏ, ա. two-layer, having two layers.

ԵՐԿՇԻԹՆԱՅԻՆ, ա. *լեզվ.* bilabial.

ԵՐԿՈՏՆԻ, ա. two-legged; *զիտ.* biped; ◊ **~ կենդանի** biped; *փիլիս., ծաղր.* (մարդ) man, human being.

ԵՐԿՉՈՏ, ա. timid, timorous, fearful; (ամաչկոտ) shy, bashful.

ԵՐԿՉՈՏԱԲԱՐ } մ. timidly, fearfully.
ԵՐԿՉՈՏՈՐԵՆ }

ԵՐԿՉՈՏՈՒԹՅՈՒՆ, գ. timidity, timorousness, fearfulness; (անհամարձակություն) shyness, bashfulness.

ԵՐԿՊԱԼԱՏ, ա. two-chamber, bicamera; ◊ **~ համակարգ** bicameral/two-chamber system; **~ պառլամենտ՝ խորհրդարան** bicameral parliament.

ԵՐԿՊԱՌԱԿՏԵԼ, բ. cleave, split, disrupt.

ԵՐԿՊԱՌԱԿՏՎԵԼ, բ. cleave, split, be disrupted.

ԵՐԿՊԱՌԱԿՏՈՒՄ
ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ } գ. split, cleavage, dissidence; (անհամաձայնություն) discord, strife; ◊ **~ մտցնել** sow dissention; **~ սերմանել** breed strife/split; **~ը դարձավ ակնհայտ** the cleavage has become more sharply defined; **~ը խորացնել** widen the division/split; **~ման սերմեր** seeds of discord; **~ման քաղաքականություն** dissentinent policy.

ԵՐԿՍԱՅՐ(Ի), ա. double-edged.

ԵՐԿՍԱՊԱՏ(ԱՆԻ)
ԵՐԿՍԱՊԱՏԱՎՈՐ } ա. two-humped; ◊ **~ ուղտ** Bactrian camel.

ԵՐԿՍԵՌ, ա. bisexual; ◊ **~ դպրոց** mixed school, co-educational/coed institution.

ԵՐԿՍՌՆԱԿ
ԵՐԿՍՌՆԻ } ա. biaxial.

ԵՐԿՎԱՆԿ(ԱՆԻ), ա. *լեզվ.* disyllabic; ◊ **~ բառ** disyllabic word, disyllable.

ԵՐԿՎՈՐՅԱԿ, ա., գ. twins; ◊ **~ քույրեր՝ եղբայրներ** twin sisters/brothers; *աստղ.* **~ներ** Gemini, the Twins.

ԵՐԿՏԱՐԵՑԻ, ա., գ. ◊ **~ աշակերտ** pupil remaining for the second year in the same class/form.

ԵՐԿՏԱՐՐ, ա. consisiting of two elements/structures/members.

ԵՐԿՏԵՂ(ԱՆԻ)
ԵՐԿՏԵՂԱՆՈՑ } ա. two-seater; ◊ **~ նավախցիկ** two-birthed/double birthed cabin/cabin for two; **~ կուպե (գնացքում)** double (sleeping) compartment.

ԵՐԿՏՈՂ, գ. short note, few lines.

ԵՐԿՐԱԲԱՆ, գ. geologist.

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ, ա. geological.

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. geology.

ԵՐԿՐԱԲԱՇԽ, գ. geodesist.

ԵՐԿՐԱԲԱՇԽԱԿԱՆ, ա. geodesic, geodetic.

ԵՐԿՐԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ, գ. geodesy.

ԵՐԿՐԱԲՆԱԿ, գ. earth man/dweller.

ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. regional geography; *լեզվ.* area studies.

ԵՐԿՐԱԳՈՐԾ, *տես* ՀՈՂԱԳՈՐԾ:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ, *տես* ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, *տես* ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ:

ԵՐԿՐԱԳՈՒՆԴ, գ. the (terrestrial) globe, the earth.

ԵՐԿՐԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, գ. geological survey/prospecting.

ԵՐԿՐԱԽՈՒԶ, գ. geological surveyor.

ԵՐԿՐԱԿԵՂԵՎ, գ. the earth's crust.

ԵՐԿՐԱԿՈՐԾԱՆ, ա. smashing, destructing; ◊ **~ պատերազմ** destructive war.

ԵՐԿՐԱՄԱՍ, գ. territory.

ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ, ա. territory, territorial.

ԵՐԿՐԱՄԵՐՁ, ա. circumterrestrial; ◊ **~ տարածություն** terrestrial space; **~ կետ** perigee.

ԵՐԿՐԱՅԻՆ, ա. earthly; *զիտ.* terrestrial;

(աշխարհիկ) worldly; ◊ ~ **վայելքներ** worldly pleasures.

ԵՐԿՐԱՇԱՐԺ, գ. earthquake; ◊ ~**ի էպիկենտրոն** seismic focus/centre, epicentre of the earthquake.

ԵՐԿՐԱՇԱՐԺԱԳԵՏ, գ. seismologist.

ԵՐԿՐԱՇԱՐԺԱԳԻՏԱԿԱՆ, ա. seismological.

ԵՐԿՐԱՇԱՐԺԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. seismology.

ԵՐԿՐԱՇԱՐԺԱԳԻՐ, գ. seismograph.

ԵՐԿՐԱՇԱՐԺԱԳՐԱՉԱՓ, գ. seismometer.

ԵՐԿՐԱՉԱՓ, գ. geometrician, civil engineer.

ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ, ա. geometric(al).

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, գ. geometry; ◊ **վերլուծական** ~ analytical geometry; **նկարագրական** ~ descriptive geometry; **տարրական** ~ elementary geometry; **բարձրագույն** ~ higher geometry.

ԵՐԿՐԱՊԱՀ, ա., գ. defender of the land.

ԵՐԿՐԱՑԻ, գ. compatriot, (fellow-)countryman.

ԵՐԿՐՈՐԴ, թ. second; secondly; ◊ ~ **անգամ** a second time, for the second time; ~ **կարգի** second class; *մարզ.* second class/rating; ~ **ձայն** second part; ~ **ձեռքից** second hand; **ճաշի ~ը՝** ~ **տեսակը** second course; ~**ն ի՞նչ է** what is the second course? ~ **ջութակ** second violin; *փոխ.* (ոչ ղեկավար դեր) second fiddle; *մարզ.* ~ **տեղը գրավել** be the runner-up, take second place; **մեկ** ~ **մասը** the second part/half; ~ **տեսակի** (պտուղներ ևն) second category/rank/sort.

ԵՐԿՐՈՐԱԿԱՆ, ա. secondary; (պակաս կարևոր) minor; (կողմնակի) accessory; (օժանդակ, լրացուցիչ) subsidiary, anciliary; *քեր.* subordinate; ◊ ~ **արտադրանք** by-product; *երկրբ.* ~ **կազմավորություն** secondary formation; *քեր.* ~ **նախադասություն** subordinate clause; *քիմ.* ~ **սպիրտ** alcohol.

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ, ա. (ոչ կարևոր) secondary, minor; (ոչ սկզբնային, ածանցյալ) not primary, secondary.

ԵՐԿՐՈՐԴԵԼ, բ. second, repeat, say again; (կրկնել) reiterate; (արձագանքել) echo.

ԵՐԿՐՊԱԳԵԼ, բ. worship; (պաշտել) adore; (աստվածացնել) hold sacred, idolize.

ԵՐԿՐՊԱԳԵԼԻ, ա. adorable, worthy of worship.

ԵՐԿՐՊԱԳՈՒ, գ. admirer, worshipper.

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ, **ԵՐԿՐՊԱԳՈՒՄ** } գ. worship, reverence; (պաշտում) adoration, admiration.

ԵՐԿՈՒ, թ. two; (գնահատական) poor; ◊ ~ **անգամ** twice, two times; ~ **անգամ ավելի** twice as much/many; ~ **բառով** briefly, in a word; ~ **զույգ մի կենա** no more than one or two; ~ **խոսք** a few words; ~ **կրակի՝ քարի արանքում** between two fires, between the devil and the deep sea, *դրծ.*; ~ **մտքի լինել** be in/of two minds; ~ **ոտքը մի մաշիկ դնել** pester the life out of sb, not to take "no" for an answer; ~**սը** both, the two; ~**սով** two together; ~**սի ջուրը մի առվով չի գնում** they don't get on with each other, they are at odds; ~ **քայլի վրա** a few steps away, nearby; ~ **օրը մեկ** every other day; **մեկը ~(ս) անել** double the amount/number; **(մի)** ~ **քայլ** a few steps; **մի** ~ **օր** a couple of days; **(պարզ է) ինչպես** ~ **անգամ** ~ as plain as pikestaff.

ԵՐԿՈՒԱԿԱՆ, թ. two by two, in twos.

ԵՐԿՈՒՆՔ, գ. childbirth, pangs of childbirth, accouchment.

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, գ. Monday; ◊ ~ **օրերը** on Monday(s); **յուրաքանչյուր** ~**each Monday; **այս** ~ this Monday; **անցյալ** ~ last Monday; **հաջորդ** ~ next Monday.

ԵՐԿՈՒՍՏԵՔ, 1. ա. mutual; (փոխադարձ) reciprocal; 2. մ. mutually, reciprocally; ◊ ~ **համաձայնությամբ** by mutual consent; ~ **հարգանք** mutual respect; ~ **օգուտ՝ շահույթ** mutual benefit/advantage.

ԵՐԿՈՒՏԱԿ, ա. twofold; ◊ ~ **ծալել** fold in two.

ԵՐԿՓԵՂԿ(ԱՆԻ), ա. (դռան մասին) folding, having two folds; *կենս.* bivalve; ◊ ~ **նկար** diptych.

ԵՐԿՓԵՂԿԵԼ, բ. divide into two, bisect; (ճեղքել) split, cleave.

ԵՐԿՓԵՂԿՎԵԼ, բ. bifurcate, fork.

ԵՐԿՓԵՂԿՈՒՄ, գ. divercation, bifurcation, splitting; (ճեղքում) cleavage, cleaving.

ԵՐԿՓՈՂ(ԱՆԻ), ա. double-barrel(led); ◊ ~ **հրացան** double-barrelled gun.

ԵՐԿՓՈՒԼ, ա. two-phase, two-stage.

ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ, գ. dual nationality/citizenship.

ԵՐԿՕՐՅԱ, ա. two-day.

ԵՐՆԵԿ, *տես* ԵՐԱՆԻ:

ԵՐՇԻԿ, գ. sausage; ◊ **արյունով** ~ blood-pudding, black-pudding; **ապխտած** ~ sausage; **եփած** ~ boiled sausage; ~**ի գործարան** sausage factory.

ԵՐՇԻԿԱԳՈՐԾ, գ. sausage-maker.

ԵՐՇԻԿԱՎԱՃԱՌ, գ. sausage-dealer.

ԵՐՇԻԿԵՂԵՆ, գ. cooked meats.

ԵՐՋԱՆԻԿ, 1. ա. happy; (հաջողակ) fortunate, lucky; 2. մ. happily; ◊ ~ **աստղի տակ ծնվել** be born under a lucky star; ~ **մարդ** happy/lucky man; ~ **պատահականություն** lucky chance; ~ **լինես** be happy! good luck!

ԵՐՋԱՆԿԱԲԵՐ, ա. bringing happiness/luck.

ԵՐՋԱՆԿԱՆԱԼ, բ. become/get happy.

ԵՐՋԱՆԿԱՑՆԵԼ, բ. make happy.

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ, գ. happiness; ◊ ~ **ցանկանալ** wish good luck/happiness; ~ **ունենալ** be lucky/fortunate enough, have the good fortune.

ԵՐՐՈՐԴ, թ. third; thirdly; ◊ ~ **անձի միջոցով** indirectly, through another person; *բոլ.* ~ **աշխարհ** third world; ~ **գլուխ էջ** chapter/page

three, the third chapter/page; *բեր.* ~ **դեմք** third person; ~ **դեմքով խոսել** speak in the third person; ~ **կարգի** third-class, third-rate; ~ **կողմ** third party; **ճաշի** ~ **տեսակը** third course/desert/pudding; **մեկ** ~ **մասը** the third part, one third.

ԵՐՐՈՐԴԱԿԱՆ, ա. of third-rate importance, third-rate; (անկարևոր) insignificant; ◊ *երկրբ., բժշկ.* ~ **շրջան** tertiary.

ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ, գ. *կրոն.* Trinity; ◊ **սուրբ** ~ holy Trinity, the Triune God; (տոնը) Whitsun, Whitsunday.

ԵՐՓՆԵՐԱՆԳ, ա. many-coloured, motley, variegated; (խայտաբղետ, բազմագույն) particoloured, iridescent; (գույների ներկերի մասին) motley, gay; (հագուստի մասին) gay-coloured.

ԵՐՓՆԵՐԱՆԳԵԼ, բ. variegate, paint in gay colours, make gay/multicoloured.

ԵՐՓՆԵՐԱՆԳՎԵԼ, բ. show/appear particoloured/many-coloured.

ԵՐՓՆԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ, գ. diversity of colours.

ԵՓ, գ. boiling, cooking; (խմորում.գինու և՛) ferment; ◊ ~ **գալ** boil; ~ **տալ** boil thoroughly; ~**ը տեղը** well-boiled; ~**ը պակաս** underboiled, underdone.

ԵՓԱԾՈՒ, ա. steeped in boiling liquid.

ԵՓԵԼ, բ. boil; (պատրաստել) cook, make; (թխել) bake; (~ով ստանալ) extract by boiling; ◊ **ճաշ** ~ cook/make dinner; **թեյ՝ սուրճ** ~ make tea/coffee; **բանջարեղեն** ~ boil vegetables; **շիլա՝ արգանակ** ~ cook/make porridge/soup; **գարեջուր** ~ brew beer; ~**ած** cooked, boiled, baked.

ԵՓԵԼ-ԹԱՓԵԼ, բ. bustle about cooking, run the household; ◊ **եփող-թափող կին** good cook/housewife.

ԵՓՎԵԼ, բ. be boiling, be cooked/boiled/baked/broiled; *փխբ.* (կոփվել) become tempered, strengthen oneself.

ԵՓՈՒԿ, գ. broth; *բժշկ.* (բուժիչ) decoction; ◊ **բրնձի** ~ rice-water; **գարու** ~ barley-water.

ԵՓՈՒՄ, գ. cooking.

ԵՓՈՒՆ, ա. well-cooked, well-done; *փխբ.* (փորձված) experienced.

Չ

Չ, գ the sixth letter of the Armenian alphabet; (*numerical meaning*) six, sixth; ◊ ~ **դար** *sixth century.*

ՉԱԳԱ, *խորհ. հսկ.* գ. civil registration (office), civil registry.

ՉԱԳԱՎՈՐՎԵԼ, բ. be registered as a married couple.

ՉԱԳԱՎՈՐՈՒՄ, գ. registration of a/one's marriage.

ՉԱԶՐԱԲԵՐԱՆ, *տես* ՉԱԶՐԱԽՈՍ:

ՉԱԶՐԱԳԱՐՇ, ա. infamous, vile, villainous, scoundrelly.

ՉԱԶՐԱԳԱՐՇՈՒԹՅՈՒՆ, գ. infamy, vileness, abomination.

ՉԱԶՐԱԽՈՍ, ա. ribald, foul-mouthed man.

ՉԱԶՐԱԽՈՍԵԼ, բ. use foul/bad language.

ՉԱԶՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. ribaldry, foul language, filthy talk.

ՉԱԶՐԵԼԻ, ա. nasty, foul, bad; (գարշելի) sickening, loathsome; (ողկալի) infamous, vile; (զզվելի) loathsome; (ստոր) mean, base.

ՉԱԶՐԵԼՈՒԹՅՈՒՆ, գ. muck, filth; (գարշանք) loathing, dirty trick; (ողկանք) vile act, vileness, infamy; (զզվանք) abomination, loathsome/nasty thing; (ստորություն) meanness, baseness.

ԻՄԱՍԱԶՈՒՐԿ, ա. (de)void of sense/meaning.

ԻՄԱՍԱԼԻ(Ց), ա. pithy, interesting.

ԻՄԱՍԱՄԻՈՒ, ա. wise; *հեգն.* sage; ◊ **~ առաջնորդ** wise leader; **~ ծերուկի** sage old man.

ԻՄԱՍԱՄԻՈՒԹՅՈՒՆ, գ. wisdom; ◊ **ժողովրդական ~** popular wisdom.

ԻՄԱՍՏԻԿ, ա. sophist.

ԻՄԱՍՏԻԿԱՅԻՆ, ա. sophistic(al).

ԻՄԱՍՏԻԿՈՒԹՅՈՒՆ, գ. sophism.

ԻՄԱՍԱՅԻՆ, ա. *լեզվ.* semantic; ◊ **~ զարգացում** semantic development.

ԻՄԱՍԱՎՈՐ, ա. pithy.

ԻՄԱՍԱՎՈՐԵԼ, բ. give a meaning.

ԻՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ, գ. wisdom.

ԻՄԱՍՈՒԹՅՈՒՆ, գ. wisdom, truth.

ԻՄԱՍՈՒՆ, գ. sage, wise man, man of wisdom.

ԻՄԱՑ, միայն հետևյալ կապակցություններում՝ ◊ **~ անել** let sb know; **~ կաց** bear in mind; **~ տալ** notify, give notice of, let (sb) know.

ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ, ա. gnosiological.

ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. gnosiology, epistemology.

ԻՄԱՑԱԿԱՆ, ա. cognitive; (ճանաչելի), know-

able, cognizable, cognizant; ◊ **աշխարհը ~ է** the world is knowable.

ԻՄԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. cognoscibility; (իմացական կարողություն) cognition.

ԻՄԱՑՆԵԼ, բ. inform, notify, let know.

ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. (գիտելիքների ամբողջություն) knowledge; (ճանաչողություն) cognition; (իմացության տեսություն) theory of knowledge, epistemology.

ԻՄԱՑՈՒՆԱԿ, ա. sharp, keen-witted, quick-witted, bright.

ԻՄԱՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. sharpness; (հնաբազիտություն) wit; (խելամտություն) keenness of wit, keenwittedness; (ձեռներեցություն) quickness of wit; *խսկց.* quick wits.

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ, գ. imperialism.

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏ, գ. imperialist.

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ, ա. imperialist; ◊ **~ բանակ** the imperialist camp/army; **~ պատերազմ** imperialist war.

ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ, գ. impressionism.

ԻՄՊՐԵՍԻՈՆԻՍՏ, գ. impressionist.

ԻՄՊՐԵՍԻՈՆԻՍՏԱԿԱՆ, ա. impressionistic.

ԻՄՊՐՈՎԻԶԱՑԻԱ, գ. improvisation.

ԻՄՈՒՆ, ա. (վարակամերժ) *բժշկ.* immune (from/against).

ԻՄՈՒՆԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, գ. rehabilitation, immunize.

ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱ, գ. *բժշկ.* immunization.

ԻՄՈՒՆԻՏԵՏ, գ. *բժշկ.* immunity; (դիվանագիտական անձեռնմխելիություն) diplomatic immunity.

ԻՄՈՒՆՈԴԵՖԻՑԻՏ, գ. immunodeficiency.

ԻՄՈՒՆՈՀԱՄԱԿԱՐԳ, գ. immune system.

ԻՆԴԵՔՍ, գ. index (pl. -xes, *գիտ.* -dices).

ԻՆԴԵՔՍԱՎՈՐԵԼ, բ. index.

ԻՆԴԵՔՍԱՎՈՐՈՒՄ, գ. indexation; ◊ **գների ~** price indexation.

ԻՆԴԻԳՈ, գ. (գույն, ներկ) indigo, indigo blue, violet-blue; (լեռակ) blue; *ամ.* blueing.

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶՄ, գ. individualism.

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՍՏ, գ. individualist.

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՍՏԱԿԱՆ, ա. individualist(ic).

ԻՆԴՈՆԵԶԱԿԱՆ } ա. Indonesian(s).
ԻՆԴՈՆԵԶՅԱՆ }

ԻՆԴՈՆԵԶԻ } գ. Indonesian(s).
ԻՆԴՈՆԵԶՈՒՀԻ }

ԻՆԴՈՒԿՏԻՎ, ա. inductive.

ԻՆԴՈՒԿՑԻԱ, գ. induction.

ԻՆԴՈՒԿՑԻՈՆ, ա. induction; ◊ *ֆիզ.* **~ կոճ** induction coil; *տեխ.* **~ կանչ** induction call.

ԻՆԴՈՒՍՏՐԱՑՆԵԼ, բ. industrialize.

ԻՆԵՐՏ, ա. inert; (ոչ գործունյա, դանդաղկոտ) sluggish.

ԻՆԵՐՏՈՒԹՅՈՒՆ, գ. inertness; (դանդաղկոտություն) sluggishness.

ԻՆԵՐՑԻԱ, գ. *ֆիզ.* inertia, momentum; ◊ **~յով** under one's own momentum; *փխբ.* (մեխանիկորեն, մեքենայորեն) mechanically, automatically.

ԻՆԸ, թ. nine.

ԻՆԺԵՆԵՐ, գ. engineer; ◊ **երկաթուղային ~** railway engineer; **զինվորական ~** military engineer; **~ էլեկտրիկ** electrical engineer; **~ մեքենագետ** mechanical engineer; **~ շինարար** civil engineer; **~ նավաշինարար** naval architect.

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ } ա. engineering, engineer;
ԻՆԺԵՆԵՐԱՅԻՆ } *հմք.* the engineers; ◊ **~ զորամաս** engineer troops/corps.

ԻՆԿՈԳՆԻՏՈ, մ. incognito.

ԻՆԿՎԻԶԻՏՈՐ, *տես* ՀԱՎԱՍԱՔՆՆԻՉ:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԱԿԱՆ, *տես* ՀԱՎԱՍԱՔՆՆԱԿԱՆ:

ԻՆԿՎԻԶԻՑԻԱ, գ. *տես* ՀԱՎԱՍԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ:

ԻՆԿՈՒԲԱՏՈՐ, գ. incubator.

ԻՆԿՈՒԲԱՏՈՐԱՅԻՆ, ա. incubator.

ԻՆԿՈՒԲԱՑԻԱ, գ. incubation.

ԻՆԿՈՒԲԱՑԻՈՆ, ա. incubative; ◊ *բժշկ.* **~ շրջան** incubation (period).

ԻՆՁ, գ. *կենդ.* jaguar.

ԻՆՆ, *տես* ԻՆԸ:

ԻՆՆԱՄՅԱ, ա. (տևողություն) of nine years, nine-year; (տարիք) nine-year old; ◊ **~ երեխա** a nine-year-old child.

ԻՆՆԱՄՅԱԿ, գ. (տևողություն) nine years; (ժամանակաշրջան) nine years; (տարեդարձ) ninth anniversary.

ԻՆՆԱՄՍՅԱ, ա. of nine months, nine-month.

ԻՆՆԱՊԱՏԻԿ, ա. ninefold, nonuple.

ԻՆՆԵՐՈՐԴ, թ. ninth; ◊ **~ էջը** page nine.

ԻՆՆՍՈՒՆ, թ. ninety.

ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱ, ա. (տևողություն) of ninety years, ninety-year; (տարիք) ninety-year old, of ninety; ◊ **~ ծերուկ** ninety-year-old man.

ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱԿ, գ. (ժամանակաշրջան) ninety years; (տարեդարձ) ninetieth anniversary.

ԻՆՆՍՈՒՆԵՐՈՐԴ, թ. ninetieth.

ԻՆՆՕՐՅԱ, ա. of nine days, nine-day.

ԻՆՉ, դ. what, whatever; that, which; ◊ **~° անենք** what is to be done? (հետո ինչ) well, what of it?; **~ ասես կուգես** anything/whatever (you like); **~ արած** it can't be helped; there is nothing to be done; **~° արժե** how much/what does it cost?~ **գիտեմ իմանամ** how should I know? who can tell? **~ խոսք** there is no denying, it cannot be denied; **~° կա, ~° չկա** what news? *խսկց.* what's up?~ **կա-չկա** everything (without exception); **երեք տարի է, ~** three years have passed since, it is three years since; **~° է պատահել** what has happened? what is the matter? **~ էլ (որ) լինի պատահի** whatever happens; **~ կա-չկա տանել կողոպտել** strip

sb of everything, fleece sb; ~ **կլինի** please be so kind, would you be so kind (as to); ~՞ **կլինի, եթե** what if...?; ~ **հարկ** there is no necessity (at all); ~ **վերաբերում է ինձ** as far as I am concerned, for my part, as for me.

ԻՆՉԵՎԷ } մ. anyhow; (ինչ էլ որ լինի)
ԻՆՉԵՎԻՑԵ } after all, eventually; (այս կամ այն կերպ) one way or another; (բոլոր պարագաներում) in any case, in either event/case.

ԻՆՉ-ՈՐ, դ. some, a; ◊ ~ **բան** something, anything; ~ **կերպ** somehow; ~ **մեկը** someone, somebody, anyone, anybody.

ԻՆՉՊԵՍ, դ. how; ◊ ~ **երևում է** apparently, evidently; ~ **էլ լինի** be that as it may, however that may be; ~ **է, որ** for what reason, why; ~ **թե (նա գնացել է)** what (has he already gone?); ~ **կարելի է** impossible! there can be no question of that; ~ **հարկն է** well, properly; ~ **պարզվում է** as it turns out/proves; ~ **տեսնում եք** as you (can) see; ~ **օրինակ** as for instance/example.

ԻՆՉՊԻՍԻ, դ. what, such... as.

ԻՆՉՈՒ, դ. why, what for; (ինչ նպատակով) for what reason, with what purpose; ◊ ~ **չէ** why not?

ԻՆՉՔԱՆ, դ. how many/much; ◊ ~ **ասես՝ ուզես** as much/many as you want/like, to one's heart's content; ~ **ինձ հայտնի է** as far as I know; ~ **էլ որ** even if.

ԻՆՍՏԻՏՈՒՏ, գ. (ԲՈՒՀ) institute; (հաստատություն) institution.

ԻՆՎԵՆՏԱՐ, գ. stock, equipment; *ռզմ.* stores, supplies.

ԻՆՏԵԳՐԱԼ, գ., ա. *մաթ.* integral; ◊ ~ **հաշվարկում** calculus.

ԻՆՏԵԳՐԱՑԻԱ, գ. *մաթ.* integration.

ԻՆՏԵԳՐԵԼ, բ. *մաթ.* integrate.

ԻՆՏԵԳՐ(ԱՑ)ՈՒՄ, գ. integration.

ԻՆՏԵԼԵԿՏ, գ. intellect.

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ, ա. intellectual.

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ, գ. intellectual, intelligent person.

ԻՆՏԵԼԻԳԵՆՏԱԿԱՆ, ա. cultural, educated, intellectual.

ԻՆՏԵԼԻԳԵՆՏՈՒԹՅՈՒՆ, գ. culture.

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ, գ. intelligentsia, intellectuals.

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ, գ. international; (հիմնը) the Internationale; ◊ **առաջին՝ երկրորդ՝ երրորդ** ~ the First/Second/Third International.

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ, գ. internationalism.

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏ, գ. internationalist.

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ, ա. internationalist; ◊ ~ **դիրքեր** internationalist standpoint.

ԻՆՏԵՐՎԱԼ, գ. space, interval; *երաժշ.* interval; ◊ ~**ներով** at intervals.

ԻՆՏԵՐՎԻՈՒ, *տես* ՀԱՐՑԱՔՐՈՒՅՑ:

ԻՆՏԻՄ, ա. intimate.

ԻՆՏԻՄՈՒԹՅՈՒՆ, գ. intimacy.

ԻՆՔԸ } դ. (he) himself, (she) herself,
ԻՆՔՆ } (it) itself.

ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ, գ. self-ezpression.

ԻՆՔՆԱԲԱՎ, ա. self-sufficient, self-contained.

ԻՆՔՆԱԲԱՎԱԿԱՆ, ա. self-satisfied; (ինքնագոհ) complacent, smug; ◊ ~ **ժպիտ** self-satisfied/complacent smile.

ԻՆՔՆԱԲԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. self-satisfaction; (ինքնագոհություն) complacency, smugness.

ԻՆՔՆԱԲԱՐՁԻՉ, գ. fork-lift truck.

ԻՆՔՆԱԲԵՐԱԲԱՐ, մ. spontaneously; (ակամայից) involuntarily, unintentionally.

ԻՆՔՆԱԲԵՐ(ԱԿԱՆ), ա. spontaneous; (ակամա) involuntary; (ոչ դիտավորյալ, առանց դիտավորության) unintentional.

ԻՆՔՆԱԲՈՒԽ, ա. spontaneous; (անկեղծ) sincere; (բնական) natural.

ԻՆՔՆԱԳԻՏԱԿԻՑ, ա. conscious.

ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ } գ. (self-)
ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒՄ } consciousness.

ԻՆՔՆԱԳԻՐ, 1. գ. autograph; (բնագիր) original manuscript; 2. ա. autographic registering, (self-)recording; ◊ ~ **նամակ** holograph (letter); ~ **ստորագրություն** signed autograph.

ԻՆՔՆԱԳԼՈՒԽՈՒԹՅՈՒՆ, գ. self-will; (քմահաճություն) wilfulness, arbitrariness; (կամակորություն) petty tyranny, stupid wilfulness.

ԻՆՔՆԱԳԼՈՒԽ, ա. self-willed; (բնահաճ) wilful, arbitrary; (խրտաճի) wayward; մ. wilfully, arbitrarily.

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ, գ. self-appraisal.

ԻՆՔՆԱԳՆԱՑ, ա self-propelled; ◊ *ռզմ.* ~ **սարք** self-propelled mounting; ~ **հրետանի** self-propelled artillery.

ԻՆՔՆԱԳՈՀ, ա. self-satisfied.

ԻՆՔՆԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆ } գ. self-generation
ԻՆՔՆԱԳՈՅԱՑՈՒՄ } tion, spontaneous generation.

ԻՆՔՆԱԳՈՅՈՒԹՅՈՒՆ, գ. self-existence.

ԻՆՔՆԱԳՈՒՀ, 1. ա. self-satisfied, complacent; 2. գ. (սնապարծ մարդ) boaster; (պարծենկոտ) braggart; (ցուցամոլ) show-off.

ԻՆՔՆԱԳՈՒՀՈՒԹՅՈՒՆ } գ. complacence,
ԻՆՔՆԱԳՈՎՔ } complacency; (պարծենկոտություն) bragging (of, about); (սնապարծություն) boasting, vainglory; *խոսկ.* self-advertisement.

ԻՆՔՆԱԳՈՐԾ, ա. amateur; (ինքնաշխատ) automatic, self-propelled; (ինքնուրույն գործող) self-employed; ◊ ~ **խումբ** amateur troupe.

ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, գ. (ինքնուրույն նախաձեռնություն) independent action, spontaneous activity, self-employment; ◊ **գեղարվեստական** ~ amateur performances.

amateur talent activities; **~բյան երեկո** amateur (evening) concert, amateurs' evening.
ԻՆՔՆԱԴԱՏԱՍՏԱՆ, գ. mob law, lynching.
ԻՆՔՆԱԴԱՏԱՊԻՏՈՅԱՆ, գ. self-condemnation.
ԻՆՔՆԱԵՌ, գ. samovar; ◊ **~ը գցել** heat/set the samovar.
ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՈՒՄ, գ. self-development.
ԻՆՔՆԱԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ } գ. health.
ԻՆՔՆԱԶԳԱՑՈՒՄ }
ԻՆՔՆԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ } գ. self-examination, introspection.
ԻՆՔՆԱԶՆՆՈՒՄ }
ԻՆՔՆԱԶՈՒՀ, ա. selfless, մ. selflessly.
ԻՆՔՆԱԶՈՒՀԱԲԱՐ, մ. selflessly, self-sacrificingly.
ԻՆՔՆԱԶՈՒՀՈՒԹՅՈՒՆ, գ. self-sacrifice, selflessness.
ԻՆՔՆԱԶՈՒՀՈՒՄ, գ. self-sacrifice.
ԻՆՔՆԱԶՍՊՈՒԹՅՈՒՆ } գ. self-control,
ԻՆՔՆԱԶՍՊՈՒՄ } self-restraint; (ինքնատիրապետում) self-possession, self-command, self-mastery.
ԻՆՔՆԱԶՈՒՍՊ, ա. self-restrained, self-possessed; (ինքնամփոփ) reserved.
ԻՆՔՆԱԹԱՓ, 1. գ. dump truck, tip-up lorry; 2. ա. ◊ **~ բեռնաթափ** hopper(-barge); self-unloading; **~ մեքենա** dump truck; **~ վագոն** hopper(-car).
ԻՆՔՆԱԹԻԹ, գ. aircraft, airplane, aeroplane; (ոլիորիժապր) airship; *խսկց.* plane.
ԻՆՔՆԱԹԻԹԱՇԻՆԱՐԱՆ, գ. aircraft builder, aircraft constructor.
ԻՆՔՆԱԹԻԹԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. aircraft construction.
ԻՆՔՆԱԹԻԹԱՎԱՐ, գ. flier, flyer, pilot; (օդաչու) aviator.
ԻՆՔՆԱԹՈՒՆԱՎԱՐՈՒՄ, գ. auto-intoxication, self-poisoning.
ԻՆՔՆԱԽԱԲ(Ե)ՈՒԹՅՈՒՆ, գ. self-deception; (ինքնագայթակղում) self-delusion.
ԻՆՔՆԱԽԱՐԱԶԱՆԵԼ, բ. (self-)flagellate, (self-)torture.
ԻՆՔՆԱԽԱՐԱԶԱՆՈՒՄ, գ. self-flagellation, self-torture.
ԻՆՔՆԱԽՈՀ, ա. self-absorbed; (կենտրոնացած) concentrated.
ԻՆՔՆԱԾԻՆ, ա. native, virgin; ◊ *երկրբ.* **~ մետաղ** native/virgin metal, ore.
ԻՆՔՆԱԿԱԼ, 1. գ. autocrat; (բռնակալ) despot; 2. ա. autocratic; (անկախ) independent, self-dependent, self-sufficient.
ԻՆՔՆԱԿԱԼԱԿԱՆ, ա. autocratic; (բռնակալական) despotic.
ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. autocracy; (բռնակալություն) despotism.
ԻՆՔՆԱԿԱՄ, ա. self-willed, voluntary; մ. voluntarily, of one's own accord.
ԻՆՔՆԱԿԱՄԱՐԵՆ, մ. voluntarily.
ԻՆՔՆԱԿԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. self-will, free will, voluntariness.
ԻՆՔՆԱԿԱՅԱՑՈՒՄ, գ. self-realization, self-knowledge.
ԻՆՔՆԱԿԱՒԱՎԱՐՈՒՄ, գ. self-government; ◊ **~ման մարմիններ** self-government institutions; **տեղական ~ման մարմիններ** institutions of local government, local authorities.
ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ, ա. autobiographic(al).
ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. autobiography.
ԻՆՔՆԱԿՈՉ, 1. ա. self-styled, self-promoting, false; (անկոչ) unbidden, uninvited; 2. գ. imposter; (կեղծ մարդ) pretender; ◊ **~ հյուր** uninvited/unbidden guest; **~ հյուր լինել** come without invitation.
ԻՆՔՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ, գ. intrusion; (խաբեպայություն) imposture.
ԻՆՔՆԱԿՐԹԱԿԱՆ, ա. self-educational.
ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, գ. self-education.
ԻՆՔՆԱՀԱՆԳԱՍՏԱՑՈՒՄ, գ. complacency, self-satisfaction.
ԻՆՔՆԱՀԱՎԱՆ, ա. self-enamoured, (self-)conceited; (մեծամիտ) haughty.
ԻՆՔՆԱՀԱՎԱՆԱԲԵՐ, մ. conceitedly.
ԻՆՔՆԱՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. self-admiration; (մեծամտություն) self-conceit, self-importance; haughtiness, self-esteem.
ԻՆՔՆԱՀՈՍ, գ. fountain-pen; (հոսք) drift; *տեխ.* gravity feed; ◊ **~ի թողնել** neglect, let take its course; **~ի քաղաքականություն** (policy of) laisser-faire, laissez-faire(n).
ԻՆՔՆԱՀՌՉԱԿԵԼ, բ. self-sppoint(ed).
ԻՆՔՆԱՀՐԱԺԱՐՈՒՄ, գ. renunciation, (մերժում) refusal to accept, rejection; (ինքնամերժում) self-denial, (self) abnegation.
ԻՆՔՆԱՀՐԱՊՈՒՐԱՆՔ } գ. self-delusion,
ԻՆՔՆԱՀՐԱՊՈՒՐՈՒՄ } delusions about oneself.
ԻՆՔՆԱՀՐԿԻԶՈՒՄ, գ. self-immolation.
ԻՆՔՆԱՁԵՎ, ա. original, distinctive; (յուրահատուկ) peculiar, particular.
ԻՆՔՆԱՁԻԳ, ա. self-firing, automatic firing.
ԻՆՔՆԱՃԱՆԱՉ, ա. self-knowing, conscious.
ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ } գ. self-knowledge, consciousness, autognosis.
ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄ }
ԻՆՔՆԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, գ. self-supply.
ԻՆՔՆԱՄԵՐԺՈՒԹՅՈՒՆ } գ. (self-)abnegation.
ԻՆՔՆԱՄԵՐԺՈՒՄ }
ԻՆՔՆԱՄԻԼ, ա. egoist.
ԻՆՔՆԱՄԻԼՈՒԹՅՈՒՆ, գ. selfishness, egoism.
ԻՆՔՆԱՄՈՌԱՑ, 1. ա. selfless; 2. մ. selflessly.
ԻՆՔՆԱՄՈՌԱՑՈՒՄՈՒԹՅՈՒՆ } գ. self-oblivion,
ԻՆՔՆԱՄՈՌԱՑՈՒՄ } oblivion, forgetfulness of self.
ԻՆՔՆԱՄՓՈՓ, ա. reserved; *խսկց.* buttoned up; (ինքնախոհ) self-absorbed, (self-) concentrated; (ինքն իր մեջ ամփոփված) withdrawn/retired/shrunk into oneself.

ԻՆՔՆԱՄՓՈՓՎԵԼ, բ. shrink/retire/withdraw into oneself; (զուսպ դառնալ) become/be reserved; (վատ տրամադրությամբ) sullen; (ծածկամիտ՝ գաղտնապահ դառնալ) become reticent/secretive; (իր պատյանի մեջ պարփակվել) shut oneself up in one's own shell.

ԻՆՔՆԱՄՓՈՓՈՒԹՅՈՒՆ, գ. concentration; (զսպվածություն) reserve; (լռակյացություն) reticence; (ծածկամտություն) secrecy, secretiveness.

ԻՆՔՆԱՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ, **ԻՆՔՆԱՆԱՀԱՏԱԿՈՒՄ** } գ. self-sacrifice.

ԻՆՔՆԱՆԵՐԸՆՉՈՒՄ, գ. auto-suggestion.

ԻՆՔՆԱՆԿԱՐ, գ. self-portrait.

ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ, գ. end in itself.

ԻՆՔՆԱՆՎԱՍՈՒՄ, գ. depreciation.

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, **ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒՄ** } գ. self-preservation; ◊ **~ըյան բնազդ** self-preservation instinct.

ԻՆՔՆԱՊԱՇՏ, 1. ա. selfish, egoistical, self-loving, narcissistic; 2. գ. egoist, narcissist.

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. self-defence.

ԻՆՔՆԱՍԵՐ, **ԻՆՔՆԱՍԻՐԱԿԱՆ** } ա. proud.

ԻՆՔՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. self-respect, self-esteem, pride; ◊ **կեղծ ~** false pride; **խնայել մեկի ~ը** spare sb's self-respect/self-esteem/vanity, be considerate of sb's pride; **մեկի ~բյանը դիպչել** offend/wound sb's self-esteem.

ԻՆՔՆԱՍՊԱՆ, գ. suicide, self-murderer; *իրավ.* felo de se (pl. felones de se); ◊ **~ լինել** commit suicide.

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. suicide, self-murder.

ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿԵԼ, բ. serve oneself.

ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ, գ. self-service.

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄ, գ. self-examination, self-control, self-test.

ԻՆՔՆԱՎԱՐ, ա. self-governing, self-dependent, autonomous; ◊ **~ հանրապետություն** autonomous republic; **~ մարզ** autonomous region.

ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ, ա. autonomous.

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. self-government; ◊ **~բյան մարմիններ** self-government institutions; **տեղական ~բյան մարմիններ** institutions of local government.

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, **ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒՄ** } գ. self-examination, introspection.

ԻՆՔՆԱՎՍՏԱՀ, ա. self-confident; (մեծամիտ) self-opinioned, self-opinionated, presumptuous.

ԻՆՔՆԱՎՍՏԱՀԱԲԱՐ, **ԻՆՔՆԱՎՍՏԱՀՈՐԵՆ** } մ. self-confidently.

ԻՆՔՆԱՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, գ. self-confidence, self-assurance; (մեծամտություն) self-opinion, presumption.

ԻՆՔՆԱՏԻՊ, ա. original, distinctive; (յուրահատուկ) peculiar.

ԻՆՔՆԱՏԻՊՈՐԵՆ, մ. in an original manner/way, distinctively, peculiarly.

ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹՅՈՒՆ, գ. originality, distinctiveness; (յուրահատկություն) peculiarity.

ԻՆՔՆԱՏԻՐԱՊԵՏՈՒՄ, գ. self-command, self-mastery; (ինքնազսպություն) self-control, self-possession; (հանգստություն) composure.

ԻՆՔՆԱՐԺԵՔ, գ. (prime) cost, cost price; ◊ **~ով վաճառել՝ ծախել** sell at cost price, sell at par value.

ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ, գ. self-expression.

ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ, ա. self-critical.

ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՐԵՆ, մ. with self-criticism, in a self-criticizing way.

ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. self-criticism.

ԻՆՔՆԸՍՏԻՆՔՅԱՆ, մ. in itself, by oneself/himself; ◊ **~ հասկանալի է** it goes without saying, it stands to reason.

ԻՆՔՆԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. self-knowledge.

ԻՆՔՆԻՆ, մ. by himself, in itself, of its own accord; ◊ **~ կպարզվի** it will clear up/come out by itself.

ԻՆՔՆԻՇԽԱՆ, ա. absolute, autocratic; (բռնակալական) despotic; (ինքնակառավարվող) arbitrary; (անկախ) independent, sovereign.

ԻՆՔՆԻՇԽԱՆԱԲԱՐ, **ԻՆՔՆԻՇԽԱՆԱՊԵՍ**, **ԻՆՔՆԻՇԽԱՆՈՐԵՆ** } մ. wilfully.

ԻՆՔՆԻՇԽԱՆԱԿԱՆ, ա. absolute, autocratic, despotic.

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. autocracy, absolute rule, sovereignty.

ԻՆՔՆԻՐԵՆ, մ. by himself/herself/itself.

ԻՆՔՆՈՎԻ, մ. independently, by itself.

ԻՆՔՆՈՐՈՇ, ա. self-governing, self-determining.

ԻՆՔՆՈՐՈՇՎԵԼ, բ. constitute oneself, gain independence.

ԻՆՔՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ, **ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ** } գ. self-determination; ◊ **ազգերի ~ման իրավունք** the right of nations to self-determination.

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ, գ. originality; (էություն) essence; (անկախություն) independence, self-dependency, self-sufficiency.

ԻՆՔՆՈՒՍ, 1. ա. self-taught, self-educated, autodidactic; 2. գ. (անձ) self-taught/self-educated person, autodidact.

ԻՆՔՆՈՒՍՈՒԲԱՐ, մ. ◊ **~ սովորել** learn smth without a teacher, teach oneself (sth).

ԻՆՔՆՈՒՍՈՒՑ, գ. self-instruction manual, teach-yourself book.

ԻՆՔՆՈՒՍՈՒՑՈՒՄ, գ. self-education, self-instruction, self-training.

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ, ա., մ. independent; ◊ **~ հետազոտություն** independent/original research; **~ աշխատել** work independently/on one's own.

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆԱՔԱՐ, մ. independently, without assistance, on one's own.

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. independence, self-dependence.

ԻՆՔՆՕԳՆՈՒԹՅՈՒՆ, գ. self-help.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱ, *տես* ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ:

ԻՆՖՐԱԿԱՐՄԻՐ, ա. *ֆիզ.* infra-red.

ԻՆՖՈՒԶՈՐԻԱ, գ. *կենս.* infusorium (pl.-ria).

ԻՇԱՔԵՒ, գ. donkey('s) burden; *փխբ.* huge load.

ԻՇԱՄԵՂՈՒ, գ. *կենդ.* bumble-bee.

ԻՇԱՅԾԱՄ, գ. *կենդ.* buck, deer, elk.

ԻՇԻԱՍ, գ. *բժշկ.* sciatica.

ԻՇԽԱՆ[1], գ. lord, prince; (տիրակալ) ruler, sovereign; (տեր) master.

ԻՇԽԱՆ[2], գ. (ձուկ) trout (pl. trout).

ԻՇԽԱՆԱՓԱՉՈՒԹՅՈՒՆ, գ.power-seeking.

ԻՇԽԱՆԱԴՈՒՍՏ, գ. princess.

ԻՇԽԱՆԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ, գ. misfeasance.

ԻՇԽԱՆԱԶՐԿԵԼ, բ. deprive sb of power.

ԻՇԽԱՆԱԶՈՒՐԿ, ա. devoid of power.

ԻՇԽԱՆԱԿԱՆ, ա. princely.

ԻՇԽԱՆԱՄԵՏ, ա. pro-governmental.

ԻՇԽԱՆԱՄԵՐ, ա. power-loving, ambitious; (իշխանության ձգտող) aspiring to power.

ԻՇԽԱՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. love of power, ambition, craving/aspiration for power.

ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. overturn, revolution, coup d'etat.

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. power, authority; (տիրակալություն) rule, empire; (իշխանական երկիր) principality; ◊ **գերագույն ~** supreme/sovereign power, sovereignty; **գործադիր ~** executive power; *խորհ.* **սովետական ~** Soviet power; **տեղական ~** local authorities; **օրենսդրական ~** legislative power; **~ի գլուխ կանգնել** come to power.

ԻՇԽԱՆՈՒՀԻ, գ. princess; (տիրակալուհի) ruler, sovereign; (տիրուհի) mistress.

ԻՇԽԵԼ, բ. rule; (տիրել, կառավարել) govern, administer; (իշխանություն ունենալ) wield power (over); (իշխանություն քաղեցնել իրականացնել) exercise dominion/sovereignty (over)/power.

ԻՇՈՏԻԿ, **ԻՇՈՏՆՈՒԿ** } գ. trestle, sawhorse.

ԻՇՈՒԿ, գ. *փոքշ., ճկ.* donkey, ass.

ԻՈՆ, գ. *ֆիզ.* ion.

ԻՈՆԱՑՈՒՄ, գ. *ֆիզ.* ionization.

ԻՋԵՎԱՆ(ԱՏԵՂ), գ. inn, coach house; (ապաստարան) shelter, haven, refuge.

ԻՋԵՎԱՆԱՏԵՐ, գ. innkeeper, landlord, host.

ԻՋԵՎԱՆԵԼ, բ. put up (at), stop (at), stay (at).

ԻՋԵՑՆԵԼ, բ. let/get down, lower (down); ◊ **գլուխը ~** hang one's head; **գնացքից ~** detrain; **դրոշակը ~** lower a flag; **ինքնաթիռից ~** set down; *ամ.* deplane; **մեկին տրամվայից ~** remove/eject sb, make sb get out/off a tram; **նավից ~** set down, put ashore, disembark, land; **վարագույրը ~** pull/draw the curtain.

ԻՋԵՑՈՒՄ, գ. lowering, letting down; (կրճատում) reduction; ◊ **աշխատավարձի ~** wage cut; **գների ~** reduction of prices, price cut; **ինքնարժեքի ~** cutting of production costs.

ԻՋՆԵԼ, բ. come/get/go down, descend; ◊ **աստիճաններով ~** go/come downstairs; **գնացքից ~** alight from/get off a train, detrain; **ինքնաթիռից ~** get off a plane; *ամ.* deplane; **նավից ~** disembark, land; **տրամվայից ~** get out (of a tram), get off a tram.

ԻՋՎԱԾՔ, գ. *բժշկ.* rupture; *գիտ.* hernia; *բժշկ.* (ներքին օրգանների) prolapsus/prolapse (of internal organs); *երկրբ.* (փլուզում) landslide, landslip; (խոռոչ, փոս տեղ, խորշ) hollow, cavity, depression.

ԻՐԼԱՆԴԱՑԻ(ՆԵՐ), գ. Irishman(-men).

ԻՐԼԱՆԴԱԿԱՆ, ա. Irish.

ԻՐԼԱՆԴԵՐԵՆ, գ., ա., մ. Irish, the Irish language.

ԻՐԼԱՆԴՈՒՀԻ, գ. Irishwoman.

ԻՄ, միայն **ըստ ~** կապակցության մեջ՝ to my mind/thinking, in my opinion.

ԻՍԼԱՄ, գ. Islam.

ԻՍԼԱՄԱԿԱՆ, ա. Islamic.

ԻՍԼԱՆԴԱԿԱՆ, ա. Iceland, Icelandic.

ԻՍԼԱՆԴԱՑԻ(ՆԵՐ), գ. Icelander(s).

ԻՍԼԱՆԴԵՐԵՆ, գ., ա., մ. Icelandic, the Icelandic language.

ԻՍԿ[1], 1. վ. namely; 2. ա. (իսկապես) true, veritable; ◊ **~ և ~** exactly; **~ և ~ հայրն է** the exact copy of his father; *խսկց.* the spitting image of his father.

ԻՍԿ[2], շ. (միևնույն) while; (բայց) but; ◊ **~ եթե** in case; **~ եթե՞** what if ? ~ **դո՞ւ** and what/how about you? *խսկց.* and you?

ԻՍԿԱԿԱՆ, ա. real, actual; (ճշմարիտ) true, veritable; (բուն) authentic, original; (անխարդախ) genuine; ◊ **~ մարդ** *խսկց.* the man; **Ակադեմիայի ~ անդամ** (full) Member of the Academy of Sciences; **~ի հետ ճիշտ է** (it is) a certified true copy.

ԻՍԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. authenticity.

ԻՍԿԱՊԵՍ, մ. really, indeed; (փաստորեն) in fact; (իրականում) in reality, actually.

ԻՍԿԻ, մ. *խսկց.* quite, not at all; (երբևէ) ever; (գոնե) even.

ԻՍԿՈՒԹՅՈՒՆ, գ. authenticity; (ճշմարտություն) truth; (իրականություն) reality.

ԻՍԿՈՒՅՆ, մ. immediately; (անհապաղ) in-

stantly, at once; (անմիջապես) right/straight away; (առանց վարանելու՝ մտածելու) straight off, out of hand.

ԻՍՊԱՆԱԿԱՆ, ա. Spanish.

ԻՍՊԱՆԱՑԻՆԵՐ), գ. Spaniard(s).

ԻՍՊԱՆԵՐԵՆ, գ., ա., մ. Spanish, the Spanish language.

ԻՍՊԱՆՈՒՀԻ, գ. Spaniard, Spanish woman.

ԻՍՊԱՍ, մ. completely; (ամբողջովին) utterly, entirely; (լրիվ) totally.

ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ, ա. Israeli.

ԻՏԱԼԱԿԱՆ, ա. Italian.

ԻՏԱԼԱՑԻՆԵՐ), գ. Italian(s).

ԻՏԱԼԵՐԵՆ, գ., ա., մ. *Italian*, the Italian language.

ԻՏԱԼՈՒՀԻ, գ. Italian (woman).

ԻՐ, գ. thing; good; (առարկա) object; (առ ու ծախի առարկա) article; (իրեր, բեռ, ուղեբեռ) luggage, baggage; ◊ **~երը իրենց անուններով կոչել** *դմծ.* call things by their proper names, call a spade a spade.

ԻՐԱԳԵՏ, ա. informed, versed (in), conversant (with).

ԻՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. knowledge, possession of information.

ԻՐԱԳՈՐԾԵԼ, բ. carry out, bring about; (իրականացնել) realize, translate into reality; (կենսագործել) put into practice, carry into life; (ի կատար ածել) carry/put into effect, implement.

ԻՐԱԳՈՐԾԵԼԻ, ա. practicable, realizable; (կատարելի) feasible.

ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. practicability, *feasibility*.

ԻՐԱԳՈՐԾՎԵԼ, բ. come true/to be; (իրականացվել) be realized/fulfilled.

ԻՐԱԳՈՐԾՈՒՄ, գ. realization; (կենսագործում) carrying into life, putting into practice; (կիրառում, որոշման կն) implementation; (կատարում, իրականացում) execution.

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ, գ. event; (դեպք) incident; (դժբախտ պատահար) accident; ◊ **վերջին ~ները** current events, latest developments.

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. conditions; (իրավիճակ) situation; (հանգամանքներ) conjuncture, juncture; ◊ **այս ~թյան պայմաններում** at this juncture/state of affairs.

ԻՐԱԶԵԿ, ա. knowledgeable, well-informed (about); (տեղյակ) aware (of); ◊ **~ լինել** be well-informed about sth; *խսկց.* be in the know; **~ դառնալ՝ տեղեկանալ** inquire (about), want to know (about); **~ դարձնել** inform, let know; **~ պահել** keep sb informed; *խսկց.* bring sb up-to-date.

ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ, գ. knowledge, (possession of) information.

ԻՐԱԶՆԱԿԱՆ, ա. graphic, obvious; (ուսուցման ուսման մեջ) visual; ◊ **~ դաս** object lesson; **~ պիտույքներ** visual aids; **ուսուցման ~ մեթոդներ** visual methods of teaching.

ԻՐԱԶՆՈՒԹՅՈՒՆ, գ. clearness, obviousness; (ուսուցման մեջ) use of visual methods/aids.

ԻՐԱԿԱՆ, ա. actual, real; (գործադրելի) workable, practicable; (փաստական) practical; (էական) essential, material; (շոշափելի, նշանակալից) considerable; ◊ **~ արժեք** actual value; **~ կորուստ** actual loss.

ԻՐԱԿԱՆԱՆԱԼ, բ. come true, come to be, be realized.

ԻՐԱԿԱՆԱՆԱԼԻ, ա. practicable, realizable, feasible.

ԻՐԱԿԱՆԱՆԱԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. practicability, feasibility.

ԻՐԱԿԱՆԱՊԵՍ, մ. really, indeed.

ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ, *տես* ԻՐԱԳՈՐԾԵԼ:

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ, բ. be realized, become a reality; (իրագործվել) come true/to be.

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. realization; (կիրառում) implementation, execution; ◊ **արդարադատության ~** administration/implementation of justice.

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. reality; (ճշմարտություն) truth.

ԻՐԱԿԱՆՈՒՄ, մ. in fact/reality.

ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. (փաստ) fact, case; (երևույթ) phenomenon, occurrence.

ԻՐԱՅԻՆ, ա. material.

ԻՐԱ(ՅՆԱ)ՆԱԼ, բ. materialize.

ԻՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. materiality, substantiality.

ԻՐԱՆ, գ. trunk, body; (գոտկատեղ, մեջք) waist; (ծառի մարմնաբուն) trunk, stem, bole; (նավի կմախք) hull.

ԻՐԱՆԱԿԱՆ } ա. Iranian.
ԻՐԱՆՅԱՆ }

ԻՐԱՆՑԻՆԵՐ), գ. Iranian(s).

ԻՐԱՊԱՀԵՍ, գ. storehouse, shed.

ԻՐԱՊԱՀՈՑ, գ. cloakroom, checkroom.

ԻՐԱՊԱՇՏ, գ. realist.

ԻՐԱՊԱՇՏԱԿԱՆ, ա. realistic(al).

ԻՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. realism; (ուղղություն արվեստի մեջ) realistic trend in art.

ԻՐԱՊԵՍ, մ. really, indeed; (իրականում) actually, virtually; (փաստորեն) in fact, practically.

ԻՐԱՍԱՑԻ, ա. obstinate; (համառ) stubborn, persistent; (կամակոր) refractory; (ինքնավստահ) opinionated; ◊ **~ լինել** have one's own way, stand one's ground, persist (in), insist (on, upon).

ԻՐԱՎ, վ. really, indeed; ◊ **~ որ** (ճիշտն ասած) to tell the truth; (իսկապես, իրականում) actually, in (actual) fact.

ԻՐԱՎԱԲԱՆ, գ. lawyer; ◊ **~ի մասնագիտություն** the legal profession.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ, ա. legal, judicial, juri-

dic(al); ◊ **~ անձ** juridical person; **~ խորհրդատվություն** legal advice/consultation (office); **~ օգնություն** legal aid; **~ ֆակուլտետ** faculty/department of law, law school.

ԻՐԱՎԱԲԱՆՈՐԵՆ, մ. legally.

ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, *տես* ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

ԻՐԱՎԱԲԱՐ, մ. by right(s), in justice; (արդարացիորեն) in (all) fairiness, justifiably.

ԻՐԱՎԱԳԵՏ, *տես* ԻՐԱՎԱԲԱՆ:

ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ, *տես* ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. jurisprudence, (science of) law.

ԻՐԱՎԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. justice.

ԻՐԱՎԱԶԱՆՑ, գ. wrongdoer; (իրավախախտիչ) transgressor/infringer of the law; (հանցագործ) criminal, delinquent, offender.

ԻՐԱՎԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ, գ. breaking/transgression/infringement of the law; (հանցանք) offence, crime.

ԻՐԱՎԱՁՈՐ, ա. competent.

ԻՐԱՎԱՁՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. competence.

ԻՐԱՎԱՅՐԿԵԼ, բ. deprive sb of his rights.

ԻՐԱՎԱՅՐԿՎԵԼ, be deprived of rights.

ԻՐԱՎԱՅՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. lack of rights, absence of civil rights.

ԻՐԱՎԱԶՐԿՈՒՄ, գ. deprivation of (civil) rights, disfranchisement.

ԻՐԱՎԱԶՈՒՐԿ, ա. without any rights, deprived of civil rights; ◊ **~ անել**, *տես* ԻՐԱՎԱԶՐԿԵԼ:

ԻՐԱՎԱԽԱԽՏ, գ. offender; ◊ **անչափահաս ~** juvenile offender.

ԻՐԱՎԱԽՈՐՀՐԴԱՏՈՒ, գ. legal adviser/consultant, lawyer, jurist.

ԻՐԱՎԱԿԱՆ, ա. legal; ◊ **~ անձ** juridical person; **~ գործընթաց** legal proceedings; **~ հիմնարկներ** legal institutions; **~ նորմեր** legal rules.

ԻՐԱՎԱԿԱՐԳ, գ. law and order; (իրավական համակարգ) legal system.

ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ, ա. equal in rights, possessing/enjoying equal rights.

ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. equality of rights; ◊ **ժողովուրդների ~** equality of (the) peoples.

ԻՐԱՎԱՄԲ, մ. *in justice, by right(s)*; (արդարացիորեն) justifiably.

ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ, ա. (մարմիններ) ~ law enforcement bodies.

ԻՐԱՎԱՍՈՒ, ա. competent; ◊ **իշխանության ~ մարմիններ** competent government bodies.

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ, գ. competence; ◊ **~թյան շրջանակ** jurisdiction; **~թյան մեջ չմտնել** be outside of one's competence, be beyond one's jurisdiction; **~ից դուրս լինել** *փխբ.* be out of one's sphere, be over one's head.

ԻՐԱՎԱՐԲԱՐ, գ. arbiter, arbitrator.

ԻՐԱՎԱՐԱՐԱԿԱՆ, ա. arbitration; ◊ **~ դատարան** court of arbitration, arbitration tribunal.

ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. arbitration; ◊ **~թյան ներկայացնել** submit the question to arbitration.

ԻՐԱՎԻՃԱԿ, գ. situation; (իրադրություն) state of affairs; (վիճակ) condition, position; (հանգամանքների զուգորդում) juncture, conjuncture.

ԻՐԱՎՈՒՆՔ, գ. right; (որպես գիտություն) law; (վկայական, թույլտվություն) licence; ◊ **ազգերի ինքնորոշման ~** right (of nations) to self-determination; **եկեղեցական ~** canon law; **սովորութական նախադիպային ~** common/case law, judicial precedence; **ձայնի ~** the vote, franchise, suffrage; **մարդու ~ներ** human rights; **միջազգային ~** international law; *իրավ.* **վաղեմության ~** prescriptive right, prescription; **վարորդական ~** driving licence; **քաղաքացիական ~** civil law; **քաղաքացիական ~ներ** civil rights; **քրեական ~** criminal law; **~ առնել** obtain a licence; **~ բանեցնել** give orders, command, be in command/charge; *խսկց.* be the boss; **~ համարել** have a right; **~ տալ** give the right; *պշտ.* grant/accord the right; **~ ունենալ** have the right (to), be entitled (to); **~ները վերականգնել** rehabilitate; **~ից զրկել** deprive sb of his rights; **իր ~ից օգտվել** exercise one's rights (to); **ձայնի ~ից զրկել** disenfranchise.

ԻՐԱՐ, դ. each other, one another; ◊ **~ անցնել, ~ով անցնել, ~ գլխով դիպչել** begin to bustle, start fussing, bustle, fuss; (հուզվել, ամհանգստանալ) get excited, take alarm; **~ բերան բքել** *գռհկ.* arrange things (with), come to an arrangement/agreement; **~ գալ** (շարժվել, երերալ) move, sway, reel, shake to and fro; (հանդիպել) meet, come across, run against; **~ գիրկ ընկավել** throw oneself/fall into sb's arms; **~ դիպչել՝ կպչել** quarrel, break with; **~ խառնել** cause to quarrel, make a mess/rumpus, create havoc; **~ հասնել** come to (sb's) help/aid/assistance; **~ (հետ) ընկնել** come to terms, get along; **~ ուտել , ~ միս ուտել** wrangle, squabble, bicker.

ԻՐԱՐԱՄԵՐԺ, ա. mutually exclusive/incompatible.

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ, գ. alarm, commotion; (շփոթ) bustle, turmoil; ◊ **~ գցել** set up an alarm.

ԻՐԱՑՆԵԼ, բ. realize; (վաճառել) sell.

ԻՐԱՑՈՒՄ, գ. realization; (վաճառք) sale.

ԻՐԵՂԵՆ, 1. գ. things, belongings; (ուղերթո) luggage, baggage; 2. ա. material; ◊ **~ ապացույց(ներ)** material evidence.

ԻՐԵՆ, դ. oneself; ◊ **~ գտնել** find oneself; **~ գցել** throw/fling oneself; **~ թույլ տալ** venture, permit oneself; (նյութապես) be able to afford; **~ կորցնել** lose one's head; **~ ~** all by

himself/herself/itself; ~ **հավաքել** brace/collect oneself; ~ **մեղադրել** blame oneself; ~ **ուտել** (զայրանալ) rage, be furious; (տանջվել) torment oneself, suffer torments; ~ **ցույց տալ** show oneself; *խսկց.* show off; *դիմ.* put one's best foot foremost; **~ից դուրս գալ** lose one's temper; **~ով անել** (սեփականել) appropriate; (սեփականեցնել) privatize; (իր կողմը գրավել) win round/over to one's side.

ԻՐԵՆՔ, դ. they, themselves.

ԻՐԻԿՆԱՂԵՄ, գ. twilight, gloaming.

ԻՐԻԿՆԱՂԵՄԻՆ, մ. in the twilight, towards evening.

ԻՐԻԿՆԱԺԱՄ, գ. evening (time); *եկեղ.* (երեկոյան ժամերգություն) vespers.

ԻՐԻԿՆԱԺԱՄԻՆ, մ. of an evening, in the evening.

ԻՐԻԿՆԱԼՈՒՅՍ, գ. evening-glow; (մայրամուտ) sunset.

ԻՐԻԿՆԱՀԱՑ, գ. supper.

ԻՐԻԿՆԱՄՈՒԹ, գ. twilight, dusk.

ԻՐԻԿՆԱՄՈՒՏ, գ. nightfall.

ԻՐԻԿՆԱՄՏԻՆ, մ. at nightfall, towards evening, in the twilight.

ԻՐԻԿՆԱՅԻՆ, ա. evening.

ԻՐԻԿՆԱՊԱՀ, գ. evening (time).

ԻՐԻԿՆԱՊԱՀԻՆ, *տես* ԻՐԻԿՆԱԺԱՄԻՆ:

ԻՐԻԿՆԱՅԻԼ, գ. night dew.

ԻՐԻԿՈՒՆ, *խսկց. տես* ԵՐԵԿՈՒ:

ԻՐԻՑԿԻՆ, գ. priest's wife.

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. fact; (իրական դեպք) true story; (իրականություն) reality; (իրադարձություն) event.

ԻՐՈՔ, վ. really; (իսկապես) indeed; (իրականում) in reality, actually; (փաստորեն) in fact.

Լ

Լ, լ the twelfth letter of the Armenian alphabet; (numerical meaning) thirty, thirtieth.

ԼԱԲԻՐԻՆԹՈՍ, գ. labyrinth; (բավիղ, խճճվածություն) maze; ◊ **Կրետեի** ~ the Cretan maze.

ԼԱԲԻՐԻՆԹՈՍԱՁԵՎ, ա. labyrinthine.

ԼԱԲՈՐԱՆՏ, գ. laboratory assistant.

ԼԱԲՈՐԱՏՈՐ(ԱԿԱՆ), **ԼԱԲՈՐԱՏՈՐԱՅԻՆ** } ա. laboratory; laboratorial; ◊ ~ **փորձ** laboratory experiment; ~ **մեթոդ** laboratory/experimental method.

ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ, գ. laboratory; *խսկց. կրճ.* lab.

ԼԱԲՐԱԴՈՐ, գ. *հնք.* labrador.

ԼԱԲՐԱԴՈՐԱՔԱՐ, գ. *հնք.* labradorite.

ԼԱՋՈՒՐ, գ. azure, sky-blue, light-blue; ◊ **բեռլինյան** ~ Berlin/Prussian blue.

ԼԱՋՈՒՐԱՅԻՆ, **ԼԱՋՈՒՐԵ** } ա. azure, sky-blue.

ԼԱՋՈՒՐԱՉ(ՅԱ), ա. blue-eyed.

ԼԱՋՈՒՐԻՏ, գ. azurite.

ԼԱԹ, գ. (կտոր, շոր) cloth, material; (պատառ, ծվեն) rag, scrap, shred.

ԼԱԹԵ, ա. scrappy, rag(ged).

ԼԱԹԵՂԵՆ, գ. rags, old clothes.

ԼԱԹԱՀԱՎԱՔ, գ. rag-and-bone man.

ԼԱԹԱՎՈՐ, ա. in rags, ragged.

ԼԱԼ[1], բ. (լաց լինել) cry, weep; (ողբալ) mourn (over, for), bemoan (for), lament.

ԼԱԼ[2], *տես* ՀԱՄՐ:

ԼԱԼ[3], գ. (քարը) ruby; (գույնը) ruby.

ԼԱԼԱԳԻՆ, ա. sorrowful, plaintive; (ողբալի) mournful, lamentable, bewailing; (վշտալի) doleful; (մռայլ, տխուր) dismal.

ԼԱԼԱԳՈՒՅՆ, ա. ruby.

ԼԱԼԱՅԱՆ, 1. ա. plaintive; 2. մ. plaintively.

ԼԱԼԱԿԱՆՉ, գ. wail.

ԼԱԼԿԱՆ, 1. ա. whining, tearful, lachrymose; 2. գ. whiner; *փխբ.* (միշտ դժգոհ) (constant) complainer, complainant; ◊ ~ **երեխա** cry-baby.

ԼԱԼԿ(Վ)ԵԼ, բ. *բրբ.* become dumb; *փխբ.* grow dumb; ◊ **սարսափից** ~ grow dumb with fear/terror/horror.

ԼԱԽՏ, գ. whip, knout; (մտրակ) lash; *պատմ.* mace.

ԼԱԽՏԱԿԻՐ, գ. *պատմ.* mace-bearer.

ԼԱԿ[1], ա. *խսկց.* rotten, bad; ◊ ~ **ձու** bad/rotten egg.

ԼԱԿ[2], գ. (խոզի՝ շաճ կեր, լափ) swill, mash, hog-wash.

ԼԱԿԵԼ, բ. lap, lap up; *փխբ. ամարգ.* spend/squander in drink, guzzle.

ԼԱԿՈՏ, գ. (շաճ ճագ) puppy; (ճագ) cub; (տղա) urchin; (փողոցային անապաստան երեխա) street urchin, guttersnipe; (միամիտ, անփորձ) greenhorn; *փխբ. վիրավ.* whelp; *փխբ.* (համբակ) ignoramus, know-nothing.

ԼԱԿՈՏ-ԼՈՒԿՈՒՏ, **ԼԱԿՈՏ-ՄԱԿՈՏ** } գ. riff-raff.

ԼԱՄԱ[1], գ. *կենդ.* llama.

ԼԱՄԱ[2], գ. *կրոն.* lama.

ԼԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. lamaism.

ԼԱՄԱՅԱՊԵՏ, գ. Dalai Lama.

ԼԱՄՊ, գ. lamp; ◊ **էլեկտրական** ~ bulb; **էլեկտրոնային** ~ valve, thermionic valve; **հանքահորի՝ հանքափորի** ~ safety-lamp; **նավթի** ~ kerosene/oil lamp; **ցերեկային լույսի** ~ fluorescent lamp; **քառասուն մոմանոց** ~ lamp of forty candle-power/candles; **~ի ապակի** lamp-glass, lamp-chimney.

ԼԱՄՊԱԳՈՐԾ, գ. lamp-maker.

ԼԱՄՊԱԿԱԼ, գ. lamp-holder.
ԼԱՄՊԱՐ, գ. *եկեղ.* icon-lamp.
ԼԱՅ-ԼԱՅ, 1. ծ. bye-bye; 2. գ. hushaby, lullaby.
ԼԱՅՆ, 1. ա. wide, broad; 2. մ. widely, broadly; ◊ **~ աշխարհայացք** broad outlook/perspective/attitude; **~ ապրել** live in (grand) style; **~ զանգվածներ** the broad/vast masses; **~ էկրան** broad screen; **~ իմաստով** in the broad sense; *ռզմ.* **~ ճակատ** wide/extended front; **~ մասշտաբով** on a large scale; **~ սիրտ ունենալ** be big-hearted, be of generous nature; **~ սպառման ապրանքներ** consumer goods; **~ տարածում գտնել** be widely used/spread.
ԼԱՅՆԱԲԵՐԱՆ, ա. wide-mouthed; (շշի մասին) wide-mouthed bottle; (ամանի մասին) wide-mouthed (jar etc.); (լայնաշեղբ) broad-bladed, *փխբ.* (շատախոս, բացբերան) garrulous, indiscreet, blabbing.
ԼԱՅՆԱԳԻԾ, ա. broad-gauge; ◊ **~ երկաթուղի** broad-gauge line.
ԼԱՅՆԱԴԵՄ, ա. broad-faced, moon-faced.
ԼԱՅՆԱԹԵՁԱՆ(ԻՔ), ա. wide-sleeved/cuffed.
ԼԱՅՆԱԹԵՎ, ա. large-winged, broad-winged.
ԼԱՅՆԱԹԻԿՈՒՆՔ, ա. broad-shouldered.
ԼԱՅՆԱԹՈՒՓ, ա. (ծառի մասին) branchy.
ԼԱՅՆԱԼԱՆՁ, ա. gently-sloping; *փխբ.* broad-chested, high-chested.
ԼԱՅՆԱԼԻՑ, 1. ա. long/well-bent bow; 2. գ. a well braced/a far shooting bow; (աղեղ) bow.
ԼԱՅՆԱԽՈՀ, ա. broad-minded, open-minded.
ԼԱՅՆԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ, գ. broad-mindedness, open-mindedness.
ԼԱՅՆԱԾԱԼ, ա. (փեշ) wide-folded; (շոր) wide-plaited, wide-pleated; (տաբատ) wide-creased.
ԼԱՅՆԱԾԱՎԱԼ, ա. spacious; (լայնարձակ) roomy, expansive; (ընդարձակ) extensive.
ԼԱՅՆԱԾՆՈՏ, ա. with a wide jaw; having a wide jaw.
ԼԱՅՆԱԿԱՄԱՐ, ա. broad-arched.
ԼԱՅՆԱԿԱՆ, ա. transversal, latitudinal.
ԼԱՅՆԱԿԻ, ա., մ. transverse, transversely, across.
ԼԱՅՆԱԿՈՒՐԾՔ, ա. broad-chested.
ԼԱՅՆԱՀԱՂՈՐԴ, ա. broadcasting.
ԼԱՅՆԱՀԱՅԱՑ, ա. broad-minded, broad-gauge.
ԼԱՅՆԱՀՈՒՆ, ա. abounding in water, deep-watered; *փխբ.* (բազմակողմանի) versatile.
ԼԱՅՆԱՁԻԳ, ա. stretched, far-stretched, long-drawn.
ԼԱՅՆԱՃԱԿԱՏ, ա. high-browed, having a broad forehead.
ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱԲ, ա. large-scale/range/dimension.
ԼԱՅՆԱՄԱՐՄԻՆ, ա. wide-bodied; (հաղթանդամ) corpulent, massive; (մարմնեղ) portly; (պարարտ) obese; (գեր) fat; (հաստ) stout, thick.
ԼԱՅՆԱՆԱԼ, բ. widen, broaden, gain in breadth; (ընդարձակվել) expand; (բիբերի մասին) dilate.
ԼԱՅՆԱՆԻՍՏ, ա. broad-based.
ԼԱՅՆԱԾԵՂՔ, ա. broad-bladed.
ԼԱՅՆԱՉՈՒՆՉ, ա. magnanimous, generous; (մեծ ընդգրկումով) broad-ranged.
ԼԱՅՆԱՉՈՒՐԹ, ա. broad-lipped.
ԼԱՅՆԱՊԱՐՓԱԿ, ա. extensive, wide-ranging, wide-scale.
ԼԱՅՆԱՍԱՂԱՐԹ, ա. broad-leaved.
ԼԱՅՆԱՏԱՐԱԾ, ա. widespread, extensive; (ձգված, տարածված) (out)stretched.
ԼԱՅՆԱՏԵՐԵՎ, ա. broad-leaved.
ԼԱՅՆԱՐՁԱԿ, ա. spacious, expansive; (ընդարձակ) vast, voluminous.
ԼԱՅՆԱՐՁԱԿՈՐԵՆ, մ. vastly, widely, broadly.
ԼԱՅՆԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. spaciousness, space, wide open space.
ԼԱՅՆԱՑՆԵԼ, բ. widen, broaden; (ընդարձակել) expand, extend; (մեծացնել) enlarge.
ԼԱՅՆԱՑՈՒՄ, ա. broadening; *բժշկ.* dilation; ◊ **ստամոքսի՝ երակի ~** distension of stomach/vein.
ԼԱՅՆԱՓԵՂԿ, ա. wide-panelled.
ԼԱՅՆԱՓԵՇ, **ԼԱՅՆԱՔՂԱՆՑ(Ք)** } ա. wide/full-skirted.
ԼԱՅՆԵԶՐ, ա. (գլխարկ) wide-brimmed.
ԼԱՅՆԷԿՐԱՆ, ա. wide-screen; ◊ **~ ֆիլմ** wide-screen film.
ԼԱՅՆՈՍԿՐ, ա. big-boned.
ԼԱՅՆՈՐԵՆ, մ. widely.
ԼԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ա. broadness, breadth; (լայնք) width; *աշխրգ.* latitude.
ԼԱՅՆՈՒՂԻ, ա., գ. broad-gauge.
ԼԱՅՆՔ, գ. width; ◊ **~ով** in width; ◊ **թևերի ~** spread.
ԼԱՆԳԱՌ(Ք), գ. *տեխ.* beam; (ժամացույցի) balance-wheel.
ԼԱՆՋ, գ. breast; (սարալանջ) slope.
ԼԱՆՋԱԲԱՑ, ա. low-necked, décolleté *ֆր.*:
ԼԱՉԱԿ, գ. *բրբ.* kerchief, (triangular) scarf.
ԼԱՉԱՌ, *խսկց.* 1. գ. shrew (of a woman). 2. ա. quarrelsome, peevish, shrewish, cantankerous.
ԼԱՊՏԵՐ, գ. lantern, lamp, torch. ◊ **գաղտնալույս ~** blind/dark lantern; **գրպանի (էլեկտրական) ~** torch, (pocket) flash-light; **մեքենայի ~** headlight; **մոգական ~** magic lantern; **փողոցի ~** street lamp.
ԼԱՊՏԵՐԱՅԻՆ, ա. lantern, lamp.
ԼԱՊՏԵՐԱՍՅՈՒՆ, գ. lamppost.
ԼԱՊՏԵՐԱՎԱՌ, գ. lamplighter.
ԼԱՊՏԵՐԻԿ, գ. *նվգ.* small lantern; ◊ **Չինական ~** Chinese lantern.
ԼԱՋՎԱՐԴ, ա., գ. azure.
ԼԱՋՎԱՐԴԱՅԻՆ, ա. azure.

ԼԱՍ, գ. raft, float.
ԼԱՍՏԱԳՈՐԾ, գ. rafter, raft(s)man.
ԼԱՍՏԱԿ, գ. rostrum, platform, scaffold.
ԼԱՍՏԱՆԱՎ, գ. ferry(-boat), floater.
ԼԱՍՏԱՆԱՎԱՅԻՆ, ա. ferry.
ԼԱՍՏԱՆՅՈՒՄ, գ. ferrying.
ԼԱՍՏԱՌԱՔ, գ. raftsman, rafter, wood-floater.
ԼԱՍՏԱՌԱՔԵԼ, բ. float/raft timber.
ԼԱՍՏԱՌԱՔՈՒՄ, գ. floating/rafting timber.
ԼԱՍՏԱՎԱՐ, գ. ferryman, rafter, raftsman.
ԼԱՍՏԵՆԻ, գ. alder, common alder.
ԼԱՎ, 1. ա. good; (առողջ) healthy, sound; (դրական) positive; 2. մ. well, very well; 3. վ. all right! agreed! OK! 4. գ. (գնահատական) good: ◊ **~ ապտակ** good blow; **~ առաջարկություն** good suggestion; **~ եղանակ** good/fine weather; **~՞ ես** how are you (getting on)?; **~ ընկեր** bosom/close friend; **~ թենիսիստ** sound tennis player; **~ ժամանակ անցկացնել** have a good time, enjoy oneself; **~ կլիներ** it would be a good thing/all right/nice; **~ ձայն** good voice; **~ միտք** good idea; **~ պատասխան** positive/favourable answer/reply; **~ սրտի տեր** kind-hearted/good soul; **~ օրի չէ** things are in a bad way with him; he is not doing well; **~ը ցանկանալ** wish sb well/good: *հեգն.* **համա ~ է** a nice how-d'ye-do, a pretty kettle of fish; **ես ինձ ~ եմ զգում** I feel well/fine; **ինչ ~ բան կա** what's the news?; **մի ~ գումար** a round sum; **մի ~ ծեծ տալ** give sb a good beating.
ԼԱՎԱ, գ. lava; ◊ **~յի հոսք հեղեղ** lava-stream, lava-flow.
ԼԱՎԱԳՈՒՅՆ, ա. best; ◊ **~ դեպքում** at best.
ԼԱՎԱԿԱՄ, ա. benevolent, well-wishing.
ԼԱՎԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ, գ. benevolence; (բարություն) kindness; (բարի կամք) goodwill.
ԼԱՎԱՄԱՐԴ, միայն **~ դառնալ** լինել կապակցության մեջ, pretend to be well-wishing.
ԼԱՎԱՆԱԼ, բ. improve, ameliorate, take a turn for the better; (առողջանալ) get well, recover (from), get better; (գիրանալ) put on/gain weight/flesh, grow plumper; (գեղեցկանալ) grow prettier/better-looking.
ԼԱՎԱՇ, գ. lavash, Armenian national bread.
ԼԱՎԱՊԱՇՏ, ա. optimistic, sanguine.
ԼԱՎԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. optimism.
ԼԱՎԱՏԵՂՅԱԿ, ա. versed (in), conversant (with); (գիտակ) aware of/that, competent.
ԼԱՎԱՏԵՂՅԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. awareness.
ԼԱՎԱՏԵՍ, 1. ա. optimistic, hopeful, sanguine; 2. գ. optimist; ◊ **~ մարդ** optimist.
ԼԱՎԱՏԵՍԱԲԱՐ, մ. optimistically.
ԼԱՎԱՏԵՍԱԿԱՆ, ա. optimistic, sanguine.
ԼԱՎԱՏԵՍՈՐԵՆ, *տես* ԼԱՎԱՏԵՍԱԲԱՐ:
ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. optimism.
ԼԱՎԱՑՆԵԼ, բ. (ավելի լավ դարձնել) improve, make better, ameliorate, amend; (բուժել) cure sb of sth; ◊ *գոնե.* **ցեղը ~** upgrade, grade up.
ԼԱՎԱՑՈՒՄ, գ. improvement, amelioration.
ԼԱՎԻԿ, ա. pretty, nice, lovely, comely.
ԼԱՎԻՍ, գ. tweezers.
ԼԱՎՈՐԱԿ, ա. (of) high/good quality; (դիմացկուն) durable.
ԼԱՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. high quality; (դիմացկունություն) durability.
ԼԱՎՈՒԹՅՈՒՆ, գ. good deed; ◊ **~ անել** be good to sb, do good; **~ի՛ց տակ չմնալ տակից դուրս գալ** show one's gratitude/appreciation, return/repay sb's kindness.
ԼԱՏԻՆ, ա. Latin.
ԼԱՏԻՆԱԲԱՆ, գ. Latinist, Latin scholar.
ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Latinism.
ԼԱՏԻՆԱԳԵՏ, գ. Latinist.
ԼԱՏԻՆԱԳԻՐ, ա. written in Latin.
ԼԱՏԻՆԱԿԱՆ, ա. Latin; ◊ **~ այբուբեն** Roman alphabet.
ԼԱՏԻՆԱՏԱՌ, ա. written in Latin; ◊ **~ այբուբեն** Roman alphabet; *տպգր.* (տպատառ) Roman characters/type.
ԼԱՏԻՆԱՑՆԵԼ, բ. Latinize.
ԼԱՏԻՆԱՑՈՒՄ, գ. Latinization.
ԼԱՏԻՆԵՐԵՆ, գ., ա., մ. Latin, the Latin language. ◊ **դասական ~** classical Latin.
ԼԱՏԻՇ, գ. Lett.
ԼԱՏԻՇԱԿԱՆ, ա. Lettish.
ԼԱՏԻՇԵՐԵՆ, ա., գ., մ. Lettish, the Lettish language.
ԼԱՏՎԱԿԱՆ, ա. Latvian.
ԼԱՏՎԱՑԻ, գ. Latvian.
ԼԱՏՎԵՐԵՆ, ա., գ., մ. Latvian, the Latvian language.
ԼԱՐ, գ. cord, twine; wire; (նվագարանի) string; (աղեղի) bow-string; *մաթ.* chord. (թոկ) tow(ing)-rope; ◊ **էլեկտրական ~** wire, lead.
ԼԱՐԱԽԱՂԱՑ, գ. tightrope-walker, equilibrist; *փխր.* (խորամանկ ճարպիկ մարդ) dodger; *փխր.* (խաբեբա, խարդախ) swindler.
ԼԱՐԱԽԱՂԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. tightrope-walking; *փխր.* (աչքակապություն) swindle; *փխր.* (խաբեբայություն, խարդախություն) fraud.
ԼԱՐԱՅԻՆ, ա. stringed; ◊ **~ գործիքներ** stringed instruments, the strings; **~ նվագախումբ** string orchestra.
ԼԱՐԱՆ, գ. (պարան, թոկ) string, cord; (բարակ թոկ) (pack-)thread, twine; (կեղ) plait.
ԼԱՐԱՓԱԿ, ա. wire-intangled.
ԼԱՐԱՓԱԿՈՒՄ, գ. wire entanglement/obstacle.
ԼԱՐԵԼ, բ. (ձգել) stretch, draw, strain; *երժ.* tune (up), attune; *մեխ.* wind (up); ◊ **ականջը ~** 1. strain one's ears, prick one's ears; 2. (պատրաստ լինել) attune one's ear to sth, lend one's ears to; **աղեղը ~** draw the bow; **զարթուցիչը ~** set the alarm-clock; **ժամացույցը ~** wind up

the watch/clock; **խաղալիքը** ~ wind up the toy; **հարաբերությունները** ~ strain relations; *բրբ.* **ձին** ~ urge (on), drive on, chase, pursue; **մեկին** ~ *խսկց.* wind sb up, annoy sb; **մկանները** ~ strain the muscles, tense the muscles; **ջութակը** ~ tune up/attune the violin; **ուժերը** ~ strain (every) nerve (to do sth), exert oneself.

ԼԱՐԹԱՓ, ա. (երաժշտ. գործիքի մասին) out of tune; (լարվածությունը նվազած) relaxed; ◊ ~ **անել** let off/shoot an arrow.

ԼԱՐՎԱԾ, ա. strained, strenuous; (ձգված) tense, *խսկց.* wound up; ◊ ~ **աշխատանք** strenuous/intensive work, efforts; ~ **հարաբերություններ** strained relations; ~ **նյարդեր** tense nerves; ~ **մթնոլորտ** tense atmosphere.

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. tension, tenseness; (լարված դրության) tension; (դժվար ծանր կացության) strenuousness; ◊ **նյարդային** ~ nervous tension; **մտավոր** ~ mental strain; **հուզական** ~ emotional strain; ~**ությանը դիմանալ** bear the strain.

ԼԱՐՎԵԼ, բ. become aggravated/strained; stretch; (ժամացույցի մասին) be wound up/set; (երաժշտ. գործիքների մասին) be tuned up; (ճիգեր գործադրել) strain /exert oneself.

ԼԱՐՈՒՄ, գ. strain, stretch; *երժշ.* tuning (up); *մեխ.* winding (up); ◊ *էլ.* **բարձր** ~ high tension.

ԼԱՑ, գ. cry, weeping, crying; ◊ ~ **լինել** cry, weep; ~ **ու թաց** cry, wail; ~ **ու կական** cry, wail ~ **ու կոծ** cry, wail; ~ **ու շիվան** cry, wail; ~ **ու շիվան գցել** sob; ~**ից խեղդվել** choke with sobs.

ԼԱՑԱՋԱՅՆ, *տես* ԼԱԼԱՋԱՅՆ:

ԼԱՑԿՈՒՄ(ԱԾ), ա. ready to cry, on the verge of tears, repressing/restraining/checking tears.

ԼԱՑԿՈՒՆԵԼ, բ. well up; ◊ **նա լացակումեց** tears welled up in her eyes.

ԼԱՑԱՑՆԵԼ, բ. make sb cry.

ԼԱՑԵԼ, *տես* ԼԱԼ:

ԼԱՑԿԱՆ, 1. ա. whining, tearful, lachrymose; 2. գ. (անձ) whiner; ◊ ~ **երեխա** cry-baby.

ԼԱՑԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. tearfulness.

ԼԱՑՈՒԿԱԾ, գ. (loud) cry, wail.

ԼԱՈՒՐԵԱՏ, *տես* ԴԱՓՆԵԿԻՐ:

ԼԱՓ, գ. *բրբ.* swill, mash; (անհամ ջրիկ ճաշ) wish-wash; (ջրալի կերակուր շան կատվի խոզերի համար) hog-wash; ◊ **գլխին (շան)** ~ **թափել** give sb a good wigging/dressing down.

ԼԱՓ(ԼԱՓ)ԵԼ, բ. *խսկց., բրբ.* (չափազանց շատ ուտել) gorge (oneself); (ագահորեն խժռել) devour, eat up, gobble; (ագահությամբ ուտել՝ խմել) guzzle; ◊ **աչքերով՝ հայացքով** ~ devour with one's eyes.

ԼԱՓԼԱՓ(ՈՒՐ)ԵԼ, բ. *խսկց., բրբ.* gorge (oneself), guzzle.

ԼԱՔԱ, գ. *բրբ.* spot, stain; (բիծ) blot, speck.

ԼԱՔԵԼ, բ. varnish, lacquer.

ԼԱՔՈՏԵԼ, բ. spot, stain; (կեղտոտել) dirty, soil.

ԼԵԳԱԼ, ա. legal.

ԼԵԳԱԼԱՑՈՒՄ, գ. legalization.

ԼԵԳԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. legality.

ԼԵԳԵՆԴ, գ. legend.

ԼԵԳԵՆԴԱԿԱՆ, **ԼԵԳԵՆԴԱՅԻՆ** } ա. legendary.

ԼԵԳԻՏԻՄԱՑՆԵԼ, բ. legitimate.

ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆ, գ. legitimation.

ԼԵԶԳԻ, գ. Lezghin, Lezghin woman.

ԼԵԶԳԻԿԱՆ, ա. Lezghin.

ԼԵԶՎԱԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. linguogeography.

ԼԵԶՎԱԲԱՆ, գ. linguist.

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ, ա. linguistic(al).

ԼԵԶՎԱԲԱՆՈՐԵՆ, մ. linguistically.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. linguistics; ◊ **համեմատական** ~ comparative linguistics.

ԼԵԶՎԱԳԱՐ, ա. garrulous, talkative; *խսկց.* blabbing.

ԼԵԶՎԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. garrulity, talkativeness; *խսկց.* blabbing.

ԼԵԶՎԱԳԵՏ, *տես* ԼԵԶՎԱԲԱՆ:

ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ, *տես* ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ:

ԼԵԶՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *տես* ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԼԵԶՎԱԴԱՇՏ, գ. linguistic field.

ԼԵԶՎԱԶՈՒՐԿ, ա. (համր) dumb; (մունջ) mute; (լռակյաց) silent; (անխոս) speechless.

ԼԵԶՎԱԸՆՏԱՆԻՔ, գ. family of languages.

ԼԵԶՎԱՍԱՀՍՏՈՒՄ, գ. breaking of linguistic norms.

ԼԵԶՎԱԿ, գ. tongue; *կզմխս.* uvula (pl. -ae); *աշխրգ.* tongue of land; ◊ **դռան** ~ latch.

ԼԵԶՎԱԿԱՆ, ա. linguistic, language.

ԼԵԶՎԱԿԱՊ, գ. ◊ ~ **ընկնել** grow /be stricken dumb (with).

ԼԵԶՎԱԿՈՒԽ, ա. միայն ~ **անել** կապակցության մեջ՝ talk sb's head off; (լռեցնել) out-talk.

ԼԵԶՎԱԿՌԻՎ, գ. *խսկց.* dispute about/in words, logomachy; ◊ ~ **տալ** wrangle (with), squabble (with), altercate (with), argue (with).

ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. sociolinguistics.

ԼԵԶՎԱՆԻ(Կ), ա. sharp-tongued.

ԼԵԶՎԱՆԻՈՒԹՅՈՒՆ, գ. sharp-tonguedness.

ԼԵԶՎԱՆՅՈՒԹ, գ. language material.

ԼԵԶՎԱՇԻՆԱՐԱՐ, գ. language creator/inventor.

ԼԵԶՎԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. language creation/invention.

ԼԵԶՎԱՐՄԱՏ, գ. *կզմխս.* root of the tongue.

ԼԵԶՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. linguistic change.

ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. language policy.
ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, գ. linguistic culture, civilization.
ԼԵԶՈՒ, գ. *կզմխս.* tongue; (խոսք) language, tongue; (ուտելիք) tongue; *ռզմ. խսկց.* (լեզու, գերի) prisoner-of-war, prisoner for interrogation, informant; ◊ **ազգային ~** national language; **ընդհանուր ~ գտնել** find common language (with), come to terms; **խոսակցական ~** colloquial/familiar speech, spoken language; **կենդանի՝ մեռած ~** living/dead language; **մայրենի ~** mother tongue; *գիտ.* vernacular; **չար ~** bitter/venomous tongue; *բժշկ.* **փառակալած ~** coated/furred tongue; **~ առնել** find one's faculty of speech/tongue; **երկար ~ ունենալ** have a long tongue, his tongue is long for his teeth; **~ թափել** wag one's tongue; **~ հանել** put/stick out one's tongue (at sb); **~ն առամների տակ պահել** hold one's tongue, keep a still tongue in one's head; **~ն բացել՝ ~ին ազատություն տալ** loosen one's tongue, talk too glibly; **~ն բերանում դառնում՝ պտտվում է** he has a ready tongue; **~ն իրեն պահել** hold one's tongue; **~ն կախ ընկած** with one's tongue hanging out, as fast as one's legs will carry; **~ն կապ ընկավ** his tongue failed him; **~ն կծել** bite one's tongue; *փխբ.* shut up; **~ն մինչև երուսաղեմ կտանի** you can get anywhere if you know how to use your tongue; **~ն չի պտտվի (ասել)** he won't have the heart (to say); **~ն քոր է գալիս** he is itching to; **(բժշկին) ~ն ցույց տալ** show one's tongue (to the doctor); *փխբ.* **բոցի՝ կրակի ~ներ** tongues of flame; **նոր ~ներ** modern languages; **~վի ծայրին** on the tip of one's/the tongue; **~ի տակ փուշ ու ոսկոր չկա** loose tongue; **~իդ վրա փուշ դուրս գա** a plague on you for saying such things.
ԼԵՀԱԳԻԱ, *տես* ՔՆԱՀՏ:
ԼԵՀԱԿԱՆ, ա. Polish.
ԼԵՀ(ԱՑԻ), գ. Pole.
ԼԵՀԵՐԵՆ, ա., գ., մ. Polish, the Polish language.
ԼԵՀՈՒՀԻ, գ. Pole.
ԼԵԼԱԿ, գ. blue; *ամ.* blueing.
ԼԵԼԱԿԱԳՈՒՅՆ, ա. blue.
ԼԵԼԱԿԵԼ, բ. blue.
ԼԵԼԱՀԱՄ, ա. very bitter, tasting of bile, bitter tasting.
ԼԵԼԱՑԱՔ, **ԼԵԼԱՊԱՏԱՌ** } ա. horrified, terrified.
ԼԵԼԱՊԱՐԿ, գ. *կզմխս.* gall-bladder.
ԼԵԼԻ, գ. gall, bile. ◊ **~ն ջուր կտրեց՝ դարձավ** his heart sank to his boots/ rose to his mouth; **~ն ցամաքեց** he has his heart in his mouth; **~ն պատռվել** be scared to death.
ԼԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. bile, bitterness, bitter taste/stuff; *փխբ.* (մաղձոտություն) billiousness; *փխբ.* (թունոտություն) acrimony.
ԼԵՅՏՄՈՏԻՎ, գ. leitmotif.
ԼԵՌ, գ. mountain; ◊ **Կովկասյան ~ներ** the Caucasus, Caucasian mountains; **~ քար** rock; **~ն ի վեր** up the hill.
ԼԵՌՆԱՔԱՇ, գ. crest; (գագաթ) top, peak, summit.
ԼԵՌՆԱՔՆԱԿ, գ. highlander, uplander, mountain dweller; ◊ **Կովկասի ~ներ** Caucasian highlanders; **շոտլանդացի ~** Highlander.
ԼԵՌՆԱԳԱԳԱՓ, գ. (mountain) top, peak, summit.
ԼԵՌՆԱՊՆԱՑ, 1. ա. mountain, passing across mountains; 2. գ. mountaineer.
ԼԵՌՆԱՊՆԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. mountaineering.
ԼԵՌՆԱԳՈԳ, գ. (mountain) ravine, gully.
ԼԵՌՆԱԳՈՅԱՑՈՒՄ, գ. *երկրբ.* orogenesis, orogeny.
ԼԵՌՆԱԳՈՏԻ, գ. mountain ridge.
ԼԵՌՆԱԳՈՐԾ, գ. miner.
ԼԵՌՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. mining.
ԼԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. mountain cartography.
ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿԱՅԻՆ, ա. downhill skiing, mountain skiing.
ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿՈՐԴ, գ. mountain-skier.
ԼԵՌՆԱԴԱՇՏ, գ. plateau (pl. -teaus, - teaux).
ԼԵՌՆԱԶԱՆԳՎԱԾ, գ. massif.
ԼԵՌՆԱՄԹԱՍՔ, գ. saddle.
ԼԵՌՆԱԼԱՆՋ, գ. mountain side, mountain slope.
ԼԵՌՆԱԿԱՓՍԱ, գ. mountain hollow.
ԼԵՌՆԱԿԱՆ, 1. ա. mountain; 2. գ. highlander, mountaineer.
ԼԵՌՆԱԿԱՊ, *տես* ԼԵՌՆԱՆՑՔ:
ԼԵՌՆԱԿԱՏԱՐ, *տես* ԼԵՌՆԱԳԱԳԱՓ:
ԼԵՌՆԱԿԱՐԿԱՒ, ա. soaring like mountains, mountain high.
ԼԵՌՆԱԿԻՐՃ, գ. mountain gorge, defile.
ԼԵՌՆԱԿՈՂ, *տես* ԼԵՌՆԱԼԱՆՋ:
ԼԵՌՆԱԿՈՂՄ, գ. highlands.
ԼԵՌՆԱԿՈՒԻՎ, գ. guerilla warfare.
ԼԵՌՆԱԿՈՒՅՏ, գ. massif.
ԼԵՌՆԱԿՈՒՏԱԿ, 1. ա. gigantic; 2. գ. massif.
ԼԵՌՆԱՀԱՆՔ, գ. mine, pit.
ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ, ա. ore; mining.
ԼԵՌՆԱՀԱՆՔԱՆՅՈՒԹ, գ. (rock) ore.
ԼԵՌՆԱՀԱՆՔՎԱՅՐ, **ԼԵՌՆԱՀԱՆՔԱՏԵՂ** } գ. *երկրբ.* (rock) deposit, ore-deposit, layer, vein.
ԼԵՌՆԱՅԻՆ, ա. mountain, mountainous.
ԼԵՌՆԱՆՎԱԾ, գ. mountain climber.
ԼԵՌՆԱՆՑՔ, գ. mountain pass.
ԼԵՌՆԱՆՈՒՆ, գ. mountain name.
ԼԵՌՆԱՇԱՐ(Ք), գ. mountain ridge/range.
ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, գ. mountainous land/country, highlands.

ԼԵՌՆԱՇԱՐԹԱ } գ. mountain range/chain.
ԼԵՌՆԱՊԱՐ }

ԼԵՌՆԱՊԱՐ, գ. rock.

ԼԵՌՆԱՓԱՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ա. mining.

ԼԵՌՆԱՓԱՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. mining industry.

ԼԵՌՆԱՓՐԿԱՐԱՐ, գ. mountain-rescuer.

ԼԵՌՆԱՅՆ, ա. mountainous; ◊ ~ **երկիր** mountainous country.

ԼԵՌՆՅԻ, *տես* ԼԵՌՆԱԲՆԱԿ:

ԼԵՌՆԱՒՍ, 1. գ. highlands; 2. ա. mountainous.

ԼԵՊ, ա. curdled; (արյան մասին) coagulated; (քանձր, մածուցիկ) thick. ◊ ~ **արյուն** blood clot.

ԼԵՊԱՀՈՑ, գ. liver ulcer.

ԼԵՊԱՀՈՍ, գ. liver disease, hepatitis.

ԼԵՊԱՀՏԱՎՈՐ, գ. 1. hepatitis patient, patient with liver disease; 2. ա. liverish.

